Ամմօ – հօրեղբայր, **բիժամա** – գիշերազգեստ, **եահո՛** – օ՛ֆ, ա՛յ մարդ, **զէվզէկ** – շատախօս, դատարկախօս, **թանթիկ** – հօրաքոյր, մօրաքոյր, **թրէն** – շոգեկառք, **իշտահ** – ախորժակ, **իշտէ** – ահա, ահաւասիկ, այսինքն, **լահանայ** – կաղամբ, **հէչ** – բնաւ, **մահանայ** – պատրուակ, **նէ** – եթէ (**ուզէ նէ** – եթէ ուզի), **նէնէ** – մեծ մայրիկ, **նօթ ընել**, **նօթի առնել** – նշում կատարել, **ուլան** – ծօ, **չաքէթ** – բաճկոն, **չոճուխ** – երեխայ, **պազար** – շուկայ, **պէ** – էհ, **պէլքի** – թերեւս, գուցէ, **պէպէք** – գրկի երեխայ, **պիլէ** – նոյնիսկ, անգամ, **պիրա** – գարեջուր, **սալաթ(ա)** – աղցան, **վալիզ** – ճամպրուկ, **տահա** – տակաւին, **տայտայ** – քեռի, **տէտէ** – մեծ հայրիկ, **փիլալ** – փլաւ, **փիս** – գէշ, վատ, աղտոտ, **քէփէզէ** – խայտառակ, **քրաւաթ** – փողկապ, **օթօ** – ինքնաշարժ, **զանճապիլ** – կոճապղպեղ, **պայդուշ** – բու, **նաֆաս** – շունչ, **մալեշ** – ոչինչ, **եա՛անի** – այսինքն, **վալլահ/բիլլահ** – Աստուած վկայ, **խալաս** – վերջ, **հախ** – վարձ, արժանիք, **հայդէ** – գնա՛ կորիր, դե՛հ, հեռացի՛ր, **չախմախ** – հրահան, կրակահան, **չամ** – նօճի ծառ (այստեղից՝ Չամ թաղ), **չանա** – (խօսքի բռնուելու իմաստով), **չինգանա** – բօշաների մի ցեղ, **չօրբա** – ապուր, **դազուխ** – ցից, **թաբաղ** – ափսէ, **թամամ** – ճիշտ, իսկապէս, **հաք** – դեղահատ, **եահուդի** – հրէայ, **փաչա** – խաշ, **քեսստանա** – շագանակ, **քեսրխանա** – գործարան, անառականոց, **քէֆ** – հաճոյք, խնճոյք, **օրթաղ** – ընկեր, **թէքնիք** – տեխնիկա, **պօշ** – փուշ, դատարկ, **փոլիս** – ոստիկան, **ախմախ** – յիմար, **դուքան** – խանութ, **զայթուն** – ձիթապտուղ, **խէր** – բարիք, **պատինճան** – սմբուկ, **սախաթ** – խեղանդամ, յաշմանդամ, **ֆինջան** – սուրճի գաւաթ, **ֆըլան** – այսինչ, **ֆըստըղ** – պիստակ, **թիւրշի** – թիւու, թիթուաշ, **դըլմա** – յոշուած, աղացած միս, **չիյ քէօֆթէ** – մսածաւար, **պիզելիա** – ոլոռն, **պիպեր** – կծու պղպեղ, **պուլդուր** – ձաւար, **զեմպերէք** – զսպանակ, **մաշա** – ամրակ, **մոզայիք** – խճանկար, **ռեժիմ** – սննդականոն (դիետա), **սարսուր** – բողոճ, **սապօթաժ** – խափանարարք, **սոֆա** – օթոց։

Սաղիմահայ գաղթօճախի լեզւում զանազանում են նաեւ բառային միջոցներ, որոնք զգալիօրէն տարբերում են Սփիւռքի այլ գաղթօճախներում գործածուող ձեւերից, թէեւ դրանց մի մասը հարազատ է նաեւ լիբանանեան եւ սիրիական համայնքին.

Ծամոն – ծամոց, **տուն տալ** – առիթ տալ, **եզական** – եզակի, **խոլերա** – քոլերա, **պոռչտուր** – բղաւոց, **հոսկէ-հոնկէ** – այստեղից-այնտեղից, **աժան** – էժան, **ակոշայ** –

ատամ, ահաւասիկ – ահա, աղէկ – լաւ, ընտիր, աղէկ-գէշ – լաւ-վատ, մի կերպ, աղուոր – գեղեցիկ, աղջիկութիւն – աղջիկ եղած ժամանակը՝ շրջանը, աղտոտ – կեղտոտ, աճապարել – շտապել, փութալ, աճապարանօր – աճապարանքով, ամալերջ – տարեվերջ, ամառնային – ամառային, աներ մայր – գոքանչ, անուշահոտ – օծանելիք, անուշնալ – քաղցրանալ, անցագիր – անձնագիր, անօթի – քաղցած, սոված, ապսպրանք – պատուէր, առաջուրնէ – նախապէս, սկըզբից, առժամեայ – ժամանակաւոր, առտու – առաւօտ, ասկէ – սրանից, ատակ – կարող, ընդունակ, ատեն-ատեն – երբեմն-երբեմն, ատենին/ատենօր – ժամանակին, արդեամբ – ծախսով, արեմուշ – աղջիկ սկառւտ, արժան – էժան, արկած – վթար, արձագանգ – արձագանք, արուեստական – արհեստական, առջի օր – երէկ չէ առաջին օրը, արտածել – արտահանել, արտօնել – թոյլատրել, բաթաթէս/գետնախնձոր – կարտոֆիլ, բանախօս – դասախօս, գայլիկ – պատանի սկառւտ, գանելիք – զգուելի, գէրնալ – գիրանալ, գիտնալիք – իմանալիք, գլխագիր – մեծատառ, գոլէճ – քուէջ, գործաւոր – աշխատատէր, գրոց-բրոց – գրել կարդալուն յատուկ, դա՛ – հեռու տարածութեան մասին խօսելիս (Դա՛ Ամերիկաները գացած էր), դարմանատուն – բուժարան, դգալ – գդալ, դեղահատ – դեղահաբ, դեղարան – դեղատուն, ելեկտրական – էլեկտրական, ելեմուտք – դրամական մուտք եւ ելք, ելեմուտքոյց – մուտքի եւ ելքի հաշուէցոյց, պիւտճէ, երկայն – երկար, երկնալ – պառկել, զարնել – հարուածել, ծեծել, զարնուած – ծեծուած, (խենթացած իմաստով), զորօրինակ – օրինակի համար, էրիկմարդ – հասուն աշր, ըլլալիք – լինելիք, ընկալեալ – ընդունուած, ըստ սովորութեան, ըսի-ըսաւ – բամբասանք, ժամարար – պատարագիչ քահանայ, ժամուց – պատարագիչ քահանային տրուող դրամական նուէր, իյնալ – ընկնել, իշտ – սաստելու բացականչութիւն, իրապաշտ – ռեալիստ, լեցուն – լիքը, լորճուկ – ողորմելի, լման – ամբողջ, լրիւ, լմնալ – վերջանալ, լմնցնել – վերջացնել, լոգարան – բաղնիք, լոգնալ – լողանալ, լուպիա – լոբի, խածնել – կծել, խենդենալիք բառը Սաղիմահայերը արտասանում են խենթանալիք՝ աննման, շտեսնուած իմաստով, խըմխըմ – ապուշ, յիմար, խնդիր – հարց, մտահոգութեան նիւթ, խնդուք – ծիծաղ, խոփ-խոշոր – շատ մեծ, խոշոր, խոֆած – ծեր, ծերացած, ծերութեան պատճառով ցնդած, խելքը թոցրած, կարգուիլ – ամուսնանալ, կերպաս – կտոր, գործուածք, ծափել – ծափալարել, կակաշ – կակաչ, կէտուակէս – կէսառկէս, կլլել – կուլ տալ, կռուագան – կռուարար, հագուածք – հագնելու ձեւ, հաճիս – խնդրեմ, խնդրում եմ իմաստներով, հեռաձայն – հեռախօս, հեռատեսիլ – հեռուստացոյց, հաւկիթ – ձու, յետայսու – սրանից յետոյ, հիմակուրնէ – այժմուանից, հիմակուհիմակ – առայժմ, հոգւոց – աղօթք ննջեցեալի հոգու համար, հոստեղ – այստեղ, հովահար – հովհար, հրամմէ՛ – հրաւերի, հիւրասիրելու արտայայտութիւն, ձուագեղ – ձուածեղ, ճանըմ – սիրելիս, հոգեակս, ճաշացուցակ – կերակրացանկ (մենյու), ճերմակեղէն – սպիտակեղէն, փոխ-նորդ, ճեփ-ճերմակ – ամբողջովին սպիտակ, մասնաւոր – դիտմամբ, միտումնաւոր, մա-րելիք – ուշաթափութեան հասցնող երեւոյթ, մելան – թանաք, մեծաբան – մեծախօս, պարծենկոտ, մեղրալուսին – մեղրամիս, մեղք – ափսոս, մեղքնալ – մեղքանալ, խղճալ, մէյ մը – մի անգամ, մէկ էլ, մէկէն – իսկոյն, միմակ – մենակ, առանձին, միմտեր – բարձ, մորթ – մաշկ, կաշի, մսաշօթ – լահմաճուն, մտատիպար – մտովի կերտուած կատարելութեան տիպար, յայտագիր – ծրագիր, յաչս – աչքում, աչքին, յառաջադէմ – աշխատասէր, յա-րանուանութիւն – նոյն կրօնի մէջ այս կամ այն դաւանանքին հետեւողների խումբ՝ համայնք (յոյն, կաթողիկ, ասորի, ղպտի, հապէշ), յարկաբաժին – բնակարան, նանէ – անանուխ, դաղձ, նետուելիք – ոչ պիտանի, դէն գցելու, ներկայանալի – արտաքինով դրական տպաւորութիւն գործող, ներփակ – մի բանի մէջ դրուած եւ փակուած, ճիշ – գնահատական, թուանշան, նորէն – կրկին, նորից, շալկել – շալկել, շահաւոր – շահ, տոկոս բերող, շատոնց – վաղուց, շարժապատկեր – շարժանկար, կինոնկար, շիտակը – ճիշտն ասած, շիփ-շիտակ – ճիփ-ճիշտ, շնորհակալիք – շնորհակալութիւն, շփացած – երես առած, ողնայար – ողնաշար, ովկիանոս – օվկիանոս, որդնուտիլ – որդնել, որով –

որովհետեւ, **ուսողութիւն** – մաթեմատիկա, **ուրկէ** – այնտեղից, **ո՛ր տեղից**, **չէ՛նէ** – եթէ ոչ, **այլապէս**, **չըսեմ** – զարմանք, հիացմունք արտայայտող բացականչութիւն, **պահուրտիլ** – թաքնուել, **պաղառութիւն** – մրսածութիւն, **պաղարիւն** – սառնարուն, **պանակէ** – եպիսկոպոսի կրծքազարդ՝ Աստուածածնի եւ Յիսուսի պատկերով, **պանան** – բանան, **պանդոկ** – հիւրանոց, **պաս-պարապ** – անգործ, պարապ-սարապ, **պատասխանատու** – իրաւասու պաշտօնեայ, **պարապ** – դատարկ, **պզտիկութիւն** – մանկութիւն, **պէտքարան/արտաքնոց** – զուգարան, **պնակ** – ափսէ, **պոմպայ** – ռումբ, **պուպրիկ** – տիկնիկ, **պտրիկ** – փոքրիկ, **պստիկ**, **պտըտցնել** – զբօսանքի տանել, **պտոյտ** – զբօսանք, **սանդուխ** – աստիճան, **սանտր** – սանր, **սապէս** – այսպէս, **այս ձեւով**, **սափրիչ** – տղամարդու վարսաւիր, **սեպել** – հաշուի առնել, համարել, **սերտողութիւն** – սովորելը, **սեփ-սեւ** – չափազանց սեւ, **սմանդուկ** – կեղծաւոր, **սուղոց** – թանկարժէք, **ստեպղին** – գազար, **վախնալիք** – վախենալու առիթ, **վախենալիք**, **վարոց** – էժանագին, ցածր կարգի, բարոյագուրկ, **վարտիք/շապկընկեր** – ներքնաշորի տեսակի անուանում, **վերաքաղ** – անցած դասերի կրկնութիւն, **վիճակացոյց** – աշակերտի առաջադիմութեան թերթիկ, **տակալին** – դեռ, **տանիկ** – առհասարակ՝ իսլամը դաւանող անձ կամ ժողովուրդ, **տարուէտարի** – տարեցտարի, **տեսուչ** – տնօրէն, **տեսչարան** – տեսուչի առանձնասենեակ, **տղեկ** – փոքրիկ տղայ, **տողանցել** – շարքով անցնել, **փակիլ** – կպչել, **քալել** – քայլել, **քալեցնել** – քայլեցնել, **քակել** – քանդել, արձակել, **քաղաքավար** – բարեկիրթ, **քանակ/գծաքաշ** – քանոն, **քաններ** – քաղցկեղ, **քեռայր** – քրոջ ամուսին, **քէօֆթէ** – քիւֆթա, **քիչիկ** – մի քիչ, **փոքր-ինչ**, **քնանալ** – քնել, **քովիկ** – մօտ, **կողքը**, **օղակայան** – օդանաւակայան, **օթոպիս** – աւտոբուս, **ֆուլ** – բակլա:

Հայերէնի երկու տարբերակներում էլ լայն կիրառութիւն ունեն նաեւ դարձուածքները: Գրական երկու լեզուներում էլ կան ինչպէս նոյնութիւններ, այնպէս էլ տարբերութիւններ՝ կապուած շրջապատող միջավայրի, ապրելակերպի, հոգեկերտուածքի, օտար լեզուների ազդեցութեան հետ: Մեր կողմից ներկայացուած դարձուածքները համեմատաբար լայն տարածում ունեն Սաղիմահայ գաղութում, որոնք խօսքը դարձնելով պատկերաւոր՝ ստեղծում են հաղորդակցման իրավիճակի, միջավայրի որոշակի երանգաւորում, դրանցում արատայայտում է այդ լեզուն կրող ժողովրդի պատմութիւնը, աշխարհընկալումը: Ներկայացուած ցանկում ուշադրութիւն ենք դարձրել առաւել գործածական տարբերակների վրայ եւ դասաւորել ենք այբբենական կարգով:

Աչք բանալ-գոցելու ժամանակ չունենալ – խիստ զբաղուած լինել:

Աչքդ չելլէ – Չկուրանաս:

Աչքը գոց – Միամիտ, ոչ ճարպիկ:

Աչքի զարնել – Աչքի ընկնել:

Աչքէ անցընել – Քննել, թեթեւակի նայել:

Աչքէ ելլել – Աչքից ընկնել:

Առաջքը առնել – Կանխել:

Արեւ առնել – Տաքանալ:

Արիւնը գլուխը զարնել – Սաստիկ զայրանալ:

Բերանդ թքնեմ – Մտերմական յանդիմանութիւն:

Բերանը արել – Հայհոյել:

Բերնի ծամոց – Բամբասանքի նիւթ:

Գաղափար մը առնել – Կարծիք կազմել:

Գէշ աչքով նայիլ – Վատ տրամադրուած լինել:

Գլուխ ելլել – Գլուխ հանել:

Գլուխը դառնալ – Գլուխը պտտուել:

Գլուխը քերելու ժամանակ չգտնել – Ժամանակ բոլորովին չունենալ:

Գոյնը նետել – Դունատուել:

Գործ մը վրայէն նետել – Մերժել, հրաժարուել:

Գոց ընել – Անգիր անել:

Գրաւի գալ – Դրազ գալ:

Գրպանս գրպանդ է – Նոյն գրպանից ենք ծախսում, մեր մէջ «իմ» ու «քո» չկայ:

Դանակ զարնես՝ արիւն չի գար – Անտրամադիր լինել:

Դասարան կրկնել – Դասարանում մնալ:

Դեղ առնել – Դեղ գործածել՝ խմել:

Դժուարին գալ – Ազդուել, նեղուել:

Դրամ շինել – Փող վաստակել:

Եղունգը միսէն չի զատուիր – Հարազատները իրարից չեն բաժանւում:

Երուսաղէմի օդին, Եաֆայի ծովուն եւ արաբի խօսքին մի հաւատար – Վստահութիւն չունենալ:

Երուսաղէմ Քրիստոսը խաչեր են – Երուսաղէմում Քրիստոսին են խաչել քո պէս հասարակ մարդուն չպիտի՞ դատապարտեն:

Երեսը շնորհք կայ – Պարկեշտ՝ շնորհալի է:

Երեսին ըսել – Առանց թաքցնելու, համարձակ խօսել:

Երթալ-գալ – Գնալ-գալ:

Երկու ոտքը մէկ հողաթափի մէջ դնել – Շտապեցնել, պարտադրել:

Էշին եղնիկ ըսես, կը դառնայ քեզի էշ կ'ըսէ – Անարժէք մարդուն պէտք չէ արժէք տալ:

Ժամադրութիւն առնել – Ժամադրուել:

Ժամանակ անցընել – Ժամանակ անցկացնել, զուարճանալ:

Ի պահանջել յարկին – Յարկ եղած դէպքում:

Ի յարգանս – Ի նշան յարգանքի:

Ինձի խօսք չ'իյնար – Ինձ խօսք չի հասնում:

Ինձմէ աւելի տաքատ մաշեր ես – Ինձնից աւելի փորձ ունես:

Ի՞նչ ջուրի վրայ ես – Ի՞նչ վիճակում ես:

Իրար բռնել – Իրար նեցուկ լինել՝ սատարել:

Իրարու ձգել – Դժտեցնել:

Լեզուի վրայ մազ բուսնել – Յոգնել նոյնը կրկնելուց:

Լոգանք առնել – Լողանալ:

Լուրջի առնել – Լրջօրէն ընդունել:

Խելքը գլուխը – Խելացի, խելքը գլխին:

Խելքին պառկելիք – Տրամաբանական:

Խնդիր հանել – Պրոբլեմ ստեղծել:

Խնդիր մի՛ ըներ – Մի՛ առարկիր:

Խնդիր չէ – Կարեւոր չէ:
 Խոնարհութիւն ընել – Յարգանքով գլուխը խոնարհել:
 Խօսք առնել – Ելոյթ ունենալ, խօսել:
 Խօսքին ետեւը կենալ – Խօսքը յարգել, խօսքի տէրը լինել:
 Ծախու առնել – Գնել:
 Ծեծ քաշել – Ծեծել:
 Կաղանդ պապա կամ Կաղանդ պապուկ – Ձմեռ պապ:
 Կատակը մէկդի – Կատակը մի կողմ:
 Կատակի զարնել – Կատակի տալ:
 Կարգ մը – Ինչ-որ, որոշ:
 Կարգի դնել – Կարգադրել, կարգաւորել:
 Կոնակ դարձնել – Խոյս տալ:
 Կոնակ կենալ – Օգնել, քաջալերել, թիկունք կանգնել:
 Կոնակը զօրաւոր է – Թիկունքը պաշտպանուած է:
 Կոնակէն խօսիլ – Ետեւից՝ հասցէին խօսել:
 Կօշիկէդ վեր մի՛ ելլեր – Չափդ իմացի՛ր:
 Հա՛ պատին խօսեր ես, հա՛ իրեն – Խօսքը տեղ չի հասնում:
 Համ առնել – Ախորժել:
 Հանգիստ ընել – Հանգստանալ, հանգչել:
 Հապը կլլել – Փորձանքի գալ, դժբախտութեան մատնուել:
 Հասակ նետել – Բոյ քաշել, բարձրահասակ դառնալ:
 Հակիրթի մէջ մազ փնտռել – Աւելորդ բծախնդրութիւն ցուցաբերել:
 Հոգ մի՛ ըներ – Մի՛ մտահոգուիր:
 Հոգ չէ – Ոչինչ, ինչիւր չէ:
 Հրաման առնել – Թոյլտուութիւն ստանալ:
 Ձեռք թօթուել – Ձեռք սեղմել:
 Ձեռք ձգել – Ճարել:
 Ձեռք վերցնել – Ձեռք բարձրացնել, քուէարկել:
 Ձեռքը գոց – Ժլատ, գծծի:
 Ձեռքը չըլլալ – Ուժերից վեր լինել:
 Ձեռքէն գալ – Կարողանալ:
 Ձեր գիտնալիք բանն է – Ձեր իմանալիք բանն է:
 Ճիտին պարտք – Նուիրական պարտականութիւն:
 Մայրը լացընել – Վատութիւն անել, սպանել:
 Մատի փաթթոց ընել – Մատի փաթաթան դարձնել:
 Մեղքը առնել – Յանիրաւի մեղադրել:
 Մենք մեզի – Մենք մերոնցով:
 Մէկ ծակէ շնել – Սրտակից՝ մտերիմ ընկեր:
 Մէկ հատիկ – Միակ:
 Մէկը բռնէ միւսին զարկ – Երկուսն էլ իրար արժեն, մէկը միւսից լաւը չէ:

Մէկուն խողովակով – Մէկի միջոցով՝ շնորհիւ:

Մէկուն խօսք զարնել – Ակնարկել:

Կուտը հոս ուտել հակիրթը ուրիշ տեղ ածել – Օգտուել այստեղից, օգուտը ուրիշին տալ:

Մէյ մըն ալ – Մէկ էլ:

Մէկդի դնել – Առանձնացնել: Մի կողմ դնել, յետաձգել:

Մէջը մարդ ունենալ – Ներկայացուցիչ ունենալ:

Մէջէն ելլել – Յաջողութեամբ լուծել մի դժուարին հարց, միջից դուրս գալ:

Մէջի մարդ ըլլալ – Ներքին հարցերին տեղեակ լինել:

Մէջտեղ ելլել – Երեւան գալ, յայտնուել:

Մէջտեղ իյնալ – Փողոցներն ընկնել:

Մէջտեղ հանել – Գաղտնիքը հրապարակել:

Մէջտեղ ձգել – Լքել, առանձին թողնել:

Մէջտեղէն ելլել – Տեղը զիջել, հեռանալ, անհետանալ:

Մի ոմն – Մէկը:

Միով բանիւ – Մի խօսքով:

Միտքէն անցնել – Որեւէ բան իրականացնելու մասին մտածել, կարծել:

Մութը կոխել – Մթնել, մութն ընկնել:

Մութը մարել – Դժբախտացնել, ցաւ պատճառել:

Մօրը նայէ աղջիկը առ – Նախ մօր նկարագիրը տես, յետոյ աղջկայ հետ ամուսնացիր:

Մտիկ ընել – Ականջ դնել, լսել:

Նեղը ձգել – Դժուարին վիճակի մէջ դնել:

Նոր ի նորոյ – Ամբողջովին նոր:

Շատ տարիներու – Բազում, շատ տարիներով (շատ են ասում յատկապէս տօների ժամանակ):

Շաքար չեմ որ հալիմ – Անձրեւից չեմ վախենում, թող թրջուեմ:

Շուկայ իջնել – Առեւտուր անելու գնալ:

Շունը յիշէ փայտը քաշէ – Երբ մէկի մասին խօսում են եւ յանկարծ յայտնւում է:

Ոգի ի բռն – Մահն աչքի առած, կեանքը վտանգելով:

Ոչ ես է – Չկայ, հանգուցեալ է:

Ոտքի տակի հողը չ'արժէ – Չափազանց անարժան լինել:

Որոշում առնել – Որոշում ընդունել, կայացնել:

Ուշ կամ կանուխ – Ուշ թէ շուտ:

Ուշ մնալ – Ուշանալ:

Ուշադրութիւն ընել – Ուշադրութիւն դարձնել:

Ուշքը վրան պահել – Աշալուրջ լինել, զգուշանալ:

Ուրկէ ուր – Որտեղից որտեղ:

Չափը անցընել – Սահմաններից դուրս գալ, չափը անցկացնել:

Չափը գիտնալ – Չափը իմանալ:

Չափէն առաւել – Պահանջուածից աւելի:

Պաղ ապուր – Անհամակրելի, սառնարիւն:
Պաղ առնել – Մրսել:
Պապա մարդ – Պատկառելի, յարգարժան մարդ:
Պարապ տեղը – Զուր:
Պարապ տակառ – Դատարկամիտ:
Պարապի գնաց – Փճացաւ, ձախողուեց:
Ջուր թափել – Վրան ջուր սրսկել, նաեւ միզել:
Սատանան ալ գլուխ չ'ելլեր – Ոչ ոք չի կարող բան հասկանալ:
Սեղան շտկել – Սեղան բացել:
Սիրտը առնել – Համոզել, ողորբել:
Սուտ խաբել – Ստել:
Վազ անցնիլ – Զեռք քաշել, հրաժարուել:
Վար առնել – Իջեցնել:
Վարձքդ կատար – Կատարած աշխատանքը թող գնահատելի լինի:
Վերէն վար լուալ – Խիստ քննադատել:
Վրան առնել – Իրեն վերագրել ասուածը:
Վրան սուղի նստիլ – Վրան թանկ նստել:
Վրաս գրէ – Անցած լինի, գրի՛ր սառույցին:
Վրայէն անցնիլ – Վերանայել, նորից կարդալ:
Տակէն ելլել – Տակից դուրս գալ:
Տեղւոյն վրայ – Անմիջապէս տեղում, տեղնուտեղը:
Յաւ ի սիրտ – Սրտի ցաւով, ցաւօք սրտի:
Փորը քշել – Փորհարինք՝ լուծ ունենալ, փորլուծութիւն:
Քաշուած միս – Աղացած միս:
Քեզի-ինծի չ'իյնար – Մեր գործը չէ:
Քեզի պէս խեղացիները պզտիկ գրպանէս կը հանեմ – Քեզ նմաններին բանի տեղ չեմ դնում:
Քիթդ-բերանդ մէկ կ'ընեմ – Կը ծեծեմ, կ'ապտակեմ:
Քիթին-բերնին ուտել – Ապտակ ստանալ:
Քիթէն-բերնէն գալ – Զղջալ գալու համար:
Քիչ ետք – Քիչ յետոյ, կարճ ժամանակ անց:
Քիչ մը – Մի քիչ, փոքր-ինչ:
Քով քովի – Իրար մօտ:
Օդ չկայ – Շնչել հնարաւոր չէ, օդը հեղձուցիչ է:
Օր մը չէ օր մը – Օրերից մի օր:
Օրերը քեզի կամ կեանքը քեզի – Հանգուցեալի չապրած օրերը հարազատներին մաղթել:¹⁶

Սաղիմահայ խօսակցական լեզուն բայի ներկայ ժամանակի վերջում երբեմն աւել-

¹⁶ Արեւմտահայերէն դարձուածքների օրինակները նշուած են Պ. Պետրեանի «Հայերէնի դարձուածքների ընդարձակ բացատրական բառարան»-ի եւ Ռ. Սաֆապետոյեանի «Արեւմտահայերէնի դասագիրք»-ի օրինակների հետ:

լացնում է՝ «կոր» մասնիկը՝ «Կու գամ կոր» ձևով, որ անմիջական ներկայ է առաջ բերում, այսինքն՝ «Ճիշդ հիմա գալիս եմ, գալու ընթացքի մէջ եմ»:

«Զարաբաստիկ» այդ «կոր»-ի մասին Իւրա Աւետիսեանը գրում է. «Արեւմտահայ խօսակցական լեզուում շարունակական ներկայի իմաստը արտայայտւում է նաեւ կոր մասնիկով կը խօսիմ կոր, կ'երթամ կոր եւ այլն: Այս մասնիկը բարբառի միջոցով հայերէնին է անցել թուրքերէնից եւ հանդիպում է մի քանի փոքրասիական բարբառներում՝ Սեբաստիա, Զմիւռնիա, Ռոդոսթօ եւ այլն: Կոր մասնիկի վերաբերեալ Յովհ. Գազան-ճեանը գրում է. «Կոր մասնիկը, որ սահմանական ներկայի եւ անկատար ձեւերուն յետադասուելով բուն ներկայ շինելու կը ծառայէ, օրինակ՝ կ'երթամ կոր, կը խօսէի կոր եւ այլն, եւ երբեմն առանց կը-ի, երբ որ բառը բաղաձայնով կը սկսի, ինչպէս՝ գրեմ կոր, կարդայի կոր եւ այլն: Այս կոր-ը փոխառութիւն է թուրքերէնէ, որուն ներկայակերտ յոր-ին հայացած ձեւն է. Օրինակ՝ կիտի յոր = կ'երթայ կոր եւ այլն: Կոր-ի գործածումը աւելի յատուկ է խօսուած լեզուին եւ քիչ անգամ կը կիրարկուի գրական լեզուի մէջ: Բայց պէտք չէ խուսափիլ գործածելէ երբ իմաստի պայծառութեան հարկը կը պահանջէ որ գործածուի: Արդի գրական արեւմտահայերէնի գրաւոր տարբերակում այդ մասնիկը չի գործածուում: Հանդիպող օրինակները ոճական կիրառութիւններ են եւ գերազանցապէս հերոսների խօսքում են. Օրինակ՝ «Ինտոր կ'ըլլայ, որ չես ճանչնար կոր պզտիկ», «Զեմ յիշեր կոր, Կոստան, մեղքքիր ինծի, ես իմ «Հայր մեր»-ս չեմ յիշեր կոր» (Շ. Շահնուր)¹⁷:

Կոր-ի մասին միանգամայն այլ տեսակէտ ունի Պ. Պէտիրեանը. «Այս մասնիկի գործածութիւնը կատարեալ «վարակ» է արեւմտահայ խօսակցական լեզուի մէջ, եւ հնուց է գալիս: Կոր-ին շատ ենք հանդիպում Յակոբ Պարոնեանի գրուածքներում, որը սիրում է իր հերոսներին խօսեցնել պոլսահայ խօսակցական լեզուով:

– Վազ անցայ, պապա՛մ, հոգիս ցաւեցաւ, երեսս կրակի պէս կ'այրի կոր: – Բարկացած կ'երեւաք կոր, ատոր համար չեմ ուզեր պատասխանել...: – Ինչպէ՞ս քեւեմ, ճանրմ, նասըրներս կը ցաւին կոր...:

Նոյնիսկ մանրավէպ է յօրինուել մի ուսուցչի մասին, որը սիրում էր կրկնել.

– Սա կոր-ը մի՛ գործածէք, կ'ըսեմ կոր...

Արդ՝ ո՞րն է սխալի բուն պատճառը: Ինչո՞ւ այդ «շարաբաստիկ» կոր-ը դեռ չի մոռացուել:

Անգլերէնը ներկայի (*Present Tense*) երկու ձեւեր ունի, որոնք իրենց իմաստով յըստակ տարբերում են. դրա համար էլ *I go* եւ *I am going* ձեւերը նոյնը չեն: Այսպէս չէ սակայն հայերէնում: Շատերին թւում է թէ բայի մօտ կոր դնելով շարունակականի (*continuous*) իմաստ են հաղորդում բայի ներկայի եւ անցեալ անկատարի (*Past continuous*) ձեւերին: Իբր թէ կ'երթամ-ը *I go*-ն է, իսկ կ'երթամ կոր-ը՝ *I am going*-ը: Յատկապէս նրանք, որ քիչ թէ շատ ծանօթ են արեւելահայերէնին, կարծում են թէ գնում եմ-ը ճիշդ *I am going*-ն է, ինչո՞ւ հապա արեւմտահայերէնում էլ կոր-ը չասուի:

Իրողութիւնն այն է, շարունակում է յարգարժան փրոֆեսորը, որ հայերէնը, արեւմտահայերէն թէ արեւելահայերէն, շարունակականի քերականական կարգի մասնաւոր կամ յատուկ ձեւ չունի: Նրա ներկան թէ *Present Tense*-ի, թէ *Present continuous*-ի իմաստները կարող է արտայայտել: «Տուն կ'երթամ ու քիչ մը կը հանգչիմ» նախադասութիւնը թարգմանում է՝ *I go home and rest a bit*, իսկ «Հիմա տուն կ'երթամ», «Ահաւասիկ կը հանգչիմ»՝ *I am going home now, I am (just) having a rest*:

¹⁷ Իւրա Աւետիսեան, Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի ֆերականութիւն, Երեւան 2007, էջ 173:

Յուսով եմ, նշմարելի է, որ երբ ուզում էք յատկապես շեշտել շարունակականութիւնը, դարձեալ **կոր-ի** կարիքը չունէք. ուրիշ միջոցներ կան՝ **ճիշդ հիմա** հոնկէ կու գամ: **Ահաւասիկ** կը գրեմ: Նամակս վերջացնելու **վրայ եմ**: Այդ ժամերուն **սովորաբար** տունը կ'ըլլամ:

Այնպէս որ,- ասում է փրոֆեսորը,- ես էլ, մանրավէպի մէջ յիշատակուած ուսուցչի նման, նոյն կոչը պիտի ուղղեմ ձեզ, միայն թէ առանց վերջին բառի՝

– Սա **կոր-ը** մի՛ ըսէք, կ'ըսեմ ձեզի¹⁸:

Սաղիմահայրթեան բանաւոր եւ գրաւոր խօսքում արեւմտահայերէնի **ե եւ ի լծոր-**դութեան պատկանող մի քանի բայեր յաճախ գործածուած են որպէս **ա լծորդութեան** բայեր՝

ելլել (ոչ թէ ելլալ) – կ'ելլեմ, կ'ելլենք, կ'ելլէի...

մտնել (ոչ թէ մտնալ) – կը մտնեմ, կը մտնէիք, պիտի մտնէի...

տեսնել (ոչ թէ տեսնալ) – կը տեսնեմ, կը տեսնէինք, պիտի տեսնէի...

իջնել (ոչ թէ իջնալ) – կ'իջնեմ, կ'իջնէինք, պիտի իջնէի...

երելի (ոչ թէ երեւալ, բայց երեւնալ) – կ'երելիմ, կ'երելէինք, պիտի երելէի, պիտի երելինք:

թուիլ (ոչ թէ թուալ) – կը թուիմ, կը թուինք, պիտի թուէի, պիտի թուի...

ժպտիլ (ոչ թէ ժպտալ) – կը ժպտիմ, կը ժպտէինք, պիտի ժպտէի, պիտի ժպտի¹⁹:

Ընդհանրապէս ներգոյական հոլովի իմաստն արտայայտուած է երեք եղանակով (սեռական հոլովով եւ մէջ կապով, հայցականի ձեւով, տրականով): Սաղիմահայրթի խօսքում ներգոյականի իմաստն արտայայտելու եւս մէկ եղանակ կայ՝ բացառական հոլովով եւ ներս կապով (Ժառանգաւորաց վարժարանէն ներս տեղի ունեցաւ ամսավերջեան հանդէս): Հետաքրքրական է, որ եթէ նախկինում (մօտ յիսուն տարի առաջ) իրար յաջորդող երկու սեռականների յօդ ստանալը սովորական էր (անցեալին մշուշին մէջէն), ապա ներկայումս առաջին սեռականի առանց յօդի կիրառութիւնն է աւելի սովորական (հայր սուրբի դէմքին վրայ): Սաղիմահայ խօսքում նկատելի է նաեւ հոլովական զուգաձեւութիւնների առատութիւնը (հոգիի – հոգւոյն, պատիւի – պատուի – պատուոյ, տարիի – տարւոյն – տարուան, շունի – շան, ծովի – ծովու, քաջութիւնով – քաջութեամբ, հօրմով – հայրով, սուգի – սգոյ, անունի – անուան եւ այլն):

Շօշափելի է նաեւ անգլերէնի թողած ազդեցութիւնը շեշտի եւ հնչերանգի վրայ: Շեշտի նախավերջին վանկ տեղափոխելը համապատասխան արտաբերական լարուածութեամբ եւ հնչիւնական թուլացմամբ անգլա-ամերիկեան ոլորտին բնորոշ առանձնայատկութիւն է, որ Սաղիմահայերը որդեգրել են՝ Սարգիսեան, Զամբաճեան, Մանուկեան, Զաքարեան: Արեւմտահայ գրական լեզուին ոչ բնորոշ նման շեշտադրութիւնը ունի ոչ թէ սոսկ սուբյեկտիվ երանգաւորում, այլ տուեալ լեզուաոլորտը բնութագրող յատկանիշի արժէք: Խօսելով անգլերէնի ազդեցութեան մասին պէտք է յիշենք նաեւ ժամանակակից գիտատեխնիկական իրադրութիւն արտացոլող օտարաբանութիւնները՝ **աքսիդան, թրաֆիկ, բարքինգ, օթո, սքէ, քնսըլ, օնլայն, թաբլեթ** եւ այլն:

Այստեղ մեզ մնում է անդրադառնալ նաեւ **իւ** գրութեան արտասանութեանը մի շարք դիրքերում:

¹⁸ **Պ. Պէտրեան**, Եկե՛ք ճիշդ խօսիմք ու գրեմք, Օժանդակ ձեռնարկ, Պոստոն, 1993, էջ 117-118:

¹⁹ Տե՛ս **Իւրա Աւետիսեան**, Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի ֆեռականութիւն, Երեւան 2007, էջ 126:

Ա. Այտընեանը արեւմտահայ աշխարհաբարի նախաբաղաձայնական դիրքի իւ կապակցութեանը իմ հնչիւնական արժէք է վերագրում. «Ի ձայնաւորը նախընթաց ինիով մը (իւ) իու կը հնչէ՝ քանի որ հետը բաղաձայն մ'ունի. այսպէս, **իւր, իւրաքանչիւր, ճիւղ, էութիւն, հարիւր, հիւսել**»²⁰; Ի հարկէ, արեւմտահայերէնի բազմաթիւ դասագրքերում **իւ (իու)** արտաբերութիւնը որպէս հաստատուն իրողութիւն է ներկայացուել (ինչպէս օրինակ՝ Աբրահամեան Ս., Բերդեան Բ., Քէօսեան Վ., Հայերէն լեզուի դասագիրք Երեւան, 1966, Դորա Սաքայեան, *Western Armenian for English-speaking World, Mountreal, 2000*, էջ 124), սակայն աւանդաբար այն շարունակուել է դիտուել որոշ վերապահութեամբ **ու**-ի տարբերակ կամ երկբարբառ²¹:

Մեր դիտարկումով նման մօտեցումը պայմանաւորուած է առանձին անհատների օտարախօս արտաբերութեամբ, չունի համակարգային բնոյթ եւ լինելով դիրքային ու փոփոխական, այնուամենայնիւ, չի դիտարկուում որպէս հնչոյթային հակադրութիւն, չունի ընդհանրական բնոյթ:

Փորձառական ուսումնասիրութիւնը (Սաղիմահայ լեզուակիրների արտասանական վերլուծութիւնը՝ որոնց զգալի մասը ներգաղթել են Լիբանանից եւ Սիրիայից) թոյլ է տալիս փաստել, որ յատկապէս նրանց խօսքում **իու** կապակցութիւնն ունի իր ֆիզիքական արտայայտութիւնը, որտեղ քմային յատկանիշը չի տարածուում ձայնաւորի ողջ սպեկտրի վրայ, այլ ունի իր ինքնուրոյն պատկերը:

Յայտնի է, որ գրական արեւմտահայերէնում օտար բառերի քմային «**յ**» եւ «**ծ**» ձայնաւորները տառադարձուում են **իւ**-ի եւ **էօ**-ի միջոցով²²: Ա. Այտընեանը այդ մասին գրում է. «Ասկէ զատ՝ նոր յարմարագրութիւնն օտար բառերու ճշգրտոյն հնչմանը համար ընդունուած է **էօ** եւ **իւ** երկբարբառները, որ հայերէնէ օտար ձայներ են»²³: Արդ, քանի որ Ա. Այտընեանը քմային «**յ**» եւ «**ծ**» ձայնաւորները հայերէնին խորթ է համարում, ապա դրանից թերեւս կարելի է հետեւեցնել, որ հին հայերէնից ժառանգուած բառերի **իւ** կապակցութիւնն այդ ժամանակ (19-րդ դ. 50-60-ական թթ.) դեռեւս քմային «**յ**» ձայնաւորի արտասանութիւն չի ունեցել, այսինքն՝ **իու** բարձրացող երկբարբառ > **յ** քմային ձայնաւոր հնչիւնափոխութիւնն աւելի ուշ է տեղի ունեցել²⁴:

Այս ամէնի հետեւանքով արեւմտահայերէնը այսօր փոխառեալ բառերի ու յատուկ անունների գրութեան հարցում կանգնում է երկընտրանքի առջեւ. ինչի՞ն տալ առաջնութիւնը՝ գրութեանը, թէ՞ արտասանութեանը: Արտասանութեանը առաւելութիւն տալու դէպքում խախտում է գրութիւնը, աղճատում է բառապատկերը, իսկ հակառակ դէպքում տուժում է արտասանութիւնը:

Սաղիմահայ գաղութի լեզուական արտասանուածքի, խօսուածքի ձեւաւորման վրայ իրենց ազդեցութիւնն են թողել արտաքին գործօնները այդ թւում արաբական միջավայրը, որի արդիւնքում այսօր **իւ** երկբարբառը արտասանուում է քմային «**յ**»:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Երուսաղէմի հայութեան խօսուածքը էապէս չի տարբերուում լիբանանեանից ու սիրականից, քանի որ բնակչութեան զգալի մասը այդ

²⁰ Ա. Այտընեան, Քննական ֆերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Մաս (2-րդ)՝ Քերականութիւն արդի հայերէն լեզուի, Երեւան, 1987, էջ 371:

²¹ Ռ. Սաքայեան, Արեւմտահայերէնի դասագիրք, Երեւան, 2006, էջ 14:

²² Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քէօսեան, Հայերէն լեզուի դասագիրք, Երեւան, 1966, էջ 42:

²³ Ա. Այտընեան, Քննական ֆերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Մաս (2-րդ)՝ Քերականութիւն արդի հայերէն լեզուի, Երեւան, 1987, էջ 346:

²⁴ Ս. Անտիսեան, Գրական արեւմտահայերէնում հին հայերէնի իւ երկբարբառի արտացոլման հարցի շուրջ, Տէս Հայերէնագիտական միջազգային տասներորդ գիտաժողով, Զեկոյցների ժողովածոյ, Երեւան, 2015, էջ 24:

երկրներից եկածներ են: Խօսակցական լեզուում կան շատ փոխառություններ ինչպես ուղղակիօրէն թուրքերէնից, արաբերէնից, եբրայերէնից, այնպէս էլ միջնորդաբար այլ լեզուներից անցած: Շօշափելի է նաեւ անգլերէնի ազդեցութիւնը շեշտի եւ հնչերանգի վրայ (շեշտի նախավերջին վանկ տեղափոխելը): Խօսակցական լեզուում բայի ներկայ ժամանակի վերջում շատ յաճախ աւելացնում են «կոր» մասնիկը, իսկ իւր երկբարբառը արաբական միջավայրի ազդեցութեան արդիւնքում արտասանում են քմային «Ա»:

Այս տեսակ ուսումնասիրությունները զուտ լեզուաբանական հետաքրքրութիւն ներկայացնելուց բացի կարող են վեր հանել նաեւ արեւմտահայերէնի զարգացման միտումները տարբեր միջավայրերում, նախանշել գրական արեւմտահայերէնի կանոնարկման հնարաւորություններն ու եղանակները, արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի՝ իբրեւ մէկ լեզուական ամբողջութեան միասնական զարգացման ուղիներն ու հեռանկարները:

Գրականութեան ցանկ

1. **Իւրա Անտիսեան**, Արեւելահայերէնի եւ Արեւմտահայերէնի զուգադրական քերականութիւն, Երեւան, 2007:
2. **Իւրա Անտիսեան**, Տեղաշարժեր արդի գրական հայերէնում, Երեւան, 2011:
3. **Իւրա Անտիսեան**, Լեզուական նորմ, նորմաւորման շափանիշները, Բանբեր Երեւանի Համալսարանի, Հայագիտութիւն, 2014, № 2:
4. **Յ. Կաթ. Դրասխանակերտցի**, Հայոց Պատմութիւն, Աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Գ. Բ. Թօսունեանի, Երեւան, 1996:
5. **Մ. Եսս. Աղաւունի**, Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ Սուրբ Երկրին մէջ, Երուսաղէմ, 1931:
6. **Կ. Վրդ. Բաղդասարեան**, Երուսաղէմի Հայկական թաղամասի գաղտնիքները, Մաս Ա., Երեւան, 2019:
7. **Անաստաս Վրդ. Յերայոսեցի**, Վասն վանօրէից, որ ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ, Առաջաբանը եւ քննական բնագիրը Պ. Զօպանեանի, «Մատենագիրք հայոց», հ. Ե., է. դար, Անթիլիաս, 2005:
8. **Սիմէոն Դպիր Լեհացոյ** Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք: Ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս Վ. Ակիմեան, Վիեննա, 1936:
9. **Պ. Պէտիրեան**, Եկէք ճիշդ խօսինք ու գրենք, Օժանդակ ձեռնարկ, Պոստոն, 1993:
10. **Ա. Այտընեան**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Մաս (2-րդ)՝ Քերականութիւն արդի հայերէն լեզուի, Երեւան, 1987:
11. **Ռ. Սաքապետոյեան**, Արեւմտահայերէնի դասագիրք, Երեւան, 2006:
12. **Ռ. Սաքապետոյեան**, Լեզուական նորմը եւ լեզուի ներքին տեղաշարժերը, Հայերէնագիտութեան հիմնահարցեր եւ զարգացման հեռանկարներ, Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածոյ, Երեւան, 2015, էջ 212:
13. **Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քէօսեան**, Հայերէն լեզուի դասագիրք, Երեւան, 1966:
14. **Վ. Աճեմեան**, Գրական արեւմտահայերէնի ձեւաւորումը, Երեւան, 1971:
15. **Տ. Շահրազեան**, Արեւմտահայ աշխարհաբարի առաջացումը, Երեւան, 1963:

16. **Գ. Սեւակ**, Ժամանակակից հայոց լեզուի դասընթաց, Երեւան, 1955:
17. **Տ. Ա. Յովհաննէսեանց**, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հատոր Ա եւ Բ, Երուսաղէմ, 1890:
18. **Տ. Սաւաքանեանց**, Պատմութիւն Երուսաղէմի, հատոր 1-2, Երուսաղէմ, 1931:
19. **Հ. Մամուրի**, Հայերը Երուսաղէմի մէջ ամենահին ժամանակներից մինչեւ մեր օրերը [Ա.տ.], 1963:
20. **Գ. Զահուկեան**, Հայոց լեզուի զարգացումը եւ կառուցուածքը, Երեւան, 1969:
21. **Հ. Աճառեան**, Էմինեան Ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911:
22. **Հ. Աճառեան**, Հայոց լեզուի պատմութիւն, Մաս II, Երեւան, 1951:
23. **Հ. Աճառեան**, Լիակատար քերականութիւն հայոց լեզուի, Երեւան, 1955:
24. **Մ. Աբեղեան**, Հայոց լեզուի տեսութիւն, Երեւան, 1965:
25. **Անդրանիկ Վրդ. Կռանեան**, Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրութ, 1998:
26. **Պ. Պէտրեան**, Հայերէնի դարձուածքների ընդարձակ բացատրական բառարան, ԵՊՀ, Երեւան, 2011:
27. **Մ. Յարութիւնեանց**, Բացատրական բառգիրք - Օտարազգի բառերի եւ օտարագիր բառերի ու դարձուածքների, Ալեքսանդրապոլ, 1912:
28. **Արեւմտահայերէնի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում**, Երեւան, 2012:
29. **Պ. Զօպանեան**, Անաստաս Վարդապետի կազմած Երուսաղէմի հայկական վանքերի ցուցակի ժամանակի հարցի շուրջ, Պատմա-բանասիրական հանդէս, 2001, № 1:
30. **Ս. Աւետիսեան**, Գրական արեւմտահայերէնում հին հայերէնի իւ երկբարբառի արտացոլման հարցի շուրջ, Հայերէնագիտական միջազգային տասներորդ գիտաժողով, Զեկոյցների ժողովածոյ, Երեւան, 2015:

Համացանցային ռեսուրսներ

1. Վիքիպեդիա ազատ հանրագիտարան - https://hy.wikipedia.org/wiki/Հայերը_Իսրայելում:
2. Այո՞ո՞ո՞ Հայ ես... Բայց Օտաաա՛ր ես... - <https://www.youtube.com/watch?v=miScOi3b2vo>:
3. Քաղաքացիները. Ծանօթանանք Հայ Երուսաղէմին - 7 - https://youtu.be/iaBMk1RTS_w:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ**ԼԱՌԻՐԱ ՄՈՒՐԱՏԵԱՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏՈՒՄՆԵՐ
ԺԱՄԱՆԱԿԻ ՄԷՋ, ԵՐԵՒԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱՏ, 2021, ԷՋ 528**

Գրականագիտական հետազոտությունները հայ նոր գրականության տարբեր շրջաններին նուիրուած մեծ ու առանցքային նշանակութիւն ունեն, որովհետեւ, այսպէս ասած, ժամանակի գրական հերոսին ձեւաւորում են գրողն ու գրականագէտը: Սրան զուգահեռ, պէտք է նշենք, որ գիտական լուրջ եւ խորը ուսումնասիրություններն ունեն հարցադրումների շրջանակը ընդլայնելու կարողութիւն, գրական բովանդակային խնդիրներին անդրադառնալու առանձնայատկութիւն, կառուցուածքային խնդիրների համակարգման ուսումնասիրմանն ուղղուած նպատակամիտում:

Գրականագիտական նիւթի փաստատեսական առատութեամբ է բնորոշում գրականագէտ, բանասիրական գիտությունների դոկտոր, փրոֆեսոր Լաուրա Մուրատեանի «Գրականագիտական դիտումներ ժամանակի մէջ» ուսումնասիրությունների եւ յօդուածների ժողովածուն: Գիրքն ինքնատիպ գրականագիտական շտեմարան է, որում տեղ գտած ուսումնասիրությունները մասնագիտական որակների բարձրացման առումով կարող են մեծ ներգործութիւն ունենալ գրականութիւն ուսումնասիրողների եւ ընդհանրապէս ընթերցողների համար: Պատահական չէ, որ Լաուրա Մուրատեան անհատն ու գրականագէտը գիտական սոյն ուսումնասիրություններում հանդէս են գալիս մեկ ամբողջութեամբ, որովհետեւ գրականագիտութիւնը պահանջում է փրոֆեսիոնալ աշխատանք՝ նուիրուած մարդու կողմից:

Գրական գործընթացները ժամանակագրական առումով համակարգած ու ներկայացրած գրականագէտն իր ուսումնասիրուող տեսադաշտն է ներկայացնում՝ հիմնովին քննելով գրական գործերը, դրանց մէջ առկայ լիցքերն ու դրուագները, կառուցուածքաբովանդակային պատկերները:

Վրթանէս Փափազեան, Արփիար Արփիարեան, Ռափայէլ Պատկանեան, Արտաշէս Յարութիւնեան, Արսէն Տէրտէրեան, Սրբուհի Տիւսաբ, այս եւ այլ հեղինակների ստեղծագործությունների ուսումնասիրություններն է Լաուրա Մուրատեանը ներկայացրել: Հեղինակներ, որոնց գրական գործերը յաճախ գրքասէրների ընթերցացանկից դուրս են մնում, եւ դրանց իսկական արժէքն ու հիմնաւորուած գնահատականը բացայայտում են այս հատընտիրում:

Գրքի խմբագիրը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, փրոֆեսոր Ազատ Եղիազարեանը, գրում է. «Ծաւալուն ուսումնասիրութիւն է՝ նուիրուած Վրթանէս Փափազեանի կեանքին ու ստեղծագործութեանը՝ գրողի, որը վերջին տասնամեակներում դուրս է մնացել հայ գրականագէտների հետաքրքրություններից»¹: Այս տողերից պէտք է հասկանալ, որ Լաուրա Մուրատեանն ուսումնասիրութեան նիւթ է դարձրել այն մոռացուող գրական անձանց ու նրանց ստեղծած գրական աշխատանքները, որոնք, գնալով, մոռանում են եւ հասարակութեան լայն շրջանակները, եւ մասնագիտական

¹ Լ. Մուրատեան, Գրականագիտական դիտումներ ժամանակի մէջ, Երեւան, 2021, էջ 45:

շրջանակը:

Իսկ ըստ Հաուրա Մուրատեանի, գրականագիտական նման լայնամասշտապ ուսումնասիրությունների «Միտումը մէկն է՝ գրապատման ընթացքի հոլովոյթում բացայայտել ազգային գեղարվեստական մտածողութեան զարգացման ստեղծագործական ինքնատիպ դրսևորումները, որոնց լուսաբանումը կարեւորում է նաեւ արդի գրականագիտութեան յարաշարժ համապատկերում»²:

Գրքի առաջին բաժնում ներկայացուած են ուսումնասիրություններ: Գրականագէտը ծաւալուն ուսումնասիրութիւն եւ անդրադարձ է կատարել արձակագիր, քննադատ, թարգմանիչ, գրականութեան պատմաբան, հրապարակագիր, ազգագրագէտ Վրթանէս Փափազեանի ծաւալած գրական գործունէութեանը՝ առանցքային շեշտադրումներով եւ պատմագրական ոճով:

Վրթանէս Փափազեանին նուիրուած ինքնատիպ ուսումնասիրութեան մէջ նորից ենք համոզուում, որ մարդկային ուժը գէնք է, որովհետեւ, ինչպէս գրականագէտն է հաղորդում՝ Վրթանէս Փափազեանը տառապալի կեանք է ապրել եւ մինչեւ վերջին օրերն արհամարհել է բարոյաֆիզիքական բազում զրկանքներ, ապրել է իր ժողովրդի, գրական-մշակութային հոգսերով:

Ուսումնասիրութեան մէջ ծաւալուն անդրադարձ է կատարում Փափազեանի ստեղծագործութեանն ու գրական լեզուին: Այստեղ կարելի է առանձնացնել մի կարեւոր հատուած, որը գրականագէտը լաւագոյնս ներկայացրել է՝ թատերագիտութիւնը որպէս Փափազեանի ստեղծագործական հետաքրքրութիւնների իրացում:

«Արդի թատրոնի ուղիների մասին գրողի պատկերացումները ելնում էին ազգային իրականութեան խնդիրներից՝ որպէս օրինակելի նմոյշներ ունենալով եւրոպական եւ ռուսական թատրոնի ձեռքբերումները»³, - գրում է Լ. Մուրատեանը:

Գրող, հրապարակախօս, գրականութեան պատմաբան եւ քննադատ Արփիար Արփիարեանի կենսագրութիւնն ու ստեղծագործութիւնը հանգամանօրէն է ներկայացուած ուսումնասիրութեան մէջ, որը, կարելի է ասել գրականութեան պատմութիւն է, գրականութիւն ստեղծողի ու մշակողի աներեր կերպար: Սոյն ուսումնասիրութիւնը փաստաշատ է, իր մէջ կարեւոր ճանաչողափմացական շերտեր է պարունակում:

«Հանդէս գալով իր տառապած ժողովրդի անունից՝ հրապարակախօսը բազմիցս ընդգծում է այն միտքը, որ հայութիւնը քաղաքակիրթ աշխարհից գուրթ եւ խղճահարութիւն չի հայցում, այլ իր արժանապատիւ գոյութեան պայքարում սպասում է այն աջակցութեանը, որ պէտք է մեկընդմիշտ հաստատի նրա իրաւունքները»⁴, - կարդում ենք ուսումնասիրութեան մէջ:

Գրականագէտը բազմաթիւ եզրերով քննել է Արփիարեանի գրական, քննադատական, հրապարակախօսական գործունէութիւնը: 80-ականների գրական շարժմանն անդրադառնալով՝ Լ. Մուրատեանը նշում է, որ Արփիարեանի աւանդը նշանակալից էր եւ՛ ռեալիզմի տեսութեան, եւ՛ գեղարվեստական մարմնաւորման գործում:

Ուսումնասիրութեան մէջ Արփիարեանը դիտարկում է նաեւ որպէս քննադատ՝ իր մօտեցումներով եւ դիրքով: Նրա դիտարկումները, գրականագէտի համոզմամբ, գալիս

² Նոյն տեղում, էջ 5:

³ Նոյն տեղում, էջ 45:

⁴ Նոյն տեղում, էջ 97:

են լրացնելու ռեալիզմի գեղագիտության առանձնապատկությունների ամբողջական նկարագիրը:

«Հայ ժողովրդի երկու հատուկություններին փոխադարձ ճանաչման մղող հետեւողական գործիչը գրական-մշակութային կապերի ամրապնդմամբ ձգտում էր ազգային համերաշխության ոգու ձեւաւորման, առանց որի անհնարին էր սոցիալական ու քաղաքական որոշակի նպատակադրման ծրագրերի իրականացումը: Ահա թէ ինչու Արփիարեանի քննադատական գործունեության այս կարեւոր ոլորտը յատկանշում է գաղափարախօսական ուղենշային բովանդակութեամբ, որի առանցքային իմաստն ուղղում էր հայ ժողովրդի միասնության հեռանկարային իտէալի կենսագործմանը»⁵, գրում է Լ. Մուրատեանը՝ աւելացնելով, որ համազգային գրականության ծրագրային առաջադրույթներն այնպիսի լայն գործառութեամբ ու հետեւողական շահախնդրութեամբ ոչ ոք չի իրականացրել, ինչպէս Արփիար Արփիարեանը:

Արդէն խօսելով հայ առաջին վիպագրուհու՝ Սրբուհի Տիւսաբի մասին, գրականագէտը նշում է, որ հեղինակի գրական առաջին նախափորձերը եղել են բանասեղծութիւններ՝ Ուսուցչի՝ Պէշիկթաշլեանի աներկբայ ազդեցութեան նշաններով: Ուսումնասիրութեան մէջ վերլուծում ու քննարկում է Տիւսաբի գրական հերոսը, ժամանակաշրջանը, խոհական շարժառիթներն ու գրական առնչութիւնները ստեղծագործական ընդհանուր համապատկերում: Գրականութեամբ հարուստ կենսագրութիւնը՝ կեանքի բազմադէմ տիրույթներում հետաքրքիր տեսանկիւնից է ներկայացուած, առաւել եւս, երբ շեշտադրում է պատումի եւ գաղափարների նոր շերտերի բացայայտմամբ հեղինակի վեպերը ներկայացնում են ժանրի զարգացման էական յատկանիշները:

«Վիպական կառոյցում ներդաշնակօրէն տեղադրուել են ազգային իրականութեան եւ հասարակահայեցութեան այնպիսի աննախագէյա դրսեւորումներ, ինչպիսիք են՝ քաղաքային կենցաղը, նոր սերնդի ներկայացուցիչ կերպարները, խոհական լիցքը՝ կնոջ իրաւահաւասարութեան եւ ազատութեան շեշտուած բովանդակութեամբ, զգացմունքների եւ բանականութեան բախումը, սիրոյ եւ պարտականութեան բարոյական ըմբռնումները, որ գալիս էին ներկայացնելու մարդ-անհատին իր բարդ եւ ոչ միանշանակ երեւոյթով: Սրանով էլ պայմանաւորուած է Տիւսաբի վէպերի գրական արժէքը հայ վիպագրութեան պատմութեան ուղեծրում»⁶, այսպէս է գրականագէտն ամփոփում ուսումնասիրութիւնը՝ յենուելով հեղինակի բերած գրական կերպարների ու թեմաների ամբողջականութեան վրայ:

Հայոց նոր գրականութեան նշանաւոր գրողներից Ռափայէլ Պատկանեանին նուիրւած ուսումնասիրութեան մէջ Լ. Մուրատեանը նշում է, որ «Պատկանեանի արձակի վիպագրական մասը նոր երեւոյթ էր հայ վէպի պատմութեան մէջ, որտեղ յատկանշում էր ժանրի զարգացման նոր որակը»⁷: Ուսումնասիրութեան մէջ առանձնացուած են Պատկանեանի ստեղծագործութիւնների նպատակները, որոնք էլ առանցք են դարձել կարեւոր եզրայնագումների ու առարկայական կողմի բացայայտման: Գրականագէտը նշում է, որ Պատկանեանն իր վէպերում կիրառում է նկարագրական, եւ ինքնապատումի, եւ ականատեսի պատմութեան արտայայտչամիջոցները: «Իւրաքանչիւր դէպքում գրողը ձգտում է իրական համոզութեան, հաւաստի կեանքի ցուցադրման, որտեղ հաս-

⁵ Նոյն տեղում, էջ 157:

⁶ Նոյն տեղում, էջ 186:

⁷ Նոյն տեղում, էջ 187:

տատուելու էին նրա գաղափարական իտեալն ու բարոյախօսությունը»⁸:

Այստեղ խորը ուսումնասիրման են ենթարկուած Պատկանեանի՝ մեզ յայտնի եւ նաեւ ստուերում մնացած գրական գործեր, որոնք մէկ գծի վրայ են պահում աշխարհի ու կեանքի երեւոյթները, մտածողութեան տարատեսակ առանցքային դրոյթներ են պարունակում: Գրականագէտը Ռափայէլ Պատկանեանին դիտել է մտածողական բարդոյթների ողջ խորութեան մէջ:

Լ. Մուրատեանը ներկայացրել է նաեւ գրող ու քննադատ Արտաշէս Յարութիւնեանի կեանքն ու գործունէութիւնը գրական շառաւիղներում: Խօսելով գրականութեան պահանջի մասին, հեղինակը նշում է. «Ազգային բնաւորութեան ինքնատիպ դրոշմը կրող գրականութեան պահանջը Յարութիւնեանի մտահայեցութեամբ ձեռք է բերում նոր իմաստ ու բովանդակութիւն»⁹:

Գրականագէտը ծաւալուն անդրադարձ է կատարել Յարութիւնեանի քննադատական մտածողութեանն ու յստակ, փաստարկուած օրինակներով հարստացրել ուսումնասիրութիւնը՝ այն դարձնելով արժէքաւոր եւ օգտակար՝ որպէս գրական-քննադատական անցուդարձերի յարութիւնեանական ինքնատիպ ամբողջացում:

Ինչպէս Լ. Մուրատեանն է նշում՝ Արտաշէս Յարութիւնեանի քննադատական ժառանգութեան մէջ բացառիկ տեղ են գրաւում գրական դիմանկարները, որոնք գերազանցապէս նուիրուած են ժամանակի գրական շարժման ականաւոր դէմքերին: Գրականագիտութեան մէջ նաեւ կարեւոր ներդրում է Լաւրա Մուրատեանի ուսումնասիրման նիւթ դարձած 20-րդ դարասկզբի հայ քննադատ եւ գրականագէտ Արսէն Տէրտէրեանի անցած ուղին ու կատարած աշխատանքը: Նշում են Արսէն Տէրտէրեանի հայ դասականներին նուիրուած բազմաթիւ ուսումնասիրութիւնները, որոնք պարբերաբար տպագրուել են մամուլում: Շատ կարեւոր շեշտադրում է անում գրականագէտը, գրելով, որ Տէրտէրեանը հակադրում էր քննադատութեան աւանդական ուղղութիւններին եւ առաջադրում էր գրական երկի գնահատութեան նոր չափանիշներ եւ վերլուծութեան նոր եղանակներ:

«Գեղարուեստական քննադատութեան սկզբունքները լոկ ձեւի որոնումներ չէին Տէրտէրեանի համար: Նրա մօտեցմանը բնորոշ էր հոգեբանական քննութիւնը, որը գրական երկի «ներքին բովանդակութեան» մեկնութեան ընթացքում էական դեր է յատկացնում գեղարուեստական ձեւի հոգեբանութեանը, իսկ սա էլ իր հերթին՝ «գրականութեան փիլիսոփայութեան» ըմբռնմանը»¹⁰, - նշում է Լ. Մուրատեանը:

Փաստերով յագեցած է «Հայ քննադատական միտքը պարբերական մամուլի էջերում» (1794-1920 թթ.) ուսումնասիրութիւնը, որտեղ գրականագէտն ի ցոյց է դրել այն կարեւոր նիւթերը, որոնք գրականագիտութեան զարգացման համար առանցքային նշանակութիւն ունեն:

Կարեւորելով մատենագիտական հրատարակութիւնների երեւոյթը՝ Լ. Մուրատեանն առանձին անդրադարձ է կատարել այն պարբերականներին, որոնք կարողացել են կարճ ժամանակահատուածում շօշափելի շրջանակին գրաւել եւ իրենց շուրջը հաւաքել: Եւ ինչպէս նշում է գրքում՝ հէնց նոր պարբերականների հրատարակութիւնը նպաստեց, որ գրաքննադատութիւնը յատկանշուի իր տարբեր ուղղութիւններով, գրա-

⁸ Նոյն տեղում, էջ 189:

⁹ Նոյն տեղում, էջ 220:

¹⁰ Նոյն տեղում, էջ 187:

կան քաղաքականության որոշակի անդրադարձներով:

Իսկ արդեն «Մուրճ» ամսագրի քննադատության մասին գրականագետն առանձին ուսումնասիրություն է նուիրել՝ նշելով էական առանձնայատկությունները: «Գրական փոխազդեցության մէջ որոնելով ինքնուրոյն ազգային գրականության զարգացման ուղիներից մէկը՝ «Մուրճի» քննադատներն առանձնայատուկ հետաքրքրություն են ցուցաբերում դէպի թարգմանությունն ու նրա տեսութեան հարցերը: Առաջնահերթ խնդիր է դիտում ոչ միայն թարգմանուող գրքերի ընտրությունը, այլեւ թարգմանության որակի հարցը»¹¹, ընդգծում է ուսումնասիրողը:

Այս ուսումնասիրության միջոցով հաղորդակից ենք լինում երկարամեայ «Մուրճ» ամսագրի քննադատական գործունէութեանը, տեսնում այն կէտերը, որոնց կարեւորություն է տուել ժամանակի գեղագիտական միտքը:

«Ռուս գրականության հարցերը «Մշակում» յօդուածում Լ. Մուրատեանը ընդգծում է, որ այն բացառիկ տեղ է գրաւում անցեալ դարի վերջին քառորդի հայ հասարակական մտքի պատմութեան մէջ:

«Մշակի» խմբագիրն արուեստի ու գրականության հարցերում որոշակիօրէն ելնում էր օգտապաշտութեան սկզբունքից: Այս չափանիշով էր նա լուծում գրականության հասարակական դերի, գրականության ու կեանքի փոխյարաբերութեան խնդիրները»¹², նոյն յօդուածում գրում է Լ. Մուրատեանը:

Ինչպէս «Մուրճ» ամսագրի ուսումնասիրության մէջ, այնպէս էլ «Մշակի», գրական պատմություն կայ՝ սկզբի, ընթացքի ու շարունակութեան, որոնք էլ ժամանակի գաղափարական որակներն են ձեւաւորում՝ համընթաց շարժուելով զարգացող, բայց իր դիրքը պահպանող այս ոլորտի բազմապիսի խնդիրներին:

Գիտական չափանիշներն այնքան հաստատուն են պահուած Լ. Մուրատեանի յօդուածներում, որ բացայայտում է այն գրականագիտական խտացուած խորությունը, որը կարեւոր ընդգծումներով ներկայացնում է ե՛ւ գրողին, ե՛ւ ստեղծագործությունը:

Ընթերցողների հետաքրքրությունը կը բազմապատկի նաեւ «Վիկտորիա Ռոու. հայ կին գրողների պատմությունը» ուսումնասիրությունը, «Հայկական կինոմտքի դիմապատկերը մէկ գրքում» յօդուածը, Տիրան Չրաքեանի կեանքի եւ գործի մասին, ինչպէս նաեւ Յովհ. Թումանեանի կեանքի ու գործունէութեան մասին գրախօսությունները: Մեծարժէք ուսումնասիրություն է նաեւ «Հայ գրականությունը եւ համաշխարհային գրականության զուգահեռները»: Սակայն այսքանով չի սահմանափակւում մեծանուն գրականագետի ուսումնասիրությունների ու յօդուածների շղթան: «Գրականագիտական դիտումներ ժամանակի մէջ» հատընտիրը մեծարժէք է, հսկայածաւալ աշխատանքի արդիւնք: Այն մեր գրականագիտութեան փայլուն էջերից մէկն է:

Հաւուրա Մուրատեան գրականագետի մանրագիտակն ամէն օր է աշխատում: Այն բացայայտում ու ներկայացնում է ճշմարիտ խօսքը՝ որպէս հաստատուն արժէք:

ՎՈՎԱ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

¹¹ Նոյն տեղում, էջ 189:

¹² Նոյն տեղում, էջ 313:

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

LANGUAGE OF WORSHIP IN THE ARMENIAN CHURCH

Classical, Modern, or Local

Our Concern

In the process of the reformation of the Armenian Church, the language of worship has been rehashed all along, trying to translate liturgical texts from the original Classical Armenian into the vernacular, and further into local languages. It has always been argued, and rightfully so, that the ancient *grap̄ar* is not understood by the faithful, and as the Holy Bible is translated into *ashkharhapar*, modern Armenian, why not treat same with the texts of the Liturgy, the hymns, and the canonical hours of daily worship. The case is more complicated than we think because the question is beyond mere translation; it challenges and risks textual, doctrinal, and theological deep and serious disorder.

Textual Risks

As one begins to translate liturgical texts, one shall at once meet hidden challenges in terms of theology and music of the chants and the hymns involved, and for that matter we should be mindful that not one verse of our 1000 years old Armenian *sharagans* (hymns) can be translated into any language other than studying and learning purposes. The authentic music of those hymns is tuned exclusively to the Classical Armenian that cannot be otherwise adapted to another language making impossible to sing differently, and if one tries to do, one simply makes mockery out of it. Instead, all forms of publications in local languages are truly needed for study and learning only, and not for performance. Learning sessions are entirely different from performing and officiating. The former is lesson and the latter is worship.

The Last Century

The 20th century revealed even a deeper dimension of the case in the West when the vernacular came to be “useless” and local languages invaded into the worship, to a degree where the vernacular was not even understood by many, and the Sacraments were comfortably performed by local languages. This opened the case of justifying the “personal” need for the Sacraments to be understood by parents and the youth.

Regarding the Divine Liturgy, however, the performance of the Holy Eucharist was given the strict orders from the Hierarchy not to perform in any other way, even partially, than the original Classical that has kept the Armenian Church still in unison as the last step in our communities worldwide, despite the available translated versions for learning and for following the *Holy Badarak*, while performed solemnly. Otherwise, both text and music are tragically impaired and the essence of the Eucharist is seriously jeopardized.

It is regrettable to see some careless handling of the Divine Liturgy when certain priests cut short the completion of the text removing the entire part of the preparation, including the priest’s confession and the purification, thus deleting the solemn hymn of the entrance and the confession, and above all the preparation of the Gifts, the bread and the wine, behind the closed

curtain. This is followed by the elimination of the procession of the priest among the faithful. How can a priest ignore all these to “save” half an hour from the performance and magically appear with the intonation of *Orhnya Der*. In his estimation the Divine Liturgy as if begins from that point, giving the big excuse also that people do not attend until later. They do not admit that because of their negligence people come late, ignoring the other side of the story by those who raise complaints for the short cuts.

Liturgical Books

The Armenian Church is enriched with six canonical books: **Holy Bible, Breviary, Hymn-book, Book of Sacraments, Book of the Holy Eucharist, the Lectionary**, each providing the proper use for daily or annual seasonal worship. Each book is compiled from the Holy Bible as its foundation, declaring the formulations of the First Three Ecumenical Councils, headed by the Nicene Creed. The Book of the Eucharist is for the celebration of the Divine Liturgy, and once kept on the Holy Altar should stay there on its special lectern to be used by the celebrant priest or the visiting bishop. This basic celebration has five integral parts: *Preparation, Synaxis, Eucharist, Anamnesis, Last Blessing*, to be performed in its entirety and in the Classical Armenian, its authentic language.

The Breviary contains the seven daily worships, *Mid-night, Morning, Mid-day, Evening, Sunrise, Peace, and Rest* services. Prayers and litanies in each are totally Biblical, readings and chanting. The Lectionary is the largest volume among all containing Biblical readings extensively, in addition to special prayers from the Church Fathers, as well as special services for annual occasions, such as the *Blessing of the Water* on the Feast of the Nativity, commemorating the Baptism of Jesus by John the Baptist, the *Blessing of the Grapes*, on St. Mary’s Feast, the *Antasdan Processions* (Blessing the four cardinal directions of the world) on the Eve of the Feasts of the Holy Cross.

My View

The Armenian Church is ultimately an Armenian Christian institution, holy and authentic. If the vernacular and local languages appear in the picture, we should use them as auxiliaries and never as exchangeable. Only this way we can take a step forward toward any reformation. In the West this step has been implemented as much as possible, in Americas, Canada, Europe, and Australia. Local languages are used mainly when “personal” Sacraments are administered, always under the shades of the original language to secure authenticity, integrity, and unity worldwide. As mentioned the “personal,” on the other hand the “communal” service represents the Holy Eucharist above and beyond the so called personal need when certain Sacraments are performed. Therefore, any change in the context and language of the Holy *Badarak* becomes hazardous and non-canonical.

The Book of the Holy Eucharist, the *Badarakamadooyts*, remains superior over the rest, next only to the Holy Bible. Ideally it is the responsibility of the faithful to study the text in any language they choose before attending the performance, leaving no room to complain that they do not understand what is being offered on the Holy Altar.

REVD. FR. ZAVEN ARZOUMANIAN, PhD

ԿՐՕՆԱԿԱՆ

ARMENIAN CHURCH COUNCILS

Catholicos John III of Otsoon

24 Councils 4th to 17th Centuries

The Source

The source of the Armenian Church Councils and their deliberations goes back to a great Church leader of the 8th century Catholicos John III of Otsoon (717-728), who was the first to collect all canons available up to his time and classify them under the title of “*Kanonakirk Hayots*” (Book of Canon Law of Armenia), concurrent with the historic evidences of our earliest Armenian historiographers, including some of the canons of the Christian Church in general, exclusively from the first Three Ecumenical Councils, thus confirming canonically the origins of the Armenian Church as an integral part of the Universal Church.

Over all, the main trend of the compilation of the *Book of Canon Law* was to safeguard the traditional and legitimate law and order, bearing in mind the political stability of Armenia as a nation. Those steps could have been taken through the Armenian Church Councils, presided by the Catholicos of All Armenians, with the participation of bishops, clergy, and lay representatives, headed variably by kings and princes whenever applicable, thus giving the Church Councils from the outset a democratic and more powerful status. The Catholicos and the Church were given the power alternately to overtake the governance of the nation where the Armenian kingdom and the political power failed.

The Final Text in Two Volumes

It is understandable for sure that the original *Book of Canon Law* so formed and established by Catholicos John III Otsnetsi in the 8th century, could not have reached us intact. Because of its extreme importance, scribes in different monasteries in Armenia copied from the original version extensively, thus creating many variants emerged from those numerous duplications, with unwarranted additions and deletions, due to possibly inaccurate readings on the part of the scribes. One most ancient manuscript copy of the survived texts comes from 1098, kept in New Joulfa, Iran, most probably the earliest copy available, which His Holiness Vasken I Catholicos of All Armenians had requested in photographed reproduction for the final edition and publication by Vasken Hakobyan.

Presently scholars have identified over 200 survived manuscripts of the text, of which 47 selected copies were read painstakingly and edited by a great scholar and specialist Dr. Vasken Hakobyan who published them in two large volumes in Yerevan, in 1964 and 1971. He classified all the canons tediously and completely, compiled by Catholicos John III in volume I, and additional codes collected by later Pontiffs of the Armenian Church down to the 17th century in volume II.

Chronology

In total 24 Armenian Church Councils convened between the 4th and the 17th centuries. Historians have recorded one council in the 4th, two in the 5th, two in the 6th, four in the 7th, three

in the 8th, one in the 9th, one in the 10th, three in the 12th, one in the 13th, three in the 14th, one in the 15th, and one in the 17th centuries. Fourteen of those were called by the Supreme Patriarchs of the Armenian Church, one was a General Assembly to elect the Catholicos in 1441, upon the return of the Pontifical See from Sis, Cilicia, and nine were called by secular leaders of Armenia. They are specified as follows.

The first 14 Councils comprised the Councils of Ashtishat in 354 by Catholicos Nersess Partev the Great, Shahapivan in 444 by “a group of spiritual brothers”, Artashat in 449 by Catholicos Hovsep Hoghotsmetsi, Dvin I in 506 by Catholicos Babken I of Othmus, Dvin II in 554 by Catholicos Nersess II of Bagrevand, Dvin III in 645 by Catholicos Nersess III Ishkhantsi, Dvin IV in 720, and Manazkert in 726, both by Catholicos John III of Otsoon, Partav in 768 by Catholicos Sion Bavonetsi, Kesoun (Karmir Vank) in 1113 by Catholicos Krikor Pahlavouni, Hromkla in 1179 by Catholicos Krikor Tgha, Adana in 1317 by Catholicos Constantine III Kesaratsi, Sis in 1343 by Catholicos Mkhitar Krnerts, Jerusalem 1652 by Catholicos Philibos Aghbaketsi.

A General Assembly convened in 1441 in Etchmiadzin by Hovhannes Vartabed Hermonetsi, an influential leader of the Armenian Church at the time and the head of the famous University of Datev in Siunik, to transfer the Seat of the Catholicos once and for all from Sis (Cilicia) to Etchmiadzin. The Assembly elected Kirakos Vardapet Virapetsi (of Khor Virap) to succeed Catholicos Krikor Mousabekian who chose to remain in Sis and start the second and the limited branch of the Armenian hierarchy in Cilicia.

Nine Councils were called by secular leaders of Armenia as follows: Council of Dvin III in 607 by Armenian princes, Karin I in 633 enforced by the Byzantine Emperor Heraclius, Karin II in 680, Yernchak in 841 by Armenian princes, given the fact that in 607 at the Council of Dvin III the election of Catholicos Abraham Aghbatanetsi (607-615) was held, and at the Yernchak Council in 841 the accusation against the ousted Catholicos John IV Ovayetsi was resolved. It was in Ani, the capital of the Bagratuni Kingdom, a Council in 969 was called by King Ashot III. Later, four Church Councils were held in Cilician Armenian Kingdom, in 1197 in Tarsus by King Levon I of Cilicia, the Council of Sis I in 1208 again by King Levon I, of Sis II in 1307 by King Levon III, and the Council of Sis III in 1343 by King Constantine of Cilicia.

Doctrinal Issues

It is important to single out from the above the Church Council of Karin I in 633 during the pontificate of Catholicos Ezr of Parajnakert (630-641). It dealt with doctrinal issues between the Armenians and the Byzantines regarding the two divine and human natures of Christ inherited from the Council of Chalcedon in 451. In Karin the Catholicos was accompanied by four bishops and three archimandrites, whereas the Greeks came at the Council with the Emperor Heraclius himself and a number of bishops headed by the Greek Patriarch Sergius. To complicate matters more, a new doctrine was brought up at the Council by the Greeks, namely, the doctrine of *Monothelism*, a Greek term meaning “Christ had and exercised one will, the divine will only” next to possessing his human nature.

It is reported by historian Stephan Orbelian in his “*History of the Province of Sisakan*” that at the Council of 633 an important paper was read by Methusela, the Armenian Bishop of Siunik, a highly regarded philosopher and doctor of the Armenian Church who had studied the original doctrines of St. Sahak and St. Mesrob. He is hailed by the historian as “*a great poet, a philosopher and orator, full of wisdom and perfect in knowledge.*” In his paper Methusela had rejected categorically the Council of Chalcedon, along with the newly introduced doctrine of the

“one will in Christ.” The Armenians were forced by the Emperor and the Patriarch to accept the Greek Orthodox doctrine as presented that turned to be ephemeral and to no avail.

General Agenda of the Councils

Six of the Church Councils dealt with matters of “reformation within the church,” four of which established specific canon laws that have entered in the two-volume edition by V. Hako-byan. Five other Councils responded to the official correspondences addressed to the Armenian Church, and one among them aimed at establishing the relationship between the Armenian and the Syrian Orthodox Churches. Another Council tried to improve the relationship between the Mother See Holy Etchmiadzin and the See of Cilicia. The remaining four Councils have discussed attempts toward unity with the Greek Orthodox and the Roman Catholic Churches under the Armenian Kingdom of Cilicia (Lesser Armenia). All such attempts were diplomatic rather than anything else, since the Armenian Church always remained totally independent and apostolic since her inception from 301 AD.

Church and State

History testified that church and state in Armenia remained united, and that secular heads of our nation attended the Councils so that religious canon laws would have the advantage of state endorsement, since both were mutually supportive with the understanding that the religious heads of the national church of Armenia reached resolutions at the Councils, and that secular authorities executed them in their respective regions and districts. By virtue of her judiciary power, the church sometimes had to step in to resolve political conflicts among the secular authorities.

REVD. FR. ZAVEN ARZOUMANIAN, PhD



ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

**ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿԻ ՆՈՐԱՅԱՅՏ ԻՆՔՆԱՆԿԱՐԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
ՀՄՐ 1930 ՁԵՌԱԳԻՐ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉՈՒՄ**

Կիլիկեան ԺԴ. դարի Աստուածաշունչ մատեանների պատկերազարդումների գործում մեծ դեր ունի Սարգիս Պիծակ մանրանկարիչը: 1319 թ. մինչև 1338 թ. ստեղծուած է մեզ յայտնի չորս կիլիկեան Աստուածաշնչեր պատկերազարդուած են հէնց Պիծակի ձեռքով, իսկ մի քանի աստուածաշնչեան ձեռագրեր վերագրուած են նկարչին: Միեւնոյն ծաղկողի վրձնին պատկանող մէկից աւելի նկարազարդ Աստուածաշնչերը¹ եւս մէկ անգամ փաստում են Սարգիս Պիծակ նկարչի բացառիկ տաղանդի եւ բեղմնաւոր գործունէութեան մասին (այս ժամանակաշրջանում նկարազարդ Աստուածաշնչերն այնքան տարածուած չէին, որքան Աւետարանները):

Միաձուլելով հայկական ազգային, ինչպէս նաեւ՝ արեւմտեան եւ արեւելեան քրիստոնէական արուեստի աւանդոյթները՝ Պիծակի ծաղկած Աստուածաշնչերը Յովհաննէս Արքեղբօր դպրոցի մշակած գեղարուեստական սկզբունքների շարունակողն են, սակայն աւելի հակուած դէպի բուն հայկական, հարթապատկերային-երկրաչափական ոճը: Նրանց քանակը մէկ նկարչի համար տպաւորիչ է, իսկ գեղարուեստական արժէքով նրանց կարող ենք դասել հայկական մանրանկարչութեան լաւագոյն օրինակների շարքը:

Այդ ձեռագրերն են՝ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի ՀՄՐ 1508/1 (1319 թ.), Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի Սրբոց Յակոբեանց վանքի ՀՄՐ 1930 (1323 թ., մասնակի), Երեւանի Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի² ՀՄՐ 2627 (1338 թ.), ինչպէս նաեւ նկարչին վերագրուող Ֆրեզնոյի (մասնաւոր հաւաքածոյ³) Աստուածաշնչերը:

Երուսաղէմի ՀՄՐ 1930 Աստուածաշնչի մանրանկարների ուսումնասիրութեան ժամանակ մեր ուշադրութիւնը գրաւեց 437բ էջի փոքր չափերի մարդկային կերպարը, որ պատկերուած էր Պօղոս Առաքեալի եւ նրա առջեւ ծնկի իջած ձեռագրի պատուիրատու Ստեփաննոս եպիսկոպոսի միջեւ (նկ. 1)⁴: Հոգեւորականի հագուստով ծնրադիր այս անձի դիմագծերը մեզ ծանօթ էին Սարգիս Պիծակի այլ ձեռագրերից եւ յիշեցնում էին նկարչի ինքնանկարները: Հետազօտութեան եւ համեմատութիւնների արդիւնքում մեզ պարզ դարձաւ, որ, ամենայն հաւանականութեամբ, մենք գործ ունենք նկարչի հե-

¹ Վստան եմք, որ նրանց թիւն աւելին է, եւ դեռ պարզուելու են Սարգիս Պիծակի ձեռքով նկարազարդուած նորայայտ Աստուածաշունչ մատեաններ:

² Յետ այսու՝ Վնտկ, Երսղմ, ՄՄ:

³ Ձեռագիրը Ֆրեզնոյում բնակուող տիկին Յակոբեանի սեփականութիւնն է եղել, այժմ նրա գտնուելու մասին յստակ տեղեկութիւններ չկան, իսկ լուսանկարները Ս. Տէր-Ներսէսեանին փոխանցել է Շիֆակոյի համալսարանի փոռֆեսոր Ուիլյուզբին, տե՛ս S. Der Nersessian, Manuscripts Arméniens Illustrés, des XII^e, XIII^e et XIV^e siècles, de la Bibliothèque des peres Mekhitharistes de Venise, Paris, 1937, էջ 140:

⁴ Խորապէս շնորհակալ եմք Երուսաղէմի Հայոց պատրիարքարանին եւ Սբ. Թէոդորոս ձեռագրատան նախկին տեսուչ Ներսէս Արք. Ալոյեանին՝ Երսղմ. ՀՄՐ 1930 ձեռագրի որոշ մանրանկար էջեր մեզ ուղարկելու համար:

թական՝ թուով չորրորդ ինֆանկարի հետ: Մինչ այդ մեզ յայտնի էին Սարգիս Պիծակի երեք ինքնանկարներ նրա տարբեր ձեռագրերից: Ինքնանկարների նման քանակն արդեն բացառիկ երեւոյթ է տուեալ ժամանակաշրջանի ինչպէս հայ, այնպէս էլ ողջ միջնադարեան գրքարուեստում⁵, եւ, փաստօրէն, դրանց կարող է գումարուել եւս մէկը. դրանով Երուսաղէմի Աստուածաշունչն էլ աւելի մեծ հետաքրքրութիւն եւ կարեւորութիւն է ստանում:

Յատկանշական է, որ ԺԳ. դարի կիլիկեան ծաղկողներից գրեթէ ոչ մէկից ինքնանկար յայտնի չէ⁶, փոխարէնը՝ ԺԴ. դարից միեւնոյն նկարչից մեզ են հասել հաւանաբար միանգամից չորսը, ինչն իսկապէս ուշագրաւ եւ հազուագիւտ երեւոյթ է հայ եւ տուեալ ժամանակաշրջանի ողջ քրիստոնեայ արուեստում⁷:

Երուսաղէմի Հ^մր 1930 Աստուածաշունչն ընդօրինակուել է 1323 թ.՝ Գրիգոր քահանայի (երէց) ձեռքով՝ կիլիկեան Հայաստանի Սիւ մայրաքաղաքում, ծաղկողն է Սարգիս քահանան (Պիծակ): Ինչպէս նշուեմ է ձեռագրի յիշատակարանում (495բ1), ձեռագիրը գրուել է Ստեփաննոս եպիսկոպոսի հրամանով՝ «գիտնական րաբունույ եւ արհի (աշխարհի), առաջնորդի Սբ Ուխտին Անդրիասանց», Օշին թագաւորի որդի Լեւոն Ե. (Դ.) արքայի օրոք, ով դեռ «մանուկ է հասակաւ եւ կատարեալ իմաստութեամբ»⁸: Բազմիցս յիշատակուեմ է նաեւ Ստեփաննոսի աշակերտ եւ հոգեզաւակ Յոհաննէս (Յովհաննէս) քահանան⁹: Ձեռագրի վերջին ստացողն է Գրիգոր վարդապետը, ով 1636 թ. Երուսաղէմում գրուած յետագայի յիշատակարանի հեղինակն է¹⁰:

Աստուածաշունչն ամբողջական չէ, մասնակի է, իսկ մանրանկարների մի մասը գրաֆիկական է՝ գծանկարուած միայն կարմիրով՝ հաւանաբար պայմանաւորուած ծաղկողի ապրած խրթին ժամանակաշրջանով եւ դրանից բխող նկարչական պիտոյքների եւ ներկի սղութեամբ¹¹:

Ձեռագրի գեղարուեստական յարդարանքը սկսւում է Դաւթի Սաղմոսների գրքով (էջ 7ա), որի սկիզբը զարդարուած է խոշոր ուղղանկիւն կիսախորանով՝ ողջ էջի լայնքով եւ ներսից եռամաս կամարաձեւ կտրուածքով, առաջին տողը եւ «Ե» գլխա-

⁵ Արեւմտեան Եւրոպայում գրչի եւ մանրանկարչի ինֆանկարներ յայտնի են ումանական շրջանից՝ ԺԱ.-ԺԲ. դդ., սակայն դրանք այդքան էլ մեծամասն չեն: Հայ մանրանկարչութեան մէջ ինֆանկարը յայտնի է ԺԳ.-ԺԴ. դարերից: Պիծակից առաջ ինֆանկարներ են թողել Գլաձորում Թորոս Տարոնացին եւ Աւագը: Յետագայում ինֆանկարներ են տեսնում նաեւ Վասպուրականի դպրոցի մի շարք նկարիչների մօտ: Իսկ պատմական դիմանկարի ստեղծման աւանդոյթը խիստ զարգացած էր Կիլիկիայում դեռեւս ԺԲ.-ԺԳ. դարերից, պատմական դիմանկարներ են տեսնում Սկետայի, Հռոմիլայի, Յովհաննէս Արեւելքօր դպրոցի գրչութեան կենտրոններում, ապա Սարգիս Պիծակի ձեռագրերում, Վ. Ղազարեան, Ինֆանկարը հայ մանրանկարչութեան մէջ, «Գիտութիւն եւ տեխնիկա» ամսագիր, Երեւան, 1981, Հ^մր 9, էջ 32, S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, Washington, D.C., 1993, Vol. I, p. 161, Լ. Ազարեան, Կիլիկեան մանրանկարչութիւնը XII-XIII դդ., Երեւան, 1964, էջ 77:

⁶ Լ. Չուգասեան, տե՛ս Վ. Ղազարեանի Սարգիս Պիծակ, Երեւան 1980 գրքի գրախօսականը, «Լրաբեր հասարակական գիտութիւնների», Երեւան, 1981, Հ^մր 2, էջ 116:

⁷ Հարկ է նշել, որ հայ կերպարուեստում նկարիչների առաջին ինֆանկարներն են Սարգիս Փառչիկի (Փարչիկի) պատկերը Անիի Սբ. Փրկիչ եկեղեցում (ԺԳ. դ. սկիզբ) եւ Թորոս Սարկաւագի ինֆանկարը՝ 1311 թ. Աւետարանում (Ձեւքեր Բիթի գրադարան, Հ^մր 559), տե՛ս նոյն տեղում, էջ 118, S. Der Nersessian, The Chester Beatty Library: a Catalogue of the Armenian Manuscripts, Dublin, 1958, p. 31-32, 184.

⁸ Ն. Եսս. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հ. 2., Երուսաղէմ, 1972, էջ 437-438:

⁹ Ն. Եսս. Պողարեան, նշուած աշխ., էջ 438:

¹⁰ Տե՛ս նոյն տեղում:

¹¹ Վ. Ղազարեան, Սարգիս Պիծակ, Երեւան 1980, էջ 75:

տառը զարգագիր են, խոշոր, ամբողջը միայն գծանկարուած է կարմիրով, չներկուած: Կիսախորանի վերելում թռչուններն են՝ հաւատի աղբիւրի մօտ, իսկ աջ կողմում գեղեցիկ խոշոր լուսանցազարդ ենք տեսնում՝ պսակուած խաչով:

Դրան նախորդում է Սաղմոսներ նուագող Դաւիթ թագաւորի պատկերը (6բ, նկ. 2)՝ զարդարուն ճոխ կամարակապ շրջանակի մէջ, նստած գահին, թագով, ոտքերը դրուած բարձին, խոշոր չափերի՝ գրեթէ ողջ էջը զբաղեցնող, որից ներքեւ՝ շրջանակից դուրս, ծաղկողի գրած գեղեցիկ բանաստեղծական տողերն ենք կարդում: Տեսնում ենք փայլուն զարդանկարչական արուեստ, որը փոխանցում է արքայական հագուկապի ողջ շքեղութիւնը, իսկ կամարակապ շրջանակը սիւների վրայ խոյացող եռանաւ բազիլիկ է յիշեցնում, որտեղ՝ խորանի ներքոյ, պատկերուած է արքան, ով, ինչպէս գիտենք, Քրիստոսի հինկտակարանային նախատիպն է համարուում: Ցաւօք մանրանրկարը միայն գծանկարուած է կարմիրով եւ ներկուած չէ, սակայն պիծակեան նկարազարդումների գեղեցկագոյն օրինակներից է:

Աստուածաշնչում կան ինչպէս ողջ էջով արուած ներկուած եւ չներկուած, այնպէս էլ լուսանցքային գրաֆիկական հինկտակարանային եւ նորկտակարանային պատկերներ: Ճիշտ էջում Սողոմոնի Առակների գիրքն է, որ սկսւում է ուղղանկիւն փոքրիկ գըլխազարդով՝ վերելում թռչուններ, զարգագիր գլխատառով, իսկ լուսանցքում թագադիր Սողոմոն արքայի կիսանդրի պատկերն է՝ գեղեցիկ արքայական հագուստով, ձեռքին բացուած գալար, իսկ մարմինը ստորին հատուածում բուսական նախշի է վերածուած՝ յատկանիշ, որ բնորոշ է Սարգիս Պիծակի Աստուածաշնչերի պատկերազարդումներին:

Հինկտակարանային մարգարէները միանման են պատկերազարդութեամբ, սակայն տարբերում են որոշակի անհատական յատկանիշներով՝ դիմագծեր, մորուքի առկայութիւն կամ բացակայութիւն. եւս մէկ յատկանիշ, որ բնորոշ է Սարգսին: Բոլորը լուսանցքներում են, լուսապսակներով, մեծ մասամբ $\frac{3}{4}$ թեք դիրքերով, ինչպէս Ովսէն, Մովսէսը, Եսային եւ այլն:

Նոր կտակարանի յարդարանքը շքեղ է. մանրանկարները հիմնականում արդէն ներկուած են եւ հարուստ կիլիկեան մանրանկարչութեան վառ ու հնչեղ գոյներով, կենդանական աշխարհի եւ թռչունների բազմազանութեամբ եւ մարդկանց կերպարներով, օգտագործուած է առատ ոսկի, որ փայլուն համադրւում է կիլիկեան հարուստ ներկապնակի հետ:

Նոր կտակարանը բացւում է 279բ էջի Մատթէոս Աւետարանչի պատկերով: Մատթէոսը կանոնիկ պատկերազարդութիւն ունի, իսկ վերելում՝ երկնքից, երելում է Սարգիս Պիծակի ձեռագրերում գրեթէ կանոնիկ դարձած ներշնչանքի աղբիւրը՝ այստեղ հրեշտակի տեսքով¹², որն ամենեւին Աւետարանչի խորհրդանիշը չէ: 305բ-ում Մարկոս Աւետարանչի պատկերն է՝ իր Աւետարանից առաջ: Կրկին վերելից տեսնում ենք ներշնչանքի աղբիւր հանդիսացող հրեշտակի պատկերը: Մարկոսն իր Աւետարանը դրել է ծնկներին, վերջինս գեղեցիկ յարդարուած կազմով գրքի տեսքով է, որոնցից կիլիկեան նկարիչներն իրենց աչքի առաջ շատ ունէին, իսկ գրակալը ձկան տեսք ունի:

Նոյն կերպ ճոխ են Ղուկաս Աւետարանչին պատկերող մանրանկարը 324բ-ում եւ Պրոքորոսին իր Աւետարանը թելադրող Յովհաննէս Աւետարանչի պատկերը 352բ

¹² Ներշնչանքի աղբիւրի մասին տե՛ս Վ. Ղազարեան, Սիւծէտային մանրանկարը Կիլիկիայում, XIII դ. վերջ, XIV դ. սկիզբ, Երեւան, 1984, էջ 85-86, Վ. Ղազարեան, Սարգիս Պիծակ, էջ 42, S. Der Nersessian, Manuscripts Armeniens illustres des XII^e, XIII^e et XIV^e siecles, p. 158:

էջում, այստեղ արդէն ներշնչման աղբիւրն են երկնքից իջնող Աստծոյ աջը եւ աղունիկի տեսքով Սուրբ Հոգին:

Առաւել հարուստ եւ շքեղ են անուանաթերթերը՝ լի բուսական նախշերով եւ ոլորազարդերով, վառ ու հնչեղ գոյներով, ծածկուած առատ ոսկով, լի մարդկային, կենդանական, թռչնային եւ խորհրդանշական պատկերների բազմազանութեամբ: Դրանք կիլիկեան փառահեղ մանրանկարչութեան նմոյշներ են:

Դրանցից կանդրադառնանք միայն մէկին՝ Ղուկասի Աւետարանի անուանաթերթին, որտեղ անշափ ինքնատիպ եւ հագուադէպ հանդիպող պատկերազրութիւն ենք տեսնում: Ծակատազարդի վրայ՝ աջ եւ ձախ կողմերում (325ա, նկ. 3), Տիրամօր եւ Յովհաննէս Մկրտչի կերպարներն են Բարեխօսութեան տեսարանում, իսկ նրանց միջեւ կենդանամարտի դրուագ է, որտեղ գառանը (Յիսուսի եւ քրիստոնեաների խորհրդանիշը) մի կողմից կտցահարում է արծիւը, իսկ միւս կողմից՝ յօշոտում առիւծը, ներքեւում երկու հանդարտ արածող գառնուկներ են: Անշափ ուշագրաւ պատկերազրութիւն է, որը ոչ միայն քրիստոնեաների հալածանքի խորհրդանիշն է, այլեւ, մեր կարծիքով, այս կերպ մանրանկարին արտայայտում է իր խիստ մտահոգութիւնը հայրենի երկրի եւ իր ժողովրդի ճակատագրի հանդէպ այն բարդ ու օրհասական ժամանակներում, որում ապրում էր. գառները քրիստոնեայ հայերն են, որ խաղաղ ապրում են իրենց երկրում, իսկ նրանց յօշոտող գազանները հաւանաբար երկու թշնամի ցեղերը՝ մամլուքները եւ սելճուկ-թուրքերը, ովքեր ասպատակում էին երկիրը եւ խաթարում կիլիկեան Հայաստանի անդորրը: Անշափ զգայական եւ արտայայտիչ մանրանկար է, որը, մեր կարծիքով, ցոյց է տալիս անուանի ծաղկողի սրտացաւութիւնը հայրենի երկրի ու ժողովրդի համար, բայց եւ միեւնոյն ժամանակ՝ նրա հաւատը դէպի վաղուայ օրը. հէնց դրա համար են բարեխօսում Աստուածամայրն ու Յովհաննէս Մկրտիչը:

Վերադառնալով խնդրոյ առարկայ մանրանկարին (նկ. 1)՝ նշենք, որ այն նախորդում է Պօղոսի թղթերին, որ սկսում են 438ա էջից եւ նոյնպէս նրբագեղ ու վարպետօրէն կատարուած յարդարանք ունեն: Պօղոս առաքեալի կերպարը Պիծակը միշտ առանձնակի խնամքով է պատկերում: Այստեղ այն լայն զարդարուն շրջանակի մէջ է, խոշոր չափերի, կանոնիկ պատկերազրութեամբ՝ ճաղատ, հասուն տարիքի տղամարդու կերպարով՝ երկար մորուքով, լուսապսակով, օրհնութեան ժեստ անող, իսկ նրա առջեւ, ինչպէս նշել էինք, ծնկի է իջած ձեռագրի պատուիրատու Ստեփաննոս եպիսկոպոսը: Վերջինս միջին տարիքի բարետես տղամարդու տեսքով է պատկերուած՝ եպիսկոպոսական հագուստով, թագով եւ եմփփորոնով, կլորաւուն կարճ մորուքով:

Այս մանրանկարը եւս պէտք է դասել հայ արուեստում պատուիրատուների դիմանկարների շարքին, որով այն աւելի մեծ հետաքրքրութիւն է ստանում: Մանրանկարը գրաֆիկական է, չներկուած, սակայն բարձրարուեստ եւ հմուտ նկարչի կատարած աշխատանք է, կիլիկեան մանրանկարչութեան վառ օրինակ, եւ եւս մէկ անգամ վկայում է ձեռագրի ծաղկողի՝ դիմանկարչութեան եւ զարդանկարչութեան մեծ վարպետ լինելու եւ պատկերուած անձանց յոյզերը ընթերցողին փոխանցելու կարողութեան մասին: Մանրանկարի խորքին ճարտարապետական շինութիւն է՝ քրիստոնէական եկեղեցու տեսքով:

Շրջանակի վրայ կարդում ենք Պօղոս առաքեալի, ձեռագրի պատուիրատուի, ինչպէս նաեւ գրչի եւ ծաղկողի անունները (437բ)՝

Սուրբ Պաւղոս եւ առաքեալ,

զտէր Ստեփաննոս առ քեզ ընկալ,
 զի հոյժ սիրով ետ զսա գրեալ,
 առ յիշատակ իւր մընալ.
 Գրիգոր գրիչ է յանգ հանեալ,
 Սարգիս ծաղկողն է զարդարեալ¹³:

Ընդ որում, ուշագրաւ է, որ իւրաքանչիւրի անունը գրուած է իր դիմանկարի անմիջապէս կողքին, այսպէս՝ Պօղոս առաքեալի անունը կարդում ենք անմիջապէս նրա գլխավերեւում, Ստեփաննոս եպիսկոպոսի անունը շրջանակի աջ կողմի սեան վրայ, որը հէնց իր կողքին է, իսկ ստորին հատուածում՝ խնդրոյ առարկայ դիմանկարից ներքեւ, կարդում ենք Սարգիս ծաղկողի անունը: Սա մի երեւոյթ է, որ բնորոշ է Սարգիս Պիծակի ձեռագրերին, երբ շրջանակի վրայ նկարիչը թողնում է պատկերուած անձանց անունները, նոյնը նա անում է նաեւ իր ինքնանկարներում (տե՛ս նկ. 1, նկ. 7): Այստեղից եւս պարզ է դառնում, որ պատկերուած անձը ոչ այլ ոք է, քան մեր նկարիչը:

Պիծակն իրեն պատկերել է Պօղոս առաքեալի եւ Ստեփաննոս եպիսկոպոսի միջեւ՝ մանրանկարի ստորին հատուածում, բոլորից փոքր, նուաստ, գրեթէ աննշմարելի (հաւանաբար վերջում է որոշել աւելացնել իրեն, տե՛ս նկ. 4): Նա ծնկի է իջած Պօղոս առաքեալի առջեւում՝ աղօթողի դիրքով, քահանայական հագուստով, թիկնոցով եւ բըրգաձեւ (կամ սրածեւ) վեղարով, միջին տարիքի է, կլոր մորուքով: Անշափ բարի, համեստ պատկեր է, որի դիմագծերը մեզ յիշեցնում են պիծակեան միւս ինքնանկարները նրա տարբեր ձեռագրերից (տե՛ս նկ. 5):

Ըստ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի ձեռագրերի ցանկի կազմող Նորայր Արք. Պօղարեանի՝ պատկերուածը պատուիրատուի աշակերտ Յոհաննէս քահանան է¹⁴, ում անունը գրիչը բազմիցս խնդրում է յիշել յետագայում Ստեփաննոս եպիսկոպոսի անուան հետ միասին¹⁵: Սակայն, մեր կարծիքով, Յոհաննէս քահանան պէտք է պատկերուած լիներ շատ աւելի երիտասարդ, իսկ այստեղ նա նոյն տարիքի է, ինչ Ստեփաննոս եպիսկոպոսը, եթէ ոչ աւելի հասուն:

Հետաքրքիր են Սարգիս Պիծակի ինքնանկարների դիմագծերը. բոլոր ձեռագրերում տեսնում ենք նոյն խոշոր աչքերը՝ վար իջնող կոպերով եւ սրածայր պոչիկով, ուղիղ քիթը, որի վերեւում ունքերն իրար են հասնում, դէպի վար իջնող բեղերը, վարդագոյն շրթունքները, երկսայր կամ ալիքաւոր կլորաւուն մորուքը: Վերջին երկու ինքնանկարներում Պիծակն արդէն իրեն պատկերում է հասուն տարիքի, ալեհեր, լատինական միջավայրից վերցուած բերետանման գլխարկով, որը, հաւանաբար, ԺԴ դարում տարածուած էր Կիլիկիայի հայերի հագուկապում (նկ. 5, 7):

Այսպիսով՝ Սարգիս Պիծակի ինքնանկարի օգտին է խօսում մեր կերպարի բաւական հասուն տարիքը, դիմագծերի նմանութիւնը Պիծակի միւս ինքնանկարների հետ եւ շրջանակի վրայ՝ պատկերի հէնց ներքեւում թողած Սարգիս ծաղկողին յիշատակող գրութիւնը՝ «Սարգիս ծաղկողն է զարդարեալ», մինչդեռ այստեղ բացակայում է Յոհաննէսին վերաբերող որեւէ յիշատակութիւն:

¹³ Ն. Եպս Պօղարեան, նշում աշխ., էջ 438:

¹⁴ Տե՛ս Ն. Եպս. Պօղարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատոր 2., էջ 437, որտեղ մանրանկարն անուանում է «Յոհաննէս փահանայ»:

¹⁵ Տե՛ս ձեռագրի յիշատակարան, էջ 173ա2, 236ա1, 495բ1:

Ուստի կասկած չի մնում, որ այստեղ մենք գործ ունենք հենց Սարգիս Պիծակ նկարչի հերթական թուով չորրորդ նորայայտ ինֆանկարի հետ: Ընդ որում յալեւնք, որ ժամանակագրական առումով այն ամենավաղ թուագրուողն է նկարչից պահպանուած բոլոր ինֆանկարների մէջ, եւ դրանով այն առաւել մեծ արժէք է ստանում:

Սարգիս Պիծակի միւս ինքնանկարները մեզ յայտնի են նրա հետեւեալ ձեռագրերից՝ Վենետիկի 1331 թ. Հ^մ 97/16 Աւետարանից, Մատենադարանի 1338 թ. Հ^մ 2627 Աստուածաշնչից եւ Դուբլինի Չեսթեր Բիթի գրադարանի 1343 թ. Հ^մ 614 Աւետարանից¹⁶:

Վենետիկի Հ^մ97/16 ձեռագիրն առանձնակի ուշադրութեան է արժանի, այն բազմաթիւ տեսակէտերի բախում է առաջացրել, եւ յաճախ շփոթութիւն է եղել նկարչի ինքնանկարի հարցի շուրջ. մենք կը փորձենք յստակութիւն մտցնել այստեղ եւս:

Խնդիրն առաջացել է այն պատճառով, որ ծաղկողն այս ձեռագրում միանգամից երկու դիմանկար է թողել երկու տարբեր թերթերում՝ «Սարգիս» եւ «Սարգիս աբեղ(այ)» մակագրութիւններով՝ առաջինը Դուկաս Աւետարանչի (193բ), երկրորդը Մատթէոս Աւետարանչի (19բ) առջեւ ծնկի իջած (նկ. 6): Ուսումնասիրողները դրանք երբեմն խառնել են, եւ որպէս Պիծակի ինքնանկար ներկայացրել ձեռագրի պատուիրատուի՝ Սարգսի դիմանկարը (193բ)¹⁷:

Ակնյայտ է, որ երկու դիմանկարներից մէկում ձեռագրի պատուիրատու Սարգիս քահանան է. նա պատկերուած է ծնրադիր՝ Դուկաս Աւետարանչի առջեւ, լուսապսակով, թիկնոցով եւ հրէական տոնգուրով (193բ): Պիծակն իրեն երբեք լուսապսակով եւ տոնգուրով չի պատկերում, փոխարէնը՝ Մատթէոս Աւետարանչի առջեւ հոգեւորականի հագուստով եւ սեւ վեղարով ծնրադիր անձը կրկնում է նոյն այն դիմագծերը, որ մեզ ծանօթ են վերոնշեալ միւս ձեռագրերի պիծակեան ինքնանկարներից: Այստեղ կարգում ենք նաեւ գրութիւն՝ «Սարգիս աբեղ(այ)» (19բ):

Կիլիկիայում լայն տարածում ունէին ձեռագրերի պատուիրատուների դիմանկարները՝ որեւէ Սրբի առջեւ ծնրադիր պատկերուող, եւ երբեմն նրանք կարող էին լինել լուսապսակով՝ այդպիսով պատուի արժանանալով. այդ դէպքերից էր արքայական ընտանիքին պատկանելը, հանգուցեալ լինելը եւ այլն¹⁸: Նման օրինակ ենք տեսնում նաեւ Երուսաղէմում պահուող Պիծակի մէկ այլ՝ 1332 թ. նկարազարդուած Հ^մ 2649 Աւետարանում, որտեղ՝ 162բ էջում, Դուկաս Աւետարանչի առջեւ ծնկի իջած, պատկերուած է ձեռագրի պատուիրատու Գրիգոր քահանան՝ նմանատիպ հագուստով, թիկնոցով եւ լուսապսակով, ինչ Վենետիկի ձեռագրի մանրանկարում (նկ. 8)¹⁹: Կրկնում են նոյնիսկ

¹⁶ S. Der Nersessian, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia*, p. 161., Վ. Ղազարեան, *Ինֆանկարը հայ մանրանկարչութեան մէջ*, «Գիտութիւն եւ տեխնիկա», էջ 32: Վստահ ենք, որ Սարգիս Պիծակի ինֆանկարների շարքը դեռ համալրուելու է նրա վրձնի պատկանող նորանոր ձեռագրերի ի յայտ գալուն գուգահետ:

¹⁷ Ք. Մուրաֆյանն իր աշխատութեան մէջ նշում է, որ իսկապէս դիմանկարներից մէկը պատուիրատու Սարգսին է, սակայն շփոթում է նրանց տեղերը, տե՛ս C. Mutařian, *L'Arménie du Levant, XI^e-XIV^e siècle*, T. II, Paris, 2012, նկ. 201, 202: Սիրարփի Տէր-Ներսէսեանը *Manuscripts Arméniens illustres des XII^e, XIII^e et XIV^e siècles* աշխատութեան մէջ յստակօրէն տարբերակում է Պիծակի եւ պատուիրատու Սարգսի դիմանկարները, սակայն յետագայում ընկնում կասկածների մէջ, տե՛ս S. Der Nersessian, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia*, էջ 161, մեր՝ Ո. Քէշիշեան, «Սարգիս Պիծակի մի մանրանկար Ս. Դիոնիսոսի վանքի յունարէն ձեռագրում» (էջմիածին, 2., 2015, էջ 83-90) յօդուածում մենք կարծիք էինք յայտնել, որ երկու դիմանկարներն էլ Սարգիս Պիծակի ինֆանկարներ են (տե՛ս էջ 86), սակայն այժմ մենք հերքում ենք այդ տեսակէտը:

¹⁸ S. Der Nersessian, *Manuscripts Arméniens illustres des XII^e, XIII^e et XIV^e siècles*, p. 160.

¹⁹ Տե՛ս նոյն տեղում:

պատուիրատուների մորուքի ձեւերը, դիմագծերը, ձեռքերի դիրքը եւ այլն:

Այսպիսով, կասկած չի մնում, որ Վենետիկի ձեռագրի 193բ էջի դիմանկարը հենց ձեռագրի պատուիրատու Սարգիս քահանայի եւ ոչ թէ ծաղկող Սարգիս Պիծակի դիմանկարն է, ինչպէս երբեմն կարող ենք հանդիպել գրականութեան մէջ:

Պատուիրատուների դիմանկարները կրկնկայում կարելի է բաժանել հետեւեալ խմբերի՝ ա. պարզ դիմանկար, բ. պատուիրատուն որեւէ Սրբի առջեւ (սովորաբար պատուիրատուն քահանայի հագուստով է, ծնկի իջած, ինչպէս Վենետիկի ձեռագրում), գ. եւս մէկ դիմանկարի տարբերակ է պատուիրատուի դիմանկարի ներմուծումը տէրունական շարքի որեւէ մանրանկարի մէջ, որի վառ օրինակն է Մարիոն թագուհու դիմանկարը՝ Սարգիս Պիծակի Երսղմ Հ^մ 1973 ձեռագրի «Խաչից իջեցումը» մանրանկարում²⁰:

Սիրարփի Տէր-Ներսէսեանը Վենետիկում պահուող ձեռագրերին նուիրուած իր հատորում յատակ տարբերակում է Հ^մ 97/16 ձեռագրի պատուիրատուի եւ ծաղկողի դիմանկարները՝ շեշտելով 193բ-ում լուսապսակի առկայութեան փաստը²¹, սակայն յետագայում՝ կրկնեան մանրանկարչութեանը նուիրուած իր աշխատութեան մէջ, նա կարծես ընկնում է կասկածների մէջ եւ պատուիրատուին պատկերող դիմանկարը եւս առաջարկում համարել Սարգիս Պիծակի ինքնանկար²²: Տէր-Ներսէսեանի մտահոգութիւնը պայմանաւորուած էր 19բ էջի ինքնանկարի տակ թողնուած «Սարգիս աբեղ(այ)» մակագրութեամբ, որով Պիծակը երբեք չէր ստորագրում:

Եւ իսկապէս, ինչպէս յայտնի է, Սարգիս Պիծակը մակագրում էր իր մանրանկարները «Սարգիս քահանայ» կամ «Սարգիս երէց» անուններով, նա եղել է ամուսնացեալ քահանայ, իսկ իր ծաղկած 1336 թ. ՄՄ 5786 Արքունական Աւետարանի յիշատակարանից իմանում ենք իր կնոջ անունը՝ Զալտուն: Հետաքրքրական է, որ նոյն ձեռագրում ծաղկողը յիշատակում է նաեւ իր աներոջն ու զոքանչին՝

Եւ ամուսնոյն իմ Զալտունի

Երկեալն աւրհնէ աստուածունի...

Եւ աներոջն իմ Յովսէփի

Եւ զոքանչին Թեֆանի...²³:

Դա նշանակում է, որ 1336 թ. նա ամուսնացած է եղել եւ եղել է քահանայ: Սակայն մինչ այդ տեսնում ենք, որ Երուսաղէմի 1323 թ. եւ Վենետիկի 1331 թ. ձեռագրերի ինքնանկարներում Պիծակը կրում է աբեղայական սեւ հագուստ եւ բրգաձեւ վեղար, իսկ Վենետիկի ձեռագրի 19բ էջում՝ Մատթէոսի նկարի պատուանդանի ստորին հատուածում, նա իրեն անուանում է «աբեղայ»: Շրջանակից դուրս կարդում ենք ծաղկողի՝ ոսկեգիր բանաստեղծական տողերով յիշատակարանը՝ «Եւ յիս նայեա ողորմութեան, եւ զծաղկաւղբս անպիտան, յաղաւթս ձեր առնէք արժան, հանուր սեռիւք եւ ծննդեան:

²⁰ Տե՛ս նոյն տեղում:

²¹ S. Der Nersessian, Manuscripts Armeniens illustres, p. 159.

²² S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, Vol. II, ill. 653, p. 161.

²³ ՄՄ 5786 ձեռագրի յիշատակարան, 340ա էջ, տե՛ս ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմ՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1950 թ., էջ 284:

Սարգիս արեղ...»²⁴։

Ուշագրավ է, որ նույն ձեռագրի 193բ էջում՝ Ղուկաս Աւետարանչի մանրանկարի շրջանակից դուրս, ծաղկողը ոսկե տառերով թողել է եւս մէկ յիշատակութիւն, որտեղ կարդում ենք արդէն հետեւեալ տողերը՝ «ՁՍարգիս քահանայ զծաղկաւ յուրբ աւետարանիս եւ զծն. յիշէ» (նկ. 6)։

Այսինքն, ծաղկողը իրեն կոչում է ինչպէս արեղայ, այնպէս էլ քահանայ²⁵։ Ընդ որում, կասկած չի յարուցում, որ ե՛ւ Սարգիս արեղայի, ե՛ւ Սարգիս քահանայի մասին յիշատակութիւնները ձեռագրի 19բ եւ 193բ էջերում պատկանում են Պիծակին, միեւնոյն գրչի ձեռագիրն է, միեւնոյն ժամանակ գրուած։ Ղեւոնդ Ալիշանի մօտ նույնպէս Սարգիս Պիծակի մասին կարդում ենք՝ «Սարգիս քահանայ կամ արեղայ»²⁶։

Հետաքրքրական է, որ Վենետիկի ձեռագրից աւելի վաղ նկարագրողուած 1320 թ. «Ութ մանրանկարիչների Աւետարանում» (ՄՄ 7651) ձեռագրի պատուիրատուն Պիծակին անուանում է քահանայ եւ ոչ թէ արեղայ²⁷։ Յետագայում, ինչպէս գիտենք, Սարգիս Պիծակը ստացել է աւագ քահանայի՝ երէցի կոչում, ինչպէս յիշատակուած է 1338 թ. Աստուածաշնչում։

Ինչպէս կարդում ենք Վարդան Հացունու յօդուածում²⁸՝ քահանայութիւնը եկեղեցական պաշտօնի ընդհանուր կոչումն է, որն իր ստորաբաժանումներն ունի՝ եպիսկոպոսութիւն, երիցութիւն, քահանայութիւն, սարկաւագութիւն եւ այլն, այսինքն՝ հոգեւորական աստիճան կրող այս բոլոր անձինք կարող են կոչուել նաեւ քահանաներ²⁹։ Ուստի հնարաւոր է, որ Պիծակը, դեռեւս ամուսնացեալ չլինելով, վաղ շրջանում իրեն անուաներ նաեւ արեղայ, իսկ յետագայում արդէն՝ միայն քահանայ։

Այսպիսով, կարծում ենք, հիմնաւորուած չեն Ս. Տէր-Ներսէսեանի այն կասկածները, ըստ որոնց՝ արեղայ կոչուելու պատճառով Վենետիկի ձեռագրի մանրանկարը չի կարող լինել Սարգիս Պիծակի ինքնանկարը։ Հաշուի առնելով ողջ վերոշարադրեալը, ինչպէս նաեւ պատկերագրական եւ ոճական ընդհանրութիւնները՝ մեզ համար կասկածներ չեն մնում, որ 19բ էջում Մատթէոս Աւետարանչի առջեւ պատկերուած Սարգիս արեղան հէնց Սարգիս Պիծակն է։ Ընդ որում, Երուսաղէմի Աստուածաշնչի նորայայտ ինքնանկարից յետոյ ժամանակագրական առումով սա նրա երկրորդն ինքնանկարն է։

Յիշատակման է արժանի այն, որ Պիծակը միշտ առանձնապատուկ յարգանքի եւ պատուի է արժանացել եկեղեցու կողմից՝ կատարելով տարբեր աստիճանի հոգեւորականների պատուերներ, որոնցից յատկապէս յատկանշական է 1338 թ. ՄՄ 2627 Աստուածաշունչը՝ ընդօրինակուած Յակոբ կաթողիկոսի պատուերով, ում դիմանկարի կողքին էլ Պիծակը գրել է իր ինքնանկարը՝ արդէն աւագ քահանայի (երէց) հագուկապով³⁰ (422բ էջ, նկ. 7)։ Ակնհերեւ է, որ ծաղկողն այնքան պատիւ է ունեցել, որ իրեն

²⁴ Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Ս. Ղազար, կազմ.՝ Հ. Բ. Վ. Սարգիսեան, Հ. Ա., 1914 թ., էջ 431-438։

²⁵ Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, էջ 438։

²⁶ Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, Սր. Ղազար, 1885, էջ 235։

²⁷ Ժ.Դ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, էջ 162-163։

²⁸ Վ. Հացունի, «Հայ բախկոպոսական ձեռնադրութիւն ունեցած են միշտ», Բազմավեպ հանդ. ամս., հ. ԿԴ., Վենետիկ, Սուրբ Ղազար, 1906 թ., էջ 157։

²⁹ Տե՛ս նոյն տեղում։

³⁰ Այս ինքնանկարում պարզորոշ զգացում է ռոմանական ձեռագրերի ազդեցութիւնը, տե՛ս Վ. Ղազարեան, Ինքնանկարը հայ մանրանկարչութեան մէջ, էջ 32։

պատկերել է միեւնոյն մանրանկարում կաթողիկոսի կողքին՝ արդէն փոքր-ինչ աւելի մեծ չափերի, քան Երուսաղէմի Աստուածաշնչում: Նոյն հագուստն ու գլխարկն ենք տեսնում աւելի ուշ՝ 1343 թ. նկարազարդուած Դուբլինի Չեսթեր Բիթի գրադարանի Աւետարանի ինքնանկարում՝ կրկին ձեռագրի պատուիրատուի՝ Տիրացուի հետ նոյն մանրանկարում (13բ, նկ. 5):

Ուշագրաւ է, որ հետզհետէ նկարիչը սկսում է աւելի մեծ չափերի անել իր ինքնանկարները. ամենավաղ թուագրուող Երուսաղէմի 1323 թ. Աստուածաշնչի ինքնանկարն ամենափոքրն է, իսկ ամենամեծը 1343 թ. Դուբլինում պահուող ձեռագրում է, որտեղ ծաղկողն արդէն չափերով հաւասարուում է ձեռագրի պատուիրատուին: Կարծում ենք՝ տարիներով վաստակած անունը, յարգանքը եւ պատկառելի տարիքը նկարչին արդէն թոյլ էին տալիս իրեն պատկերել ձեռագրերի պատուիրատուների հետ հաւասար՝ նոյն դիրքերում:

Ինչպէս տեսնում ենք, Պիծակը ոչ միայն ինքնանկարի, այլեւ պատուիրատուների դիմանկարների մեծ վարպետ է: Միայն իր նկարազարդած ձեռագրերից առայժմ մեզ յայտնի են գրեթէ մէկ տասնեակի հասնող պատուիրատուների դիմանկարներ, դրանք են՝ Վենետիկում պահուող Հ^մ 107 Անտիոքի օրինագրքի պատուիրատու Լեոն Ե. (Դ.) արքայի պատկերը, 1346 թ. Երուսաղէմի Հ^մ 1973 Աւետարանի Մարիոն թագուհու դիմանկարը՝ «Խաչից իջեցումը» տեսարանում, ՄՄ 2627 Աստուածաշնչի պատուիրատու Յակոբ կաթողիկոսի դիմանկարը, Բրիտանական գրադարանի Or. 13804 ձեռագրում Յովհաննէս պատուիրատուի դիմանկարը՝ ծնկի իջած Տիրամօր եւ Մանուկ Յիսուսի առջեւ, 1342 թ. Չեսթեր Բիթի գրադարանի Հ^մ 614 ձեռագրի պատուիրատու Տիրացուի դիմանկարը՝ ծնկի իջած Քրիստոսի առջեւ, Երուսաղէմի Հ^մ 1930 Աստուածաշնչի պատուիրատու Ստեփաննոս եպիսկոպոսի դիմանկարը, 1332 թ. Երուսաղէմի Հ^մ 2649 Աւետարանի պատուիրատու Գրիգոր քահանայի եւ Վենետիկի Հ^մ 97/16 Աւետարանի պատուիրատու Սարգիս քահանայի դիմանկարները: Սա կրկին բացառիկ երեւոյթ է, որ եւս մէկ անգամ շեշտում է Սարգիս Պիծակ նկարչի ունեցած ուրոյն տեղը հայկական մանրանկարչութեան մէջ եւ ողջ միջնադարեան արուեստում, ինչպէս նաեւ ազգագրական եւ պատմագրական հարուստ նիւթ է հետազօտողների համար:

Պիծակը պատուներն էր ստանում ոչ միայն թագաւորական ընտանիքի անդամներից, բարձրաստիճան հոգեւորականներից եւ ազնուականներից, այլեւ իր աստիճանն ունեցող քահանաներից³¹: Սարգիս Պիծակի ձեռագրերում նաեւ պատմական այլ անձանց դիմանկարներ ենք տեսնում, ինչպէս օրինակ՝ ՄՄ 9554 1337 թ. Մանրուսմունքի անուանաթերթի վրայ զետեղուած եւ մեծ արժէք ներկայացնող Ներսէս Շնորհալու դիմանկարը³², Մարիոն թագուհու դուստր Ֆիմի արքայադստեր ենթադրուող երկու դիմանկարները 1346 թ. Երուսաղէմի Հ^մ 1973 ձեռագրի 8բ եւ 114ա թերթերում³³ եւ այլն:

Այսպիսով, Երուսաղէմի 1323 թ. Հ^մ 1930 Աստուածաշնչի 437բ էջի դիմանկարի եւ Սարգիս Պիծակի միւս ձեռագրերից պահպանուած ինքնանկարների համեմատութեան արդիւնքում մեզ պարզ դարձաւ, որ այստեղ մենք գործ ունենք կիլիկեան հռչակաւոր ծաղկողի թուով չորրորդ նորայայտ ինքնանկարի հետ: Մինչ այս իր երեք ինքնանկարներով նա արդէն յայտնի էր որպէս առաւել շատ ինքնանկարներ թողած միջնադարեան հայ ծաղկողներից մէկը:

³¹ Վ. Ղազարեան, Սարգիս Պիծակ, էջ 10:

³² Նոյն տեղում, էջ 58:

³³ S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p.146.

Առաւել ուշագրաւ է այն, որ Երուսաղէմի Աստուածաշնչի Սարգիս Պիծակի ինքնանկարը ժամանակագրական առումով մեզ յայտնի ամենավաղ թուագրուողն է (այսպէս՝ ա. 1323 թ. Երուսաղէմի Հմր 1930 Աստուածաշունչ՝ էջ 437բ, բ. 1331 թ. Վենետիկի Հմր 97/16 Աւետարան՝ 193բ, գ. 1338 թ. ՄՄ 2627 Աստուածաշունչ՝ 422բ, եւ դ. 1343 թ. Դուբլինի Չեսթեր Բիթիի Հմր 614 Աւետարան՝ 13բ), եւ դրանով եւս մեր ձեռագիրը բացառիկ արժէք ու կարեւորութիւն է ստանում:

Սարգիս Պիծակի ձեռագրերում հանդիպող գրեթէ տասնեակի հասնող պատուիրատուների դիմանկարների եւ պատմական անձանց՝ այդ թւում թագաւորների, թագուհիների, ազնուականների եւ կաթողիկոսների դիմանկարների նման առատութիւնը կիլիկեան հռչակաւոր նկարչի բեղմնաւոր գործունէութեան եւ բացառիկ տաղանդի մասին են վկայում:

Գնահատանքի է արժանի այն, որ Սարգիս Պիծակն իր ընդօրինակած եւ ծաղկած գրեթէ բոլոր ձեռագրերը ստորագրում է՝ յաւերժացնելով իր անունը, եւ ի հարկէ թողնում է իր ինքնանկարները, ինչը նոր երեւոյթ էր կիլիկեան գրքարուեստում եւ ոչ յաճախ հանդիպող երեւոյթ տուեալ ժամանակաշրջանի հայ ծաղկողների մօտ: Ուշագրաւ է, որ Պիծակն իրեն պատկերել է բոլոր տարիքներում՝ մի քանի տարին մէկ՝ երիտասարդ, միջին եւ ծեր հասակներում՝ փոխանցելով իւրաքանչիւր տարիքին բնորոշ անհատական յատկանիշները՝ արտաքին տեսքի փոփոխութիւնից մինչեւ հագուկապ: Դա մի հազուագիւտ երեւոյթ է հայկական միջնադարում, որ կրկին խօսում է Սարգիս Պիծակ նկարչի վառ անհատականութեան եւ ինքնատիպութեան մասին:



Նկ. 1 1930_437բ, Պողոս Առաքեալ եւ Ստեփաննոս
Եպիսկոպոս



Նկ. 2 Երուսաղէմ 1930_6բ, Դաիթ թագաւոր



Նկ. 3 Երուսաղեմ 1930_325ա, Դուկասի Ա.
անուանաբերը



Նկ. 4 Երուսաղեմ 1930, 437բ, Սարգիս Պիծակի նորայայտ
ինքնանկարը



Նկ. 5 Սարգիս Պիծակի չորս
ինքնանկարները



Նկ. 6 Վենետիկի Հմր 97_16, Սարգիս Պիծակ ծաղկող՝ 19բ և Սարգիս
ֆահանայ՝ պատուիրատու՝ 193բ




Նկ. 7 ՄՄ 2627-422բ, Սարգիս Պիծակի ինֆանկարը:



Նկ. 8 Երուսաղեմի Հմր 2649 Գրիգոր Բահանայ եւ Վենետիկի Հմր 97_16 Սարգիս Բահանայ:

ՈՎՍԱՆՆԱ ՔԷՇԻՇԵԱՆ

Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի աւագ գիտաշխատող, ասպիրանտ



ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ «ՍԻՈՆ»-Ի****ՆՈՐ ՇՐՋԱՆ****1927 – 2022****1996****ԱՅԼԵԻԱՅԼԸ**

Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց
Բեթղեհէմի Աստղին լոյսը՝ Ս. էջմիածնի պրիս-
մակէն – 3:

Թ.Ա.Մ.- Ծննդեան պատգամ Բեթղեհէմէն – 7:
Patriarch Torkom Manoogian.- Armenian
Christmas in Bethlehem (19 January 1996) – 10:

Ի՞նչ է «Զգօն» գիրքը – 162:

Ասացուածք – 443:

Խորեն Ա. Մուրադբեկեան Կաթողիկոս Ամե-
նայն Հայոց (1873-1938) – 485:

- Մարգարէն – 419:

Յովհաննէս Շիրազ.- Յաւերժական հայրե-
նիքը – 31:

Ուիլիլմ Տրամընտ Օֆ Հոթհօրնտըն (Թարգ.
Շէն-ՄԱՀ).- Գիրքը – 32:

- The Book – 33:

Բագրատունի.- Աստղային եթեր – 34:

- Անքնութիւն – 167:

- Լուռ գիշեր – 422:

Ralph Waldo Emerson.- Good-Bye – 164:

- Մնաս Բարով (Թարգ. Շէն-ՄԱՀ).- 165:

Վահագն Դաւթեան.- Գրիգոր Նարեկացու
հետ – 299:

Max Ehrmann.- Desiderata – 302:

- Ըղձանքներ (Թարգ. Շէն-ՄԱՀ).- 303:

Henry Holcomb Bennett.- The flag goes by –
420:

- Դրօշակն է կ'անցնի (Թարգ. Շէն-ՄԱՀ).- 421:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Արշալոյս Ղազինեան.- Մատենի քնարա-
կան հերոսը – 35:

- Արտայայտչական միջոցների համակար-
գը – 168, 307, 423:

Ն. Արք. Ծովական.- Տիպար տաղեր եւ եղա-
նակներ – 41:

Արմինէ Քէօշկէրեան.- Գիրքերու գիւտը՝ հայ
եւ օտար մասնագէտներու գնահատմամբ – 311:

Ռաֆայէլ Իշխանեան.- Հայութիւն հանաժ
հայոց լեզու, չիք հայութիւն – 321:

Վարդան Ա. Քհնյ. Տիւկէրեան.- Փոփոխու-
թեան սիրահարները – 323:

Հ. Ղ. Միրզոյեան.- Ինքնակենսագրական նո-
րայայտ փաստեր Գրիգոր Տղայի մասին – 427:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Տ. Արտէն Ա. Քհնյ. Աշճեան.- Ազգապատում
Դ. Հատոր Ա. Գիրք (Տ. Զաւէն Արզումանեան)
– 59:

Զենոբ Քհնյ. Նալպանտեան.- Բաղձալի հաշ-
տութիւն. A Pastoral Letter to the Armenian
Faithful, Հեղինակ՝ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս
Պարսամեան – 64:

Վարդան Դեւրիկեան.- Հայկական վարքեր
եւ վկայաբանութիւններ (Քնարիկ Տէր-Դաւ-
թեան) – 184:

Կարպիս Եսայեան.- Պատմագիտական հրա-
տարակութիւն մը (Հայկական Յեղասպանու-
թեան Պատմութիւնը. Վահագն Ն. Տատրեան)
– 187:

- Ուշագրաւ հրատարակութիւն մը (Ուիլիլմ
Շէյքսպիր – Հնչեակներ) – 444:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Lord Byron (Թարգ. Մուրաւ Մանուկեանի).-
Հարուտի որդւոյն պանդխտութիւնը – 29, 163,
301, 418:

Անել.- Անմահութիւն – 30:

- Երուսաղէմ վերադառնալ – 166:

- Վիշտն անլեզու տիեզերքին – 306:

Միսաք Գաբրիելեան.- Փորագրութեան նոր տեսակով (Գրիգոր Տաթեւացու «Գիրք հարցմանցի» վերահրատարակութեան առիթով) – 189:

Ն. Ա. Ծովական.- Աստուածածնի մասին, Հեղինակ՝ Թամար Տասնապետեան, 544 էջ – 191:

ԳՐԱԿԱՆ

Սարգիս Եսփուճեան.- Աղստեւի հովտում – 50, 176:

- Տիրան Զրաքեան (Ինտրա) 1875-1921, Ծննդեան 120-ամեակի առիթով – 337:

Ազատ Եսփուճեան.- Ինտրայի քերթողութիւնը – 341:

Տ. Արտէն Ա. Քհնյ. Աշճեան.- Ի խնդիր անգլատանելի հայ գերեզմաններու – 56:

Թորգոմ Արք. Մանուկեան.- Շնորհալին քերթող – 326:

- Շնորհալին՝ Հոգեգիր Հայրապետը – 439:

Զաքարիա Քհնյ. Սարիբէկեան.- Ամանորեան Երազ – 342:

Ն. Ուզունեան.- Ո՞րն է հայերէնի վերջին բերդը – 442:

ԵԿԵՂԵՅԱԳԻՏԱԿԱՆ

Նորվան Եպս. Զաքարեան.- Հայ եկեղեցին իբրեւ ինքնութեան բեւեռ – 67:

Յակոբ Եպիսկոպոս Գըլընճեան.- Աստուածային արարչագործութիւնն ու բարեշրջական (էվոլուցիոն) վարդապետութիւնը – 344:

Ա. Աւետիսեան.- Սրբապատկեր – 448:

Վարդան Ա. Քհնյ. Տիւլկէրեան.- Միասնականութիւնը միայն բառ չէ... – 450:

ԵՐԱԺԵՏԱԿԱՆ

Արամ Քերովբեան.- Հայկական եկեղեցական երգեցողութիւն, Համակարգը եւ ներկայ վիճակը – 73:

Միմի Յ. Եղկաթեան.- Հայ երգի ինքնուրույնութիւնը – 192:

Սելմա Քէքլիկեան.- Հոգեկանը խմբային երաժշտութեան մէջ – 353:

- Ինչպէս ունենդրել երաժշտութիւնը – 453:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սուրբ Միլոտնի ծագումն ու իմաստը – 460:

ԿՐՕՆԱԿԱՆ

Տ. Զաւէն Արք. Զինչինեան.- Իգնատիոս Եպիսկոպոսի Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին ըստ Ղուկասու – 14, 139, 279, 397:

Գուսան Վրդ. Ալճանեան.- Անառակին զղջումը – 21:

Տ. Զաքարիա Քհնյ. Սարիբէկեան.- Խորհրդաւոր գիշեր «Պատմութիւն փոքրիկիս» – 24:

Բաբգէն Թօփճեան.- Եկեղեցւոյ անկախութիւնը – 26:

- Քրիստոսի Յարութեան խորհուրդը – 160:

Անուշաւան Մ. Վրդ. Զղջանեան.- Նոր Տարին – 28:

Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց.- Յարութիւն ի վերայ երկրի եւ ի յերկինս – 135:

- Տօն Երեւման Սուրբ Խաչի – 275:

- Միւռոն Վերածննդեան – 393:

Թ.Ա.Մ.- Վերագտնել երանական կեանքը – 151:

Զենոբ Քհնյ. Նալպանտեան.- Հոգենորոգութեան կենսականութիւնը – 154:

- Լուռ Վկաներ – 291:

- Հաւատաբուժութիւն – 411:

Վաչէ Մ. Վրդ. Իգնատիոսեան.- Աստուածամօր Վերափոխումը – 408:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Տ. Գուսան Վրդ. Ալճանեան.- Թորգոմ Պատըրիարք Հօր աչցը Աթէնք – 109:

Ներկայ մը.- Հայ Երուսաղէմը օտար ունկնդիրներուն – 112:

Բագրատ Արեղայ.- Յուցահանդէս – 113:

- Ամանորը ժառանգաւորաց Վարժարանի մէջ – 113:

Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան Հընդկահայ գաղութին հետ – 114:

Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց.- Միւռոնօրհնէք ի Մայր Աթոռ – 211:

- Հայրապետական Տնօրինութիւն Հայաստանի Հանրապետութիւնում Հայաստանեայց Եկեղեցու թեմական կառուցուածքի նոր դրութեան մասին – 212:

Սարգիս Եսփուճեան.- Հրաւէր Հայ Սաղէմի սրբավայրերից – 215:

Ծովակ Աւագեան.- Եղեռնէն Արցախ – 218:

Դաւիթ Արք. Սահակեան.- Վեհափառ Հայրապետի աչցը Կ. Պոլիս – 232:

Հանդիսատես մը.- Հայ Լուսանկարիչներ – 233:

Ընծանուէր Աբղ. Բաբախանեան.- Իւղաներկ նկարներու ցուցահանդէս – 234:

Գէորգ Թօսունեան.- Հանդիսատեսը ներսը (Նորայր Արք. Պողարեանին) – 236:

Հայոց Եկեղեցւոյ Արեւմտեան թեմ. Գերաշնորհ Տ. Վաչէ Արք. Յովսէփեան վերընտրուեցաւ Արեւմտեան թեմի առաջնորդ – 238:

Տ. Արտէն Ա. Քհնյ. Աշճեան, Վահէ Օշական, Թորգոմ Արք. Մանուկեան.- Վարդան Սարգսեանի նամականիին առիթով – 239:

Ամավերջի հանդեսներ Ս. Թարգմանչաց Վարժարանի – 243:

Բագրատ Աբեղայ Պուրճէքեան.- Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի ամավերջի հանդէս – 254:

Շառլ Ազնաւուր Երուսաղէմի մէջ – 269:

Յանկ Կիւլպէնկեան Մատենադարանին կողմէ ստացուած գիրքերու (Յաւելուած) – 270, 387, 481:

Արշակ Մադոյեան.- Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանը – 365:

- Սիրոյ քո հուր արկեալ յերկիր – 366:

- Պղծեալ Տաճարի Արարողութիւնը – 367:

Քնարիկ Աւետիսեան.- Աստուածամօր հնագոյն պատկերները հայ արուեստում – 369:

Փիթըր Քաուրի.- Նիւ Եորքի առաջնորդարանին մէջ գումարուած միջազգային գիտաժողովին կը քննարկուի «Ս. Գրոց աւանդութիւնը հայոց մօտ» նիւթը – 372:

Եկեղեցական հանդիսութիւններ Մայր Աթոռէն ներս – 462:

Երուսաղէմի Առաքելական Ս. Աթոռի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան Նիւ Եորք այցելեց – 464:

Christopher H. Zakian.- The traces of 2000 years attest to the vital Armenian presence in Jerusalem – 472:

Նիւ Ճըրզի նահանգի կառավարիչին այցը եւ Վահագն Յովնանեանի 5000 տոլարի նուէրը Սրբոց Թարգմանչաց Վարժարանին – 478:

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

Abraham Terian.- Armenian Writers in Medieval Jerusalem – 82:

Արտաշէս Մաթեոսեան.- Ձեռագիր Յուշարձանի երկրորդ կեանքը. Լոյս տեսաւ հայերէն

հնագոյն Թղթեայ ձեռագիրը լուսատիպ նման-հանութեամբ – 198:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆՔ

Շնորհաւորական հեռագիրներ՝ յղուած Ս. Աթոռէն – 115, 222:

Շնորհաւորական գիր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսէն – 118, 223:

Շնորհաւորական գիր՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանէն – 119, 224:

Շնորհաւորական գիր՝ Հռոմի Սրբազան Քահանայապետէն – 120, 225:

Շնորհաւորական գիր՝ Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս Եկեղեցւոյ Սրբազան Պատրիարքէն – 121, 226:

Շնորհաւորական գիր՝ Կ. Պոլսոյ Պատրիարքէն – 122, 227:

Շնորհաւորական գիր՝ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան նախագահ Տիար Ռօպերթօ Կիւլպէնկեանէն – 227:

Շնորհակալութեան գիր եւ հեռագիրներ՝ Թորգոմ Պատրիարք Մանուկեանի կողմէ Յորդանանի Հիւսէյն Թագաւորին.- Նախագահ Եասէր Արաֆատին.- Բեթղէհէմի կառավարիչին եւ ոստիկանապետին.- Իսրայէլի նորընտիր Վարչապետ Բենիամին Նաթանեահուին (Անգլեմէն լեզուով) – 228:

Հեռագիր Յորդանանի վսեմաշուք Հիւսէյն Թագաւորին – 377:

ՊԱՏՄԱԿԱՆ

Աւետիս Աբեղայ Իփրաճեան.- Գեղերի նամակը Արշակ Տ. Միքէլեանին – 103:

Մամբրէ Վրդ. Մարկոսեան.- Ս. Երուսաղէմի Սրբոց Յակովբեանց Ազգային վանքը եւ Նորաներկայ վիճակը – 202:

- Ս. Երուսաղէմի կրօնական եւ ազգային նշանակութիւնը – 354:

- Ս. Երուսաղէմի մէջ մեր ազգային իրականաց վերայ ո՞վ կը հսկէ – 454:

Շնորհք Պատրիարք Գալուստեան.- Ի՞նչ է սրբութիւնը – 459:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Յունուար-Մարտ – 123:

Ապրիլ-Յունիս – 262:

Յուլիս-Սեպտեմբեր – 378:

Հոկտեմբեր-Դեկտեմբեր – 475:

Դաւիթ Արք. Սահակեան.- Բարեպաշտական նուէրներու ցանկը 1995 տարւոյ – 130:
- Բարեպաշտական նուէրներու ցանկը 1996 տարւոյ – 479:

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

Սահակ Աբղ. Մաշալեան.- Տարեկան տեղեկագիր տեսչութեան Սրբոց Թարգմանչաց Երկրորդական վարժարանի (8 Յունիս, 1996) – 244:
Աւետիս Աբղ. Իփրաճեան.- Սրբոց Թարգմանչաց Երկրորդական վարժարանի 1995-1996 ուսումնական տարեշրջանի տնտեսական տեղեկատուութիւն – 250:
Բագրատ Աբղ. Պուրճէքեան.- Տեղեկագիր ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարա-

նի 1995-1996 տարեշրջանի (9 Յունիս 1996) – 255:

ՏԵՐՈՒՆԻ

Արտէն Ա. Քհնյ. Աշճեան.- Տիպար Եկեղեցասէր Ամերիկահայ մը՝ Միհրան Կօշկարեան (Խանգուցեալ) – 235:
Գրիգոր Վրդ. Մագսուտեան.- Մահախօսական. Վազգէն Բարսեղեան – 258:
Մահագրութիւնք. Ալեք Մանուկեան միջազգային բարերար (1901-1996) – 382:
Թորգոմ Պատրիարք Մանուկեան.- Յաւակցական նամակ Տիկին Լուիզ Սիմոնին եւ Ռիչրտ Մանուկեանին – 384:
Ա.Ն.- Սեդրակ Պալեան (1922-1996) – 385:

1997

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Սարգիս Ֆ. Փափագեան.- Մեծ եւ փոքր վարդանի առեղծուածք – 242:
Պատրիարք Սրբազան Հօր զեկոյցը Միաբանական ժողովին, 4 Նոյ. 1997 – 378:
- 99 տարի վարձու տրուած երեք կալուածներու վերանկատում – 384:
- Կալուածոց մատակարարման մարմնի նըշանակում եւ ուղեցոյց կանոններ – 391:

- Հնչեակ 43 (Թարգ. Շէն-ՄԱՀ) – 41:
Ralph Waldo Emerson.- Good-Bye – 188:
- Մնաս Բարով (Թարգ. Շէն-ՄԱՀ).- 189:
Վահէ Վահեան.- Կարօ՛ւտ զուարթ բաներու – 191:
Եղիշէ Չարենց.- Պատգամը – 416:
Յովհաննէս Թումանեան.- Ընտրեալը – 417:
John Keats.- Sonnet on fame – 418:
- Սօնէթ համբաւի մասին (Թարգ. Շէն-ՄԱՀ).- 419:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Արշալոյս Ղազինեան.- Լեզուի պատկերաւորութեան միջոցների համակարգը – 26, 193, 422:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Lord Byron (Թարգ. Մուրադ Մանուկեանի).- Հարուտի որդւոյն պանդխտութիւնը – 19, 187:
Arthur Hagopian.- The Veil Unveiled – 20:
- Քօղազերծուած քօղը (Թարգ. Շէն-ՄԱՀ) – 21:
Անել.- Հայու ցաւ – 24:
- Կալանաւոր Երուսաղէմ – 190:
- Հեշտաբարբառ «Եղիցի»-ն – 420:
Բագրատունի.- Տիբերական – 25:
- Զիս մի թողուր Տէր – 192:
- Լսէ ձայնը սրտիդ – 421:
Միշա Սվարեան.- Դիմանկարս – 25:
Ուրիշմ Շէքսպիր (Թարգ. Վահան Թէֆէեան).- Հնչեակ LXXIV – 40:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Ա. Գ. Մադոյեան.- Նորայր Արքեպիսկոպոս Ծովական «Վանատուր. Բանասիրական յօդւածներու ժողովածոյ» Երուսաղէմ, 1993, 415 էջ – 327:
Կարպիս Եսայեան.- Տեսիլք Արարատի. Հեղինակ՝ Քրիսթըֆըր Ուօքըր – 427:
Hadas Lahav.- The Armenian Holocaust Israeli Denial the Banality of Indifference, by Yair Auron – 430:

ԳՐԱԿԱՆ

Լեւոն Հախվերդեան.- Խորին յարգանք գրարին հանդէպ – 32:
Մարգալետ Մարկոսեան.- Անդրանիկը եւ եռագոյնը – 33:
- Զարեհ Մելքոնեան՝ սփիւռքահայ գրող ու գործիչ – 436:
Կարպիս Եսայեան.- Վերյուշ մը անցեալէն – 38, 240:

Ժեռար Պէսիէն (Թարգ. Սիլվի Սըղըրթնեան).- Դիտելով ջուրի կաթիլ մը – 199:

Խաչատուր Վարդանեան.- Մատեան «Տոհմային գիտութեան» - 200:

Տիգրան Դերիկեան.- Եղիշէ Զարենց-100 Պատմութեան եւ իր ապրած ժամանակի համադրմամբ (Գրիգոր Խլաթեցի - Եղիշէ Զարենց) - 432:

ԵԿԵՂԵՅԱԳԻՏԱԿԱՆ

Գէորգ Թօսունեան.- Աստուածաշունչի հայկական համաբարբառները - 43:

Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան.- Երկու կանոններ վարդապետութեան աստիճաններու - 204:

Յակոբ Քէօսէեան.- Երկաբնականների հարցումը մեզ - 208:

Քնարիկ Աւետիսեան.- «Աստուածամօր Եօթ Վէրքը» կտաւ - 449:

Պատասխանը - 452:

Զենոբ Քհնյ. Նալպանտեան.- Ծրագրաւուծում - 453:

Մեր հինաւորաց զրոյցներից. Աբեղան եւ Թոյնը - 457:

ԵՐԳԻԾԱՆՔ

Թէ որքան խրթին կարող է լինել գրաբարը - 50:

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

Ն. Եաղլեան.- Կրօնք եւ գիտութիւն - 211:

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

Զենոբ Քհնյ. Նալպանտեան.- Հրաշեայ Աճառեան եւ Լոզուաբանական Անդրադարձներ - 221:

Վազգէն Գ. Համբարձումեան, Արմէն Գ. Տէր-Ստեփանեան.- Ս. Յակոբեանց վանքի ձեռագրերի ցուցակը հայոց լեզուի պատմութեան ուսումնասիրութեան աղբիւր - 302:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿՈԶ - Նորայր Արք. Պողարեանի աշակերտած հոգեւորականներուն եւ գրչի մշակներուն, որ հանգուցեալին վերաբերեալ իրենց յուշերը գրի առնեն Սիրոնի համար - 145:

ԿՐՕՆԱԿԱՆ

Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց.-

«Աստուած ընդ մեզ» եւ մենք՝ առ աստուած - 3:
- Զատկական պատգամ. Յարութիւնը՝ կեանքի ուղեցոյց - 153:

Թ.Ա.Մ.- Ծննդեան պատգամ Բեթղեհէմի - 7:
- Տագնապին դէմ - 397:

Patriarch Torkom Manoogian.- Armenian Christmas in Bethlehem - 10:

Անուշաւան Ծ. Վրդ. Զղաճեան.- Նոր Տարին - 12:

- Վարդանանց հերոսամարտը - 166:

Բաբգէն Թօփճեան.- Յակոբոս Տեառնեղբայր - 13:

Էմմանուէլ Աբդ. Աթաջանեան.- Քրիստոսի հրաշագործութիւնները - 16:

Զաւէն Արք. Զինչիւնեան.- Աղօթք - 157:

- Իգնատիոս Եպիսկոպոսի Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին - 402:

Վարդան Ա. Քհնյ. Տիւլկէրեան.- Խաչը եւ Յարութիւնը - 167:

- Հովիւր եւ հօտը - 412:

Ալպէն Նորատունկեան.- Աստուած Անվիշտ եւ Անայլա՞յլ Թէ Տառապող ու Վշտահար - 170:

Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեան.- Արտաքսման Կիրակին, Բ. Կիրակի Մեծ Պահոց, Քառասնորդաց - 178:

Զաքարիա Քհնյ. Սարիբէկեան.- Փարիսեցին եւ Մաքսաւորը - 183:

Robert W. Thomson.- Mxit'ar Goš and Canon-law - 287:

Պարոյր Մուրադեան.- «Կարքեդովն/Քաղկեդոն» ընթերցումը վաղմիջնադարեան աղբիւրներում - 306:

Fr. Krikor Maksoudian.- The Passion of Saint Shushanik - 329:

Բագրատ Վրդ. Պուրճէքեան.- Ան որ համբերէ - 407:

Տ. Ընծանուէր Աբդ. Բաբախանեան.- Ապաշխարանք ու Սէր - 410:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ամենայն Հայոց Հայրապետի այցը Հռոմի Պապին - 95:

Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց.- Քրիստոնէական համագործակցութիւն - 97:

Ս. Յարութեան Տաճարի ներքին գմբէթի նկարազարդում - 102:

History of the Holy Sepulchre - 103:

Մ. Հայկենց.- Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ - 124:

- Վտանգը իրական է – 238:
 - Առանձին չես, Երուսաղէմ – 462:
 Ս. Թարգմանչաց Վարժարանի Կաղանդի հանդէսները – 126:
 Ամսվերջի հանդէսներ Ս. Թարգմանչաց Վարժարանի – 470:
 Կաղանդը ժառանգաւորաց Վարժարանի մէջ – 127:
 Ժառանգաւորաց Վարժարանի Ամսվերջի հանդէս – 471:
 Յանկ Կիւլպէնկեան Մատենադարանին կողմէ ստացուած գիրքերու (Յաւելուած) – 148, 258, 490:
 Ն.- Պատրիարք Սրբազան Հօր այցը Յորդանան եւ Դամասկոս – 243:
 Հայ Երուսաղէմի նպաստը Հայաստանի երկրաշարժի շրջանին – 254:
 Նորայր Արք. Պողարեանի Երուսաղէմ, Անթիլիաս եւ Միացեալ Նահանգներ տպուած հրատարակութիւնները – 351:
 Արմինէ Քէօշկէրեան.- Հաճկատար Սուրբ Աստուածածնի Վանքը – 458:
 Արա Աւագեան.- Անգլերէն նամակ.- Gematrio – 459:
 Ա.- Գալուստ Կիւլպէնկեան Մատենադարան – 471:
 Գ.- Պատրիարք Սրբազան Հօր այցը Նիւ Եօրք – 472:
 Դ. Վ.- Ամերիկայի Եկեղեցիներու Խորհուրդի այցը – 473:
 Անուշաւան Ծ. Վրդ. Զղջանեան.- Պարգեւատրում Տ. Դաւիթ Արքեպս. Սահակեանի – 474:
 Ներկայ մը.- Անելին 50 ամեակն ու պարգեւատրումը – 475:
 Հաղորդագրութիւն Միաբանական Ժողովի (7 Նոյեմբեր 1997) – 476:
 Յարութիւն Սրկ. Յարութիւնեան.- Գէորգեան Ճեմարանի հիմնադրումը եւ հետագայ ընթացքը.- Հոգեւոր Ճեմարանն այսօր – 478:

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Հանգիստ Տ. Նորայր Արքեպս. Պողարեանի Միաբանի Ուխտին Սրբոց Յակոբեանց (1904-1996) – 144, 263:
 Մահազդ Տիար Տիրան Ոսկերիչեանի «ծընեալ Կարին» 1912-1997 – 146:
 Վահէ Օշական.- Մահախօսական Տիար Տիրան Ոսկերիչեանի – 146:

Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց.- Նորայր Արքեպիսկոպոս Պողարեան Հաւատարմագոյն Սպասաւոր Հայց. Ս. Եկեղեցւոյ – 265:
 Թորգոմ Արք. Մանուկեան.- «Ես պէտք է մեռնիմ» – 267:
 Զաւէն Արքեպսկ. Զինչինեան.- Ճշմարիտ վանականը հոգեւոյ Տ. Նորայր Արքեպսկ. Պողարեան – 269:
 Ռազմիկ Վրդ. Պօղոսեան.- Մահուան հետ հաշտուած – 273:
 Ա.Ա.Ի.- Երանաշնորհ Նորայր Արք. Պողարեան – 275:
 Գրիգոր Ոսկանեան.- Նորայր Ծովականի Յիշատակին – 278:
 Տքթ. Անուշ Նազգաշեան.- 20-րդ դարու մագաղաթը... – 281:
 Նահապետ Մելքոնեան.- Ուսուցչիս Երջ. Տ. Նորայր Արք. Պողարեանի Յիշատակին – 283:
 Բաբգէն Թօփճեան.- Նորայր Արք. Պողարեան (1904-1996) – 285:
 Մամուլ Դիւան Մայր Աթոռի.- Վախճանուեց Նորայր Արք. Պողարեանը – 352:
 Աւետիս Աբեղայ Իփրաճեան.- Անձնական յուշեր – 354:
 Յաւակցական նամակներ – 358-373:
 Նորայր Արք. Պողարեան. Նկարներ – 374:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆՔ

Շնորհաւորական հեռագիրներ՝ յղուած Ս. Աթոռէն – 127, 244:
 Շնորհաւորական գիր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսէն – 128, 245:
 Շնորհաւորական գիր՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանէն – 129, 246:
 Շնորհաւորական գիր՝ Հոռոմի Սրբազան Քահանայապետէն – 130, 247:
«**Սարմատացոց** աշխարհին հասարակն է՝ որ բաժանեալ է արեւելեան ծայրին Ռիպիա լեռամբ եւ Տաւնաւիս գետով եւ Միովտիս ծովակաւ. եւ անտի ընդ **Կովկասային լեռինս** առ Վրաւք եւ Աղուանիւք մինչեւ ցԿասբից ծովն: Եւ ունի **Սարմատիա** լեռինս **զՇանթայինն** եւ **զՁիականն**, եւ այլ լեռինս եւ գետս բազումս, եւ զեւթանասնավտակեանն էթիլ, յորում ամրանան ազգ Բասլաց: Եւ բնակին ի Սարմատիա ազգք բազումք որք են այսոքիկ. **Խազիրք**, **Բուշք**, **Բասլիկք**, **Ապշեդք**, **Ապխազք**, **Թագաւորական Սարմատք**, **Ձիակերք**, **Նախճամատեանք**, **Որջլակերք**, **Սիւռիկացիք**, **Միթռիկացիք**, **Ամազոնք**, **Ալանք**, **Խեբարք**. **Քուրետք**, **Սկիւմիք**, **Արգաւետք**, **Մարգուլք**, **Թակոցիկք**, **Արգոզք**, **Դաճանք**, **Փինճք**, **Դուալք**, **Հոնք**, **Ափուլք**, **Ծանարք** յորում **Ալանաց դուռն**, եւ **Ծեքան դուռն**, **Թուշք**, **Խուշք**, **Քուստք**, **Մարդակերք**, **Յիսաւատք**, **Գուգամակարք**, **Դուիճիկք**, **Դիդոք**, **Ղեկք**, **Կատապաստիանք**, **Աղուտականք**, **Խենուկք**, **Շիդեայք**, **Ճիւղայք**, **Խեղայք**, **Կասբք**, **Փուխք**, **Շրուանք**, **Խարանք**, **Թաւասպարք**, **Հեճմատակք**, **Իժմախք**, **Փասխք**, **Փուսխք**, **Փիքոնակք**, **Բաքանք**, **Մասքութք**, մինչեւ ցԿասբից ծովն՝ յոր եւ բազուկն **Կովկասայ** հպի, ուր ածեալ է զպարիսպն Դարբանդայ աշտարակ ահագին ի ծովուն կացեալ: Իսկ ի հիւսիսոյ նոցա Հոնք, եւ քաղաք նոցա Վառաշան, եւ այլք ընդ նմա. եւ թագաւորն հիւսիսոյ է Խաքանն՝ որ է տէր Խազրաց, եւ դշտոյն թագուհի կին Խաքանայ ի Բասլաց ազգէն:

²¹ Մատենագիրք Հայոց, Ե դար, Հատոր Բ, էջ 2170-2171:

ՅԱՂԱԳՍ ԱՆԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍՏՈՅԳ

(Համառոտ խմբագրություն)²²

«Քսան եւ երեքերորդ՝ Սարմատացոց աշխարհն հասարակն է, որ բաժանեալ է արեւելեան ծայրին Ռիպիա լերամբ եւ Տանայիս գետով եւ Միոտիս ծովակաւ, եւ անտի ընդ Կովկասային լերինս՝ առ Վրաւք եւ Աղուանիւք՝ մինչեւ ցԿասբից ծովն։ Եւ ունի Սարմատիա լերունս զՇանթայինն եւ զՁիականն, եւ այլ լերինս եւ գետս բազումս, եւ զեւթանասնավտակեանն Աթըլ, յորում ամրանայ ազգն Բասլաց։ Եւ բնակին ի Սարմատիա ազգք բազումք, որք են այսոքիկ. Խազիրք, Բուխք, Բարսիլք, Ապշեղք, Ափխազք, Թագաւորական Սարմատք, Ձիակերք, Նախնամատակեանք, Որջլակերք, Սիսիկացիք, Միթսիկացիք, Ամազոնք, Ալանք, Խեբուրք, Քուգետք, Սիյիմք, Արգաւետք, Մարգոյլք, Թակոյիք, Արգոյլք, Գաճանք, Փինճք, Դուաղք, Խոնք, Ափուրք Ծանաւրք՝ յորում Ալանաց դուռն, եւ Ծիծեն դուռն, Թուժք, Խուժք, Քիսք, Մարդակերք, Յխաւատք, Գուդամակարք, Դուիցուլք, Դիդոյք, Ղեկք, Տապաստաւանք, Աղուտականք, Խենաւկք, Շիպղք, Ճիդաք, Խեղայք, Կասքք, Փուխք, Շրուանք, Խարանք, Թաւասպարոտք, Հենմատակք, Իժմախք, Փասխս, Քոսխ, Փոքոնակ, Բաքանք, Մազքուրք, մինչեւ ցԿասբից ծովն՝ յորս բազուկն Կովկասու հպի, ուր ածեալ է զպարիսպն Դարբանդայ՝ աշտարակ ահագին՝ ի ծովուն կացուցեալ։ Իսկ ի հիւսիսոյ նորա՝ Հոնք, եւ քաղաք նոցա Վառաշան, եւ այլք ընդ նմա. եւ Թագաւորն հիւսիսոյ է հականն՝ որ է տէր Խազրաց, եւ զշխոյն Թագուհի է, Խաթունն, որ է կին հականայ ի Բարսլաց ազգէն։

ՄՈՎՍԷՍԻ ԽՈՐԵՆԱՅԻՈՅ ԱՍՏՅԵԱԼ Է ԵՐԿՐԱԶԱՓ. ՅԱՂԱԳՍ

ԱՆԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՏԻԵՋԵՐԱՅՅ²³

(ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻՈՒ ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔԸ)

Աշխարհագիր Հատած Երկրորդ.

Աշխարհք ընդհանուր Ասիացոց քառասուն ու չորս.

Քսան եւ երեքերորդ²⁴ Սամատացոց աշխարհն հասարակն է որ բաժանեալ է արեւելեան ծայրին Ռիպիա լերամբ եւ Տանայիս գետով եւ Միստիս ծովակաւ եւ անտի ընդ Կովկասային լերինս առ Վրաւք եւ Աղուանիւք մինչեւ ցԿասբից ծովն։ Եւ ունի Սարմատիա լերունս զՇանթայինն եւ զՁիականն, եւ այլ լերինս եւ գետս բազումս, եւ զեւթանասնավտակեանն Աթըլ յորում ամրանայ ազգն Բասլաց։ Եւ բնակին ի Սարմատիա ազգք բազումք, որք են այսոքիկ, Խազիրք, Բուխք, Բարսիլք, Ապշեղք, Ափխազք, Թագաւորական Սարմատք, Ձիակերք, Նախնամատակեանք, Որջլակերք, Սիսիկացիք, Միթսիկացիք, Ամազոնք, Ալանք, Խեբուրք, Քուգետք, Սիյիմք, Արգաւետք, Մարգոյլք, Թակոյիք, Արդոյլք, Դանանք, Փինճք Դուաղք, Խոնք, Ափուրք, Ծանաւրք, յորում Ալանաց դուռն, եւ Ծիծեն դուռն, Թուժք, Խուժք, Քիոք, Մարդակերք, Յխաւատք, Գուդամակարք, Դուիցուլք, Դիդոյք Ղեկք, Տապաստաւանք, Աղուտականք, Խենաւկք, Շիպղք, Ճիդաք խեղայք, Կասքք՝ Փուխք, Շրուանք, Խարանք, Թաւասպարոտք, Հենմատակք, Իժմախք, Փասխս, Քոսխ, Փոքոնակ, Բաքանք, Մազքուրք, մինչեւ ցԿասբից ծովն՝ յորս բազուկն Կովկասու հպի ուր ածեալ է զպարիսպն Դարբանդայ՝ աշտարակ ահագին՝ ի ծովուն կացուցեալ։ Իսկ ի հիւսիսոյ նորա՝ Հոնք եւ քաղաք նոցա Վառաշան, եւ այլք ընդ նմա, եւ Թագաւորն հիւսիսոյ է Հականն, որ տէր Խազրաց եւ զշխոյն Թագուհի է Խաթունն, որ է

²² Մատենագիրք Հայոց, Ե դար, Հատոր Բ, էջ 2185-2186:²³ Ա. Մաթևոսեան, Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» Չորրորդ գիրքը, Երեւան, 1995, էջ 162-174:²⁴ Նոյն տեղում, էջ 164, 169, 171:

կին Հականայ ի Բարսիլաց ազգէն:

ՍՈՒՐԷՆ ԵՐԵՄԵԱՆ

«ԱՇԽԱՐՀԱՅՈՅՅԻ» ՍԿՋԲՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈՐՁ»²⁵

Բ. Յաղագս Ասիոյ Սարմատացոց.

Աշխարհի Ասիոյ Սարմատացոց հասարակն է, որ բաժանի արեւելեան ծայրիւ Ռիպ-եայ լեռամբ եւ Տանաիս գետով եւ Մեստիս ծովակաւ մտիւքն յԵւքսինոս Պոնտոս ծով, եւ անտի նոյն ծովեզերքն յելս կոյս, մինչև ցմուտ Կուռաքսի գետոյ, որ կոչի Ագուա եւ անտի առ Կաւկասի լեռինս առ [Եզերաւ], Վրաւք եւ Աղուանիք, մինչև ցԿասբից ծովն, ի մուտս Սուանաս գետոյ (Սուանաս գետ չլսի ուրէք):

Եւ ունի Սարմատիա լեռինս զՇանթայինն եւ զՁիականն, որ արձակէ գետս հինգ ի Միովիտ ծով. [և Կաւկաս լեռնն ձգի] մինչև Կո[ռ]աքս լեռն: Եւ Կաւկաս արձակէ գետս երկու զՎարդանէս²⁶, որ սկսանի հանդէպ Կաւկասայ, և ձգէ զերկարութիւն իւր ի մուտս կոյս զհիւսիսեալ, մինչև ի մէջ մտանէ ընդ Մէովտիս [և] Պոնտոս ծով. և արձակէ գետ մի Փսեքոն անուն, որ մեկնէ ընդ Փոսփորոնն և Ձիքուն սահմանն, յորում քաղաքիկն Նիկոփս: Որ[ոց] ըստ հիւսիսոյ են. ազգ թուրքաց եւ բուլղարաց, ըստ անուանց գետոցդ կոչեցեալ. Կուփի Բուկար, Քուչի՝ Բուկարի, Ողխոնոթ Բուլկար եկն, Չուլդար Բուկար²⁷. օտար Պտղամէականէն են այս անուանք: Եւ ի Ձիական լեռնէն փախեալ որդին Խուրբադայ:

Եւ ընդ մէջ բուլղարաց եւ ծովուն Պոնտոսի բնակեն ազգք Գաշք²⁸ եւ Քուրլթ²⁹ եւ Ս[ո]ւանք մինչև ցՊիտիոնտ [քաղաք] ծովեզերային Աւազով աշխարհի, որ են Ափշիչք եւ Ափխազք, մինչև ցքաղաքն իւրեանց ծովեզերային Սեւաստոլպաւիք, եւ անդր եւս մինչև ցգետն, որ՝ կոչի Դուակոն՝ որ է Վիշապ, որ հոսի յԱլանաց, եւ բաժանի ընդ Ափխազս և ընդ Եզեր աշխարհ:

Եւ ունի [Ասիա Սարմատացոց] ազգագաւառս քառասուն եւ վեց: Եւ ի Հիւսիսոյ՝ առ Անծանօթ երկրաւ բնակեն Թագաւորական Սարմատք եւ [Սարմատք] Ձիակերք: Իսկ առ մտիւքն Տանայիս գետոյ բնակին Նախճամատեանք, եւ ազգ մի այլ, որ են Կղարջք: Եւ ապա Որջլակերք, Սիւռակացիք, ապա Միթոիդատենէ գաւառն. եւ ապա յարեւելից կուսէ Շանթային լեռանցն բնակեալ են Ամագոնք³⁰, որք են կանայք պատերազմողք մինչև ցգետն, որ կոչի Ռա, որ երկակի բղխէ ի հիւսիսոյ Անծանօթ երկրի, եւ միանան, եւ հասեալ մերձ Ձիական լեռանցն, արձակէ վտակ մի ի Տանայիս գետ, որ ի Միովիտ ծովակ իջանէ, եւ այլն դառնայ յարեւելս կոյս մինչև հանդէպ Շանթային լեռանցն: Եւ

²⁵ Ս. Երեմեան, «Աշխարհացոյցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ», ՊԲՀ, 1973, № 2, էջ 261-274:

²⁶ Կոչուել է նաեւ Հիպանիս, իսկ յետագայում Կուրիս, այժմ Կուբան (Ս. Ե.):

²⁷ Չղար Բուկար Տ: Սրանք բուլղարական այն ցեղն են, որոնք բնակուում էին Դաղստանի հիւսիսային մասում Վառաշան եւ Չունդար բաղաճների շրջակայքում, ուստի աւելի ճիշդ պիտի լինի «Չ[ուն]դար» ընթերցումը (Ս. Ե.):

²⁸ Գաշլի Տ: Գաշլ աղբյուրների երկրորդ հաւաքական անունն է, որ կապուում է խեթական արձանագրութիւնների «Գաշկա», «Կաշկա» ցեղանուն հետ (մ.թ.ա. II հազարամեակում Փոքր Ասիայի Պոնտական լեռներում) (Ս. Ե.):

²⁹ Քուրթ-փ վրաց. (պիտի առաջացած լինի «Քուրթաուր» ձեւից), օվսական (ալանական) ցեղերից մէկը, որը այս անունով յայտնի է Աշխ. յետոյ XVIII դարից: (Ս. Ե.):

³⁰ Ամագոնք Տ: Անունը առաջ է եկել արամեական դարձումից՝ «հգօր, մեծ մայր», որ ասորական մայր աստ-ւածուհու ածականն էր: Ամագոնքները պիտի լինեն նոյն զարդարացիները: Ստրաբոնը (XI, 5, 1) ամագոնքումի-ներին եւ զարգարացիներին միասին է պատկերացնում եւ նրանց բնակութեան տեղը ցոյց է տալիս Կովկասեան լեռնաշղթայի հիւսիսային փեշերի լեռնաբազուկներին, որոնք անտիկ հեղինակներն անուանում էին Կերամեան (Շանթային), եւ առասպելական Թերմոդոն գետի անունը նոյնացնում է ալանական «դոն» (նշանակում է «գետ») վերջաւորութիւն ունեցող գետի հետ (Ս. Ե.):

ապա գան այլ երկու գետք յարևելից կուսէ ի հիւսիսոյ, [ի] լեռնէն որ կոչի Ռիմրիկա: Եւ առնեն զնա [Ռա] եաւթնասնավտակեան, զոր կոչեն թուրք Աթլ գետ, որոյ չ մէջն է կղզի, յոր մտեալ ամրանալ Բասլաց ազգն ի Հզօր ազգէն **Խազրաց**³¹ եւ Բ[ո]ւշխաց ճարակելոց յելից եւ ի մտից, եկելոց անդ ի ձմերոց, և կոչեն Սեաւ կղզի զի յաղագս բազմութեանն ազգին Բասլաք՝ մարդոյ եւ անասնոյ անդ մտելոցն՝ սեւ երեւի, զոր Պտղոմէոս [Նի]գոա կղզի կոչէ:

Եւ վտակքն Աթլ գետոյ անցեալ [ընդ] կղզի դարձեալ միանան և մտանեն ի Կասբից ծովն, բաժանելով ընդ **Սարմատիա** եւ ընդ Սկիւթիոյ աշխարհն:

Որոյ (Կասպից ծովի) ըստ մտից կուսէ ասէ Պտղոմէոս, [գետք]՝ **զԱ[ւ]դոն** եւ **զԱ-զանդոն** եւ **զՍոնդաս**³² եւ **Գեռուա** եւ [ազգս] հոմանուն գետաւք որ[ք] ի **Կաւկասայ** հոսի[ն] ի ծով, մինչև ցԱղուանից սահմանն:

Եւ են ի **Սարմատիոյ** համարեայ, այսպէս, սկսեալ ի մտից յելս կոյս, նախ ազգ **Ալանաց Աշ-Դիգոր**³³ եւ ըստ հարալոյ՝ համաբնակ նոցա **Խերուրք**³⁴ եւ **Քուդէտք**³⁵, եւ **Արգուէլ**, որ է **Մարդուէլ**, եւ **Սկիւմիք** [որ են] **Թակոյր** եւ **Ալանք** են յետ **Դիգորին**, յԱրդող աշխարհին, Կաւկասին լեռանցն, ուստի հոսի գետն Արմնայ, եւ գնալով ընդ հիւսիսի՝ ընդ դաշտս անբաւ, խառնի յԱթլ:

Եւ ի նոյն լեռինն՝ յետ **Արգոզեան ազգին**³⁶ բնակեն՝ **Ռ-աճանք**, **Փինճք**, **Դուալք**³⁷, **[Հոնք]**³⁸, **Յիսյոք**, **Ասուրք**, **Ծանարք**, յորում **Ալանաց դուռն**, եւ միւս [եւս] դուռն որ ասի **Ծելքան**, համանուն ազգի, եւ ապա **Թուշք**³⁹, եւ **Խունձք**⁴⁰, եւ **Քուստք**⁴¹ մարդակերք, ապա **Յիսաւաւք**, ապա **Գուդամակարք**, ապա **Դուրծ[ու]լք**⁴², ապա **Դիդոյք**⁴³, ապա **Լեկք**⁴⁴, ապա **Կատապաստիանք**, ապա **Աղուտականք**, ապա **Խենաւ[դ]լք**⁴⁵, ապա **Շիդք**, որ է **Ճիդք**, ապա **[Լ]իփնիք**, **[Խեղայք]**⁴⁶, **Կասրք**:

Եւ ապա **Կաւկաս** բաժան ի յերկուս բազուկս, մինն գնայ դէպ ուղիղս կոյս, յորում

³¹ VII դարում խազիւրների հզօր ցեղային միութիւնը ընդգրկում էր գրեթէ ամբողջ Հիւսիսային Կովկասը եւ Դաղստանի դաշտային մասը (Ս. Ե.):

³² Սոնդաս-Մունտա պիտի կոչուէր այժմեան Աւարական Կոյսու գետը (Ս. Ե.):

³³ Աշտիգոր Տ: Ազգ ալանաց Աշ-Դիգոր նշանակում է ալանական ցեղերից մէկի՝ Դիգորների այն մասը, որը իրեն «Աշ», այսինքն «օվս» էր կոչում (Ս. Ե.):

³⁴ Խեբարթ P: Այս ցեղը տեղադրում է Աւարական Կոյսու գետի վերին հոսանքի շրջանում, Ջուրմուք վտակի ձորում (Ս. Ե.):

³⁵ Քուրթեմ P, Քուրեմ P: Ալան-օվս ժողովուրդը կազմող ցեղերից մէկը (Ս. Ե.):

³⁶ «Արդոզեան ազգ» - ալան - օվսերի հիմնական մասն էր, որը իրեն կոչում է «Իրոն» (Ս. Ե.):

³⁷ Դուալ - դվալները օվս-ալանական ցեղերից են (Ս. Ե.):

³⁸ Այս հոնները պիտի պատկանեն վայնախեան ցեղախմբին եւ ձուլուել են այժմեան ինգուլների մէջ (Ս. Ե.):

³⁹ Պիրիֆիթելի Ալազանի կիրճումն են բնակուած թուշերին ցեղակից բացբիները կամ ծովաթուշերը, որոնք դեռ մօտ են վայնախներին (Ս. Ե.):

⁴⁰ Խունձ SA, Խուշ P, ճիշդ ընթերցումը պիտի լինի Խունձ: Այսպէս են իրենք իրենց կոչում աւարները: Բնակում են այժմ էլ Խունձախ անունով յայտնի շրջանում, Աւարական Կոյսու գետի կիրճում (Ս. Ե.):

⁴¹ Վայնախների երրորդ ցեղը մահիստունցիները «մայսավեյ-մայսդվեյ» է իրեն կոչում: Մովաթուշերը կամ բացբիները ինգուլներին գիտեն Քիստիյ, որ նշանակում է «ինգուլ» (Ս. Ե.):

⁴² Սրանք այժմեան ինգուլների նախորդներն են եւ բնակում էին Ասսա գետի վերին հոսանքում (Ս. Ե.):

⁴³ Այժմ էլ նոյն տեղում՝ Անդիական-կոյսու գետի ակումբների շրջանում գոյութիւն ունի դիդոյցիների ժողովուրդը (Ս. Ե.):

⁴⁴ Այժմեան լեզգիները (Ս. Ե.):

⁴⁵ Խենաւոյ պիտի կոչուէին այժմեան Ախտի-չայ վտակի կիրճում՝ Խնով առկում ապրող բնակիչները, որոնք կազմում էին առանձին ցեղ (Ս. Ե.):

⁴⁶ Խեղայք թերեւս լինի Անապայի շուրջը բնակուող աղըղական ցեղը, որի այլ անունն էր Նատուխայ: Սակայն այս եզրակացութեանը հակասում է «Խեղայք»-ի տեղադրումը դաղստանեան ցեղերի շարքում (Ս. Ե.):

Շրուան եւ հսրուան ազգ՝ մինչեւ ցեորսվէմ: Եւ միւս բազուկն արձակէ նախ վտակ մի զԱրմ գետ որ [գնայ] դէպ ուղիղ ի հիւսիսի յԱթլ գետ:

Եւ ապա նոյն բազուկն գնայ զելիւք հիւսիսոյ, յորում բնակեալ են՝ **Թաւասպարք**⁴⁷, **Հեճմատակք**, **Իժմախք**, **Փախք**, **Փուխք**⁴⁸, **Փիքանակք**⁴⁹, **Բազկան**, ուստի առնու պարիսպն երկայն՝ որ կոչի Ապզուտ-Կաւատ [եւ ձգի] մինչեւ ցԱլղմինոն մաւրս եւ ցծով: Որոյ ըստ հիւսիսոյ՝ **Մասքութան ազգն** բնակեալն են, ի Վարդանեան դաշտին, մինչեւ ցԿասբից ծովն, յոր բազուկն **Կաւասայ հայի**. յորմէ ածեալ է պարիսպն Դարբանդայ, այսինքն Կապ և Դուռն՝ քաղակք պահակին ճորայ, աշտարակ ահագին ի ներքս ի ծովուն կառուցեալ:

Իսկ ի հիւսիսոյ նորա թագաւորութիւն Հոնաց հուպ ի ծով, եւ ի մտից նորա առ Կաւկասով Վառաշան քաղաք նոցին Հոնաց եւ **Չուդարս**⁵⁰ եւ **Սմընդրո**:

Եւ յարեւելից բնակեն Սաւիրք ցԹալդ գետ, որ մեկնէ ընդ **Ասիական Սարմատք**, եւ ընդ Սկիւթիա աշխարհք, որ են Ապախտար, այսինքն Թուրքաստանք: Եւ հաքանն թագաւոր նոցա [, որ է տէր հազրաց], եւ հաթունն Դշխոյ՝ նոցա [թագուհի], կին հաքանայ ի Բասլաց ազգէն:

ԱՐՓԵՆԻԿ ԴԱՋԱՐՈՍԵԱՆ

Պ.գ.թ., Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան
Մատենադարանի աւագ գիտաշխատող



⁴⁷ Թաւասպարները - թաբասարանցիները բնակում են Դերբենդից արեւմուտք, Կուրան գետի աւազանում (Ս. Ե.):

⁴⁸ Այժմ՝ մանիսատիները, այսինքն չէչենների երկրից Պիրիֆիթելի Ալաղանի գետի ակունքների շրջանում բնակութիւն հաստատած չէչենական ցեղը (Ս. Ե.):

⁴⁹ Սովորաբար համարում են պէշենեգ ցեղանուան տարբերակ, որ համոզիչ չէ եւ դժուար է որոշ եզրակացութեան գալ այլ փաստեր չունենալու պատճառով (Ս. Ե.):

⁵⁰ Ըստ երեւոյթին յետագայ էնդերի, այժմ՝ Անդրէյ առվ գիւղը (Ս. Ե.):

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԱՅՆԹԱՊԷՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ ՍԿԻՋԲ ՆՈՐԱՅՐ ԱՐՔ. ՊՕՂԱՐԵԱՆԻ

1995-ի Յունուարին երանաշնորհ Մեսրոպ Արք. Մութաֆեանի (հետագային պատրիարք Կ. Պոլսոյ) առաջնորդութեամբ քանի մը ժառանգաւոր սաներ եկած էինք Երուսաղէմ՝ հոս ու Բեթղէհէմի մէջ մասնակցելու Աստուածայայտնութեան տաղաւարի տօնակատարութեանց, ճանչնալու Ս. Յակոբեանց վանքն ու միաբանութիւնը: Մտքիս մէկ անկիւնը կ'աճէր Նորայր Արք. Պօղարեանին հանդիպելու սերմը, զոր ցանած էի տարիներ առաջ, դեռ աշակերտական կարգերու վրայ, երբ խոր յուզումով կը քրքրէի եկեղեցական օրացոյցը, կը սերտէի եպիսկոպոսներու անունները, յատկապէս յիշողութեանս մէջ դրոշմելով երիցագոյնին կախարդական թուացող անունը՝ Նորայր Արք. Պօղարեան, պարուրած զինքը տեսնելու անկարելիութեան մշուշով: Հանդիպումը կայացաւ: Ծերունազարդ սրբազանը մէկ առ մէկ հետաքրքրուեցաւ մեզմով: Երբ կարգը ինծի հասաւ՝ ըսի, թէ քահանայի մը թոռն եմ. ինք եւս հպարտանքով յայտնեց, թէ քահանայի զաւակ է: Ուրկէ՞ գիտնայի այն ատեն, թէ որդին է մեծանուն Տ. Գարեգին Աւ. Քհնյ. Պօղարեանի, որու կրած հալածանքը ունէր նուիրագործեալ մարտիրոսութեան ծանր հանդիսաւորութիւնը (գործածելով Զապէլ Յսայեանի դիպուկ բնութագրումը՝ ի մասին Մեծ Եղեռնի տարագրեալներու):

Երանաշնորհ Եղիշէ Դուրեան մեծանուն պատրիարքի թողօնէն քաղուած հետեւեալ նամակը, զոր քիչ ետք պիտի կարդաք, ազգային-եկեղեցական անցեալ դարու պատմութեան մէկ յուզիչ էջը կը պարունակէ անտարակոյս: Աստուածային նախախնամութեան անհիմանալի միջամտութիւնը թէ կենսական պատահականութեան մը խորհրդաւոր մէկ անակնկալը կոչել. չե՛մ գիտեր, սակայն պատմութեան ատեանը աւելիով արդարացուցած է հետեւեալ նամակ-միջնորդագիրը հեղինակած հոգելոյս Ներսէս Աւ. Քհնյ. Թաւուքճեանը, տէր-հօր խնդրանքին ընդառաջած երանաշնորհ պատրիարքը եւ մանաւանդ քէմալական բանակ զօրակոչուելու սպառնալիքին տակ գտնուած, թերեւս թրքացող ու իսլամացող Այնթապի մէջ մնալու պարագային կորստեան մատնուելու դատապարտուած այն ուշիմ հայ երիտասարդը, որ Նորայր Արք. Պօղարեան անունը պիտի կրէր՝ դառնալով հայ մատենագիտութեան անխոնջ մշակը, հայ եկեղեցականութեան պարծանքը, Ս. Յակոբեանց միաբանութեան աննկուն երախտաւորը: Նամակի գրառումէն ետք, նոյն տարին իսկ, 1922-ին Երուսաղէմ հասած Նորայր Աղամ Պօղարեան, 22 Յունիս 1928-ին, Կիրակի, Վարդավառի տաղաւարին, Եղիշէ Դուրեան պատրիարքի ձեռամբ կուսակրօն քահանայ պիտի ձեռնադրուէր իր Այնթապէն վաղեմի ընկերոջ Ներսէս Թաւուքճեանի (Տիրան Ներսոյեան) հետ, ինչպէս որ իրենց հայրերը քահանայ ձեռնադրուած էին միասնաբար, 15 տարի առաջ, Սիսի մէջ:

ՍԵԻԱՆ ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆ

Ամենասպարհի

Տէր Տէր Եղիշէ Սրբազան Արքեպիսկոպոս

Պապրիարք Առաքելական Աթոռոյն Ս. Յակոբեանց

Երուսաղէմ

Բարձրաշնորհ Սրբազան] Հայր,

Անցեալ տարւոյն վերջին ամիսներուն մէջ երբ Այնթապի հայութիւնը գունդազուցուել էր փոխադրուելու Հալէպ թուրքերը կ'շողոքորթէին եւ կ'ըսէին «մի երթաք, ձեզի համար բան չիկայ, այս երկիրը լաւ պիտի ըլլայ, մեր մտայնութիւնը փոխուած է, քեանալական կառավարութիւնը արդար եւ քաղաքակիրթ է եւլն» եւ հայոց հետ քաղաքավար վարմունք մը ունէին եւ փոխադրուիլ ուզողներուն դիրքաւորմանը անցագիր կուտային¹: Բայց շար չի տեսնուեց իրենց ներքինը դուրս տուին եւ առաջին անգամէն սկսան հայոց դէմ սաստիկ պոլիսիս մը, զոր մինչեւ հիմայ կ'շարունակեն եւ օր ըստ օրէ կ'սաստիկացնեն զայն: Հիմայ Այնթապի մէջ հայու հետ գործ ընող մէկ հար իսկ թուրք չի մնաց: Ասկից ետքը հայուն Հալէպ երթեւեկութիւնը արգիլեցին բացարձակապէս: Այս օրերս նոր օրէնք հանելով գաղթող հայերուն հոն մնացած շարժուն գոյքերուն եւ անշարժ կալուածներուն տիրացաւ կառավարութիւնը, եւ դպրոցներուն շարունակութիւնը անկարելի ըրին: Որովհետեւ հրահանգ տուին որ թուրք լեզուին, պատմութեան եւ աշխարհագրութեան ուսուցիչները թուրք պիտի ըլլան, բոլոր դասերը թուրքերէնով պիտի աւանդուին, ուսուցիչները էլիլիլթընամէ² պիտի ունենան եւ վարժարանները պետական արտօնագիր պիտի ունենան: Մեր բոլոր վարժարանները ունէին արտօնագիր, բայց տարագրութեան միջոցին կորսուած եւ, նոյնպէս ուսուցիչներու էլիլիլթընամէն, հայոց տուններէն մեծ մասը կ'քանդեն, ոմանց համար հին է կ'պատրուակեն եւ միւսները ճամբու վրայ եթէ ըլլան ճամբան լայնցնել կ'ուզեն եւլն: Վերջապէս Այնթապ մնացող 4000ի չափ մարդիկը այն աստիճանի բերուած են որ մօտերս նոր գաղթ մը սկսելու հաւանականութիւնը մօտաւորապէս է³. եւ արդէն հոն մնացողներ փոխադրութեան միջոց չունեցող անկարողներ էին: Միայն սա աղէկ բանը ունին որ առանց դառնալու պայմանով փոխադրուիլ ուզող ընդա-

¹ 20 Հոկտեմբեր 1921-ին Բեմալական կառավարութիւնը եւ Ֆրանսայի իշխանութիւնները կը ստորագրեն Անգարայի պայմանագիրը, որու համաձայն Ֆրանսա ալ կը դադարեցնէ թրքական ռազմական տիրութիւնը վրայ ունեցած իր գործունէութիւնը, ուստի Անգարայի պայմանագիրով պատերազմը իրականացնող վերջ կը գտնէ հարաւային ռազմական տիրութիւն վրայ եւ Ֆրանսա պաշտօնապէս կը հանձնար Թուրքիոյ հարաւային սահմանը՝ վերջնականապէս լինելով Այնթապն ու ողջ Կիլիկիան: Պայմանագրի տրամադրութիւններուն համաձայն, թրքական բանակը Այնթապ կը մտնէ 25 Ռեպտեմբեր 1921-ին: Այս իրադարձութիւններէն ետք հայեր զանգուածաբար կը սկսին լինել Այնթապը. թուրք եւ ֆրանսացի պաշտօնեաները յառաջատար հայերը ժողովի կը հրաւիրեն Մերսինի մէջ ու կը խնդրեն կասեցնել գաղթը՝ խոստանալով, որ ոչ մէկ վնաս պիտի հասնի իրենց (տե՛ս Osmanlı'dan Cumhuriyet'e Gaziantep Ermenileri [Կազիանթէպի հայերը՝ Օսմանեան շրջանէն հանրապետական շրջան], Ռամազան Էրհան Կիլլի, Ստամպոլ, 2019, -աւարտահաւ-, էջ 294, Ümit Kurt, The Armenians of Aintab, The Economics of Genocide in an Ottoman Province, Harvard University Press, 2021, էջ 166-168): 1921-ի աւարտին, Բաղադական այս զարգացումներու մասին Ներսէս Քհնյ. Թաւրիզեան, 31 Ռեպտեմբեր 1921-ին, իր օրագրին մէջ կը գրէ հետեւեալը. «1921 տարին կը լրանայ այսօր, բայց մեզի հայերու համար աղէտաւոր եղաւ այս արին ես եւ շատ գէշ փակուեցաւ: Տարի մը առաջ ֆրանսացոց վրայ շատ մեծ յոյսեր դրած էինք, այսօր անոնց ամէնն ալ մարելէն ետք մեզ հակառակ Բաղադականութիւն մը կը հետապնդէ» (տե՛ս «Տառապանքի օրագիր», Տ. Ներսէս Ա. Քհնյ. Թաւրիզեան, Պէյրութ, 1991, էջ 353):

² որակաւորում

³ Հայերու Այնթապէն դէպի Հալէպ զանգուածային գաղթը տեղի պիտի ունենար Բեմալական գործերու Զմիւռնիոյ նախարարին վրայ Յունաստանի դէմ տարած վերջնական յաղթանակէն, այսինքն 9 Սեպտեմբեր 1922-էն ետք, երբ այլեւս որեւէ կասկած չէր մնար թրքական «յաղթանակէն» (տե՛ս Osmanlı'dan Cumhuriyet'e Gaziantep Ermenileri, էջ 296):

նիքները կ'արյունեն և ճամբու վրայ անապահովություն չի կայ առ այժմ:

Այս պայմաններում մէջ Այնթապ կ'մնան երկու քահանաներ⁴, որոնցմէ մէկուն ընդունիլը հոս է արդէն: Հոն իր ժողովուրդին հետ մնացող ազգին ու եկեղեցիին գործերուն բոլոր ծանրութիւնը իր վրայ առնող պարտական քահանան է Արթ. Տէր Գարեգին քինյ. Պողարեան⁵, որուն կրած զոհողութիւնը ամէն գնահատումէ վեր է:

Տէր Գարեգին Հայրը ունի զաւակ մը⁶, որ մէր Ներսէսին⁷ փարեկից և դասընկեր, միեւնոյն ժամանակ մշտնադ կարողութիւններով օժտուած ու շատ պարկեշտ և մաքուր նկարագիրով երիտասարդ մըն է: Հիմա 40-50 տարիներէ ի վեր ուսման և դպրոցի համար հոգի տրող և իր պաշտօնին գիտակից քահանայի մը զաւակը կ'մնայ անուսում և միեւնոյն ժամանակ զինուոր ըլլալու վրանգին ենթակայ: Այս երիտասարդին համար Երուսաղէմ գերնուած արեւնս Ձեր Սրբազնութեան խօսած էի, սակայն այս անգամ կուգամ թախանձագին խնդրել որ բարի ըլլաք այս տղան ընդունիլ ժառանգաւորացը: Այն արեւն հաճութիւն ունէիք բայց տեղ չիկայ ըսած էիք: Մինչդեռ հիմա ժառանգաւորացէն տղայ մը ելաւ և հոս եկաւ տեսաւ և թերեւս ուրիշ կերպով պակտողներ ալ եղած են կամ կ'ըլլան: Հետեւաբար ասանկ ամէն կերպով արժանիք ունեցող և զարգանալու շաղիին մըն է մէկը անոնց տեղ ընդունիլ յարմար կրնայ ըլլալ կ'կարծեն: Եթէ բարեհաճիք այս տղուն ընդունիլ ազգին ու եկեղեցիին մէկ վատարակաւոր ծառան վարձատրած կ'ըլլաք, արժանիք ունեցող երիտասարդ մը վրանգէն ազատած կ'ըլլաք և ժառանգաւորացի պատիւ բերող աշակերտ մը կ'ունենաք:

Սրբազան Հայր, պր. Ադամ Գր. Քինյ. Պողարեանի մասին, պր. Յակոբեան Եաղուպեանէն⁸ եւս կրնաք հարցնել, եւ կը կարծեն թէ ան ալ իբր ուսուցիչը պր. Ադամին, ամէն տեսակէտով պիտի յանձնարարէ զայն: Կ'յուսամ թէ չէք մերժեր այս առաջարկը: Եւ անմիջապէս կ'իմացնէք ընդունուած ըլլալը, որպէսզի օր առաջ, Այնթապէն ելլել բոլորովին չարգիլուած և տղուն Քէմալական ծուղակին չիւնկած հոս բերել փանք ու դրկենք:

⁴ Այնթապ մնացած միւս քահանան էր Տ. Ներսէս Ա. Քինյ. Պապայեան:

⁵ Ծնած է Այնթապ, 13 / 25 Փետրուար 1867-ին: Աւագանի անունը եղած է Գրիգոր: Ստացած է համեստ կրթութիւն մը: Շրջան մը հետեւած է մանուսայագործութեան, ապա եղած է հմուտ հաշուապահ-տոմարակալ մը՝ պաշտօն վարած ըլլալով Այնթապի մասնատու վահառատներուն մէջ: 1903-ին Սիսի մէջ քահանայ ձեռնադրուած է Սահակ Խաչապեան կաթողիկոսի ձեռամբ՝ օծակից ունենալով նաեւ նամակիս հեղինակ Ներսէս Քինյ. Թաւրիւմեանը: Եղած է հիմնադիրներէն մէկը Այնթապի Պողարեան գրատան (1898-1915): Հիմնադիր-հոգաբարձութեան էր Կիլիկեան նեմարանի (1912-1915): Տարագրութեան տարիները կ'անցընէ Համայնի ու Սէլիմիի մէջ՝ միշտ միախառնելով իր ժողովուրդը: Յամառ ընթերցող մըն էր. ունէր նոյն գրադարան: Այնթապի ինքնապաշտպանութեան կոմիտեոյ ժամանակ եղած է Ազգային միութեան և Պարենատրման վարչութեան հաշուապահը: Այնթապը վերջին լիոններէն եղած է, Դեկտեմբեր 1922-ին (տե՛ս «Պատմութիւն Անթապի հայոց», աշխատասիրեց ու խմբագրեց՝ Գեորգ Սարափեան, Ա հատոր, Լոս Անճելէս, 1953, էջ 472-474): Ներսէս Ա. Քինյ. Թաւրիւմեան 21 Դեկտեմբեր 1921-ին այս մասին հետեւեալ գրառումը ունի իր օրագրին մէջ. «... Այնթապի մէջ Տ. Գարեգին կը մնայ միմակ, ամբողջ ծանրութիւնը կը մնայ այդ խեղճին վրայ» («Տառապանքի օրագիր», էջ 352):

⁶ Տ. Գարեգին ունեցած է հինգ զաւակ՝ Գրիգոր, Խաչիկ, Ադամ-Նորայր, Նուպար և Հովսիսիմէ (տե՛ս «Յեղասպան Թուրքը», Գրիգոր Պողարեան, Պէյրութ, 1973, էջ 127):

⁷ Խմա՝ Տիրան Արք. Ներսէսեան (1904-1989):

⁸ Յակոբեան Եաղուպեան եղած է Երուսաղէմի Ս. Աթոռոյ դիւանատանց պաշտօնեայ, հետգհետէ վարելով հայերէն թղթակցութեանց Տնօրէն ժողովոյ և «Սիոն»-ի փարտաւարութիւնը, հոսակ՝ Ելեմտից դիւանի հաշուակալութիւնը: Այնթապցի էր: Եղած է սան Արմաշու դպրեւանքին, ուր աշակերտած է Եղիշէ Դուրեանի: Ուսուցչական պաշտօններ վարած է Այնթապի, Գաղատիոյ, Ամառնի, Ալեքի զանազան դպրոցներուն մէջ: 1922-ին հասած է Երուսաղէմ: Մեռած է 1951-ին և Ս. Յակոբեանց Մայր տաճարին մէջ կատարուած յուղարկաւորութենէն վերջ մարմինը ամփոփուած է Զամբաղի գերեզմանատունը (տե՛ս «Սիոն», Ապրիլ 1951, էջ 128):

Մեր Ներսէսին նամակներէն այնպէս կ'իմանամ թէ ինք գոհ է վանքի կեանքէն. կ'յուսամ թէ գոհ կ'թողու նաեւ Ձեր Սրբազնութիւնը իր ջանասիրութեամբը: Խոնարհաբար կը խնդրեմ, նաեւ այս առթիւ, որ Ձեր բարձր ուշադրութեան առարկայ ընէք զինք եւ Ձեր Սրբազնութեան հովանաւորութիւնը միշտ վայելէ:


Մարչելով ի համբոյր Սրբազնութեանդ Ս. Աջոյ
մնամ որդիական խորին յարգանքօր
Ներսէս Քհնյ. Ն. Թալուզճեան⁹

922 Մայիս 31

Հալէպ

Յ. Գ. Մեծ Բարեկենդանին էր ընդամենը փոխադրեցի Հալէպ եւ հիմայ ընդամենօր հանգիստ եմ եւ Ձեր Սրբազնութեան օրհնութեան կարօտ եմ եւ կ'խնդրեմք Ձեր Անկեղծ պարտութեան մաղթանք աղօթքները:

Նոյն



⁹ Ծնած է Այնթապ, 1870-ին: Կրթութիւնը կը ստանայ Ներսէսեան վարժարանի, ֆրանչիսկեան դպրոցի եւ Այնթապի Կեդրոնական եղեցի մէջ: 1901-էն սկսեալ Բանի մը տարի Արմաշու դպրեվանքի մէջ կը դառնայ եղիշէ Դուրեանի աշակերտը: 1903-ին Սիսի մէջ Բանանայ կը ձեռնադրուի, Սահակ Խաչայեան կաթողիկոսէն: Տարագրութեան ժամանակ իր ժողովուրդին հետ է միշտ, Միջագետքի անապատներուն վրայ: 1920-ին կազմակերպիչներէն է Այնթապի հայութեան ինքնապաշտպանական մարտերուն (տե՛ս «Տառապանքի օրագիր», էջ 5-11): Հայու մը ձեռնով սպաննուած է 3 Յուլիս 1934-ին, Հալէպի մէջ (տե՛ս «Սիոն», Օգոստոս 1934, էջ 252):

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

15-ՐԴ ԴԱՐՈՒ ԵՒՐՈՊԱՅԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ԲԱՂԷՇԻ ԱՄՐԴՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԵՒ ՉՈՐՍ ՄԵԾԵՐԸ

Վերածնունդը

Եւրոպայի մէջ տպագրութեան գիւտով 15-րդ դարուն վերածնունդ տեղի ունեցաւ, որուն արձագանգը Հայ Եկեղեցւոյ եւ ազգի մտաւոր եւ իմացական կեանքին վրայ անջնջելի հետք թողուց: Գերմանիոյ մէջ Նոհան Կիւթեմպերկ 1450 թուին կատարեց տպագրութեան գիւտը, եւ վաթսուեանակ մը ետք, Յակոբ Մեղապարտ անուն, այլապէս բոլորովին անծանօթ հայորդին, որպէս ռահվիրայ նախակարապետ հայ տպագրիչը, Վենետիկի մէջ հիմնեց առաջին հայ տպարանը: Տպագրեց առաջին վեց հայերէն գիրքերը 1513 թուականէն սկսեալ, ու 150 տարիներ ետք Ոսկան Վարդապետ Երեւանցի Ամսդերտամի մէջ առաջին Աստուածաշունչ Մատեանը տպագրեց 1666 թուականին: Յատկանշական պարագան այն էր, որ Հայաստան եւ Ս. Էջմիածին չէին կրցած գլուխն անցնիլ վերածնունդի այդ մեծ շարժումին: Սակայն հայորդիք անձամբ, ինչպէս Յակոբ, նոյնպէս Աբգար Դպիր Եւդոկիացին ու որդին Սուլթանշահ, Խաչատուր Կեսարացին եւ Գրիգոր Մարգուանցին յաջորդաբար, թէեւ դանդաղ, սակայն յառաջընթաց քայլ պահեցին որպէս հետեւորդները Յակոբ Մեղապարտին, ու հայ գրականութեան մեծագոյն երաշխիքը եղող անցեալի մատեանները հետզհետէ տպագրեցին:

Դարակազմիկ անցման այդ շրջանին Բաղէշի (այժմ Պիթլիս) Ամրդուլի Համալսարանը եղաւ հայ գրչագրութեան ամենավերջին եւ ամենէն բեղուն կեդրոնը, երբ այլեւս կարիքը չկար գրչագիր հատորներ ընդօրինակելու Հայաստանի եւ Կիլիկիոյ վանքերուն մէջ, քանի որ տպագրութեան հրաշալի գիւտը անցեալի մատեանները կարգաւ տպագրութեամբ պիտի յաւերժացնէր: Մաղաքիա Պատրիարք Օրմանեանի գնահատումով «Հայ տպագրութեան գիւտը հայ միտքի զարգացման նպաստատու փաստ մը եղաւ արեւելի ազգերուն մէջ ուր Հայք յառաջընթաց գտնուեցան»:

Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը

Մինչդեռ արեւմտահայութիւնը մշակութային մարզէն ներս հերոսական գործ կը կատարէր տպագիր գիրքերու եւ ուսումնարաններու բարձր մակարդակով, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը նոյն շրջանին առաջնորդողի դեր կատարելու իր առաքելութեան մէջ կը ձախողէր 17-րդ դարու առաջին տարիներէն սկսեալ մինչեւ յաջորդող ամբողջ 100 տարիները: Պատրիարքութիւնը 1600 թուականէն սկսեալ յաջորդող մէկ դարու ընթացքին անկումի մատնուած էր, որովհետեւ Պատրիարքական Աթոռ ելած եւ իջած էին 55 պատրիարքներ, իւրաքանչիւրը միայն երկու կամ երեք տարի պատրիարքութիւն վարելով: Յոռի եւ քանդիչ սովորութիւն մըն էր եղածը երբ հոգեւոր եւ ազգային իշխանութիւնը, մէկը միւսին ձեռքէն խլելու մոլուցքով, Աթոռին գահավէժ անկումին պատճառ կը դառնար:

Ամրդոլի Համալսարանը

Այդ միջոցին փրկարար լոյս մը կը ծագէր Բաղէշի Ամրդոլի վանքէն ուր մեծ վարդապետ Վարդան Բաղիշեցիի ուսուցչապետութեան տակ Չորս Մեծերը կը գրաւէին Հայ Եկեղեցւոյ կեդրոնները ու ձեռք կ'առնէին անոր ղեկավարութիւնը, նոյն ինքն Վարդան Բաղիշեցին եւ իր երեք աշակերտները՝ Յովհաննէս Կոլոտ, Յակոբ Նալեան եւ Գրիգոր Շղթայակիր պատրիարքներ։ Դպրանոցին բուն անունը «Ամլորդի» եղած է Զաքարիա քահանայի կնոջ Եղիսաբէթի ամուլ որովայնէն ծնած իր որդւոյն Ս. Յովհաննէս Մկրտչի անունով, որուն մասին կը կարդանք Աւետարաններուն մէջ։ Ամրդոլ աղաւաղուած անունն է Ամլորդիին։

Ամրդոլի վանքը 15-րդ դարուն հայ գրչութեան յատուկ դպրոց մըն էր հիմնուած Գրիգոր Տաթեւացիի աշակերտ Դանիէլ վարդապետին կողմէ, ուր ինք դասաւանդած է աստուածաբանութիւն, կրօնագիտութիւն եւ գրչագրական արուեստ։ Դպրոցը համբաւի տիրացաւ Ներսէս Մոկացի եւ ապա Վարդան Բաղիշեցի վարդապետներու ուսուցչապետութեան տակ, երբ արդէն Ամրդոլ Համալսարանի կոչում ստացած էր իր «45 միաբաններով, 40 կարդացողներով, եւ 5 մշակներով»։ Վարդան Բաղիշեցի վերանորոգեց դպրանոցը, հարստացուց մատենադարանը, եւ բարձր աստիճանի հասցուց գրչութեան արուեստը։ Զեռագիր մատենաներու հարուստ եւ հաւաստի օրինակներ հոնկէ հասած են մեզի որոնց լիակատար գրացուցակը Վարդան Բաղիշեցի ինք կազմած է որպէս «Ամրդոլու Մատենադարանի Գրացուցակ»։

Վարդան Վարդապետ Բաղիշեցի

Վարդան Բաղիշեցիի սկսած մտաւորական եւ ուսումնական տեսչութեան ներքեւ իր ամենէն յայտնի երեք աշակերտները, Յովհաննէս Կոլոտ, Յակոբ Նալեան, եւ Գրիգոր Շղթայակիր պատրիարքներ, միասին զարգացան ու կազմեցին 18-րդ դարու մտաւորական սերունդին առաջատար փաղանգը արեւմտահայութեան մէջ, տասնեակ մը եւ աւելի աստուածաբանական եւ կրօնագիտական ծաւալուն հատորներ հրատարակելով, այս անգամ տպագիր, անշուշտ, որոնց տիտղոսութեթ էջերը կը վկայեն հնադարեան մեր ձեռագիրներու մանրանկարներուն տպագրեալ առաջին ձեռնարկները։

Վարդան Վարդապետի ձեռքով շարք մը պատմագիրներու ձեռագիր վերջին օրինակները գրուեցան, Փաւստոս Բիւզանդէն մինչեւ Թովմա Մեծփեցի, որոնք այսօր Երեւանի Մատենադարանին մնայուն եւ ամենահաւաստի աղբիւրները կը ներկայացնեն։ Երեսնամեակ մը առաջ երբ 8-րդ դարու Ղեւոնդ Երէց հայ պատմիչի Արաբներու արշաւանքի երկը անգլերէնի կը թարգմանէի որպէս աւարտաճառ, գոյութիւն ունեցող լաւագոյն թիւ 3070 ձեռագիր օրինակը տեսայ եւ օգտագործեցի Երեւանի Ս. Մեսրոպ Մաշտոցի Անուան Մատենադարանին մէջ, ուր հասած էր Ամրդոլի Համալսարանէն՝ էջմիածնի ճամբով։ Յիշատակարանին մէջ գրուած է թէ մատենան վերստին նորոգուած էր Վարդան Բաղիշեցիի ձեռքով, նոյն ձեռագրին գրիչներէն մին ինք ըլլալով 1669 թրւին։ Այլ օրինակ մը եւս տեսայ, թիւ 1902 մատենան, որ նոյնպէս կը գտնուէր Ամրդոլի վանքի ձեռագրատան մէջ Վարդան Բաղիշեցիի հոգածութեան ներքեւ մինչեւ 1690, երբ Վարդան զայն յանձնած է Ս. էջմիածնի ձեռագրատան։ Ահա հոշականուն մտքի վառարան մը եւս որ մինչեւ հարիւր տարի առաջ կանգուն էր եւ զոհ կ'երթար ցեղասպանութեան։ Վարդան Բաղիշեցի վախճանած է 1704 թուին։

Ամրդոլի Գրական Արգասիքը

Յովհաննէս Կոլոտ Պատրիարք պիտի փրկէր արեւմտահայոց կացութիւնը իր 26 տարիներու նուիրեալ եւ երկարատեւ գահակալութեան ընթացքին (1715-1741) հրատարակելով նաեւ Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութեան վերաբերեալ հիմնական վեց գիրքեր, որոնք են «Սուրբ Գիրքս որ կոչի Մաշտոց», «Գիրք Պարապմանց Սրբոյն Կիւրդի Աղեփանդացոյ յաղագս մարդանալոյ Միածնին», «Տօնացոյց եւ Աւետարանացոյց», «Պարգաբանութիւն Բերականութեան կարճաօրոտ եւ դիւրիմաց», «Գիրք որ կոչի Հարանց Վարժ», եւ «Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Յօհաննոս»:

Այդ երկերէն մին Աղեքսանդրիոյ Կիւրեղ Պատրիարքի (+444 թ.) «Գիրք Պարապմանց»-ն է որուն յունարէն բնագրէն լատիներէնի թարգմանութիւնը ծանօթ է որպէս *Scholia de incarnatione unigeniti*, որուն բնագիրներն ալ լրիւ չեն հասած, բացի հայերէն թարգմանութենէն որ յունարէն բնագրէն թարգմանուած է Դաւիթ Հիւպատոս անուն գրչին կողմէ, որ ցայսօր կը մնայ միակ ամբողջական բնագիրը բանասիրութեան առջեւ: Զայն գրաբարէն անգլերէնի թարգմանած է անգլիացի հայագէտ Գոնիբեր 1907 թուին Լոնտոնի մէջ: «Գիրք Պարապմանց» տառացիօրէն կը նշանակէ «ուսումնասիրութիւն» եւ կը վերաբերի Քրիստոսի երկու բնութեանց մէկ անձի մէջ միաւորման: Գիրքին հեղինակ Աղեքսանդրիոյ Կիւրեղ Պատրիարքը ներկայ եղած է Եփեսոսի 431 թուի Տիեզերական Գ ժողովին:

Ամրդոլէն Արմաշ

Արմաշէն Երուսաղէմ եւ Անթիլիաս

Կ. Պոլսոյ Պատրիարքութեան յետագայ դարերը երջանկաբեր եւ արդիւնաւէտ եղան շնորհիւ այդ օրինակելի եւ նուիրեալ երեք պատրիարքներուն՝ Կոլոտի, Նալեանի, եւ Շղթայակիրի, առաջին երկուքը Կ. Պոլսոյ, եւ Շղթայակիրն ալ Երուսաղէմի պատըրիարքութեանց համար, որոնք իրաւամբ ստացած են «ամենիմաստ եւ աստուածաբան վարդապետ» տիտղոսը: Գրիգոր Շղթայակիր (1715-1749) փրկեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը իր ծանրածանր պարտքերէն, իսկ Յովհաննէս Կոլոտն (1715-1741), ու Յակոբ Նալեան (1741-1749) Պատրիարքները իրենց վարչական ու մանաւանդ գրական վաստակով հիմնովին շրջեցին Կ. Պոլսոյ Պատրիարքութեան դիմագիծն ու գնացքը, որոնց յաջորդեցին արժանաւոր գահակալներ, միշտ պահելով Ամրդոլի գերազանց վաստակն ու աւանդը, ինչպէս Գէորգ Քերեստէճեան, Մկրտիչ Խրիմեան, Ներսէս Վարժապետեան, Խորէն Աշըգեան, Մատթէոս Իզմիրլեան եւ Մաղաքիա Օրմանեան Պատըրիարքները:

Անկասկած անոնք եղան Ամրդոլէն Արմաշ կամրջող պատրիարքները, յատկապէս Գէորգ Պատրիարք, որ իսկոյն եղաւ Գէորգ Դ. Կաթողիկոս Ամենայն Հայոց ու հիմնեց Մայր Աթոռի Գէորգեան Ճեմարանը, իսկ Աշըգեան Պատրիարքի օրով ալ Օրմանեան Մաղաքիա եպիսկոպոսի աննահանջ ջանքերով բացուեցաւ Արմաշու Դպրեվանքը, երկուքն ալ որպէս Ամրդոլի Համալսարանին հարազատ հետեւորդ ուսման կեդրոնները: Ամրդոլէն Արմաշ անցքը յիշաւ Օսմանեան պետութեան հովանաւորութիւնն ալ ինքնաբերաբար ապահովեց 1863 թուի Ազգային Սահմանադրութեամբ, դարձնելով զայն օրինական, ճշդուած եւ հաստատ: Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը Ազգային Սահմանադրութեան ուժով առաջնորդողի ընդհանուր դերը վերցուց իր վրայ Հայ Եկեղեցւոյ հեղինակութիւնը բարձր պահելով եւ լրիւ ստանձնելով Օսմանեան պետութեան ենթակայ նուիրապետական եւ առաջնորդական բոլոր հայ կեդրոններու դէկը, ներառ-

եալ Երուսաղէմի Պատրիարքութիւնը, Սիսի եւ Աղթամարի Կաթողիկոսութիւնները, Եգիպտոսի, Իրաքի եւ Միջին Արեւելքի թեմական հաստատութիւնները:

Անվարան կրնանք աւելցնել, որ Ամրդոլէն Արմաշ եւ Արմաշէն Երուսաղէմ, ու ապա Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեվանք փոխանցումի հորիզոնական գիծը հետեւողական եղաւ, երբ նկատի ունենանք Արմաշական սերունդի պատկառելի դէմքերէն բարձրաստիճան հոգեւորականներ Մաղաքիա Օրմանեանն ու Եղիշէ Դուրեանը, Կիւլէսէրեան Բաբգէնն ու Գուշակեան Թորգոմը, բոլորն ալ նուիրապետական Աթոռներու նուիրեալ գահակալներ, որոնց շունչին տակ ուսանած նաեւ Փառէն Մելքոնեան եւ Շահէ Գասպարեան արմաշական եպիսկոպոսները, կարգաւ Երուսաղէմն ու Անթիլիասը արժանաւորապէս կնքեցին հին Ամրդոլի եւ իրենց ժամանակակից Արմաշի անկրկնելի աւանդով:

Երբ այս տողերը կը գրենք կը հաստատենք վերելի ընթացքը որպէս Անթիլիասի Դպրեվանքի միջին սերունդի աւարտականներէն մին թէ անցեալի կամուրջն ու ներկայի արգասիքը որքան հարազատ գնացքով զարգացան ու հասցուցին հոգեւորականներու ընտիր փաղանգ մը, թեկուզ տարբեր որակով եւ աստիճանով բաղդատմամբ անցեալի փառքին:

ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՏՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ



ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

**THE ARMENIAN PARIARCHATE OF JERUSALEM
DURING THE FIRST WORLD WAR
Conquest of Britain, Exit of Turkey
December 9, 1917**

Political Scene

During World War I politically unsafe and uncertain situation dominated in Palestine under the Ottoman Turks until 1917 as the St. James Armenian Patriarchate remained vacant. Patriarch Harutyun Vehabedian had died in 1910, and in 1916 the Turkish authorities declared the ousted Catholicos Sahag II Khabayan of Cilicia “Patriarch-Catholicos” to reside in Jerusalem as an exiled pontiff, thus eliminating both, his headquarters, as well as Patriarch Zaven Der Yeghiayan and the Armenian Patriarchate of Constantinople. The ruling was entirely cruel, illegal and against the canons of the Armenian Church.

Having no choice Catholicos Khabayan consented with the orders given, along with a ridiculous Turkish bylaws dictated by the Turkish government and imposed on him. The Catholicos remained in Jerusalem only 15 months, while Patriarch Zaven was exiled to his native Iraq. Soon the British army occupied Palestine and expelled the Turks, as the Armenian clergy were forced to leave by the Ottomans just before the British army sacked the Holy Land. Patriarch Zaven returned to his patriarchal office three years later as the British army occupied Baghdad. His patriarchal tenure ended in 1922, from 1914 including the three years of interruption.

While the political scene was upside down and unstable, the St. James Armenian Patriarchate was left unattended with only a couple of resident bishops, Mkrtich Aghavnouny and Yeghishe Chilingirian remaining. Mesrob Vartabed Neshanian was the single faithful member of the Patriarchate who stood firm from way back before the turn of the century to preserve the status quo of the Patriarchate internationally. The British army invaded as we read from Mesrob Neshanian’s documented diary, as to when and what had happened between Turkey and the victorious Great Britain. His description of events is most original, reliable and the only one reached us as an accurate chronology. Bishop Neshanian was successively elected Grand Sacristan in 1922, Locum Tenens twice in 1930 and 1939, and Patriarch of Jerusalem in 1939. He passed away in 1944.

**The Invasion of Great Britain
Eyewitness’ “Diary 1917”**

Bishop Mesrob Neshanian wrote his valuable “Diary 1917” as an eyewitness on the conflict between the Turks and the British when the Turks were chased out of Palestine. He wrote how on Saturday November 24, 1917, the bishops and a few leading members of the Brotherhood were taken to the police station, following the orders of the Ottoman Turks, including Catholicos Sahag II Khabayan. Father Mesrob Neshanian had accompanied them, stating that

“the same evening they were taken to Damascus in three wagons” before he had returned back to the Patriarchate.

Neshanian further described the fight on Sunday the next day between the British and Turkish armies which lasted 6 days. The Ottomans, well organized, had placed tanks around the Russian monastery. They were successful to chase back the British army taking 11 hostages, but suffering 1200 and more casualties with many more injured. On December 3, Father Mesrob Neshanian was called by the Turks to appear in the municipality and was told they needed help with clothing and blankets as a contribution from the Armenian Patriarchate. He did his share and satisfied them.

As an eyewitness Neshanian entered in his “Diary” that the British had the upper hand. In the early morning of December 8-9, they captured Ain Kerim as he was watching from the roof of the Patriarchate the pouring of bombs so fiercely, like “hellish fire pouring down by the British coming from the top of Nebi Samuel.” On Sunday, December 9, 1917, he wrote: “today 400 years’ tyranny ended on the Holy City. No more Turks around, but only British kind people, generals and soldiers, who brought freedom to the Holy Land”.

Patriarch Yeghishe Tourian (1921-1930)

There was no Patriarch in Jerusalem for more than a decade until the election of the venerable former Patriarch of Constantinople Archbishop Yeghishe Tourian in 1921. There was however the problem of the electoral procedure of the candidate since the Patriarchs of Jerusalem were elected by the National Assembly of the Armenian Patriarchate of Constantinople in Istanbul. Politically the British authorities rejected such interference having Patriarch under their mandate elected in Turkey. A fast move was necessary and a request was submitted to the British authorities to have the election as before “just for the last time only”. Permission was granted, election in Constantinople took place, and the new Patriarch Yeghishe Tourian arrived in Jerusalem. New bylaws drafted in the interim and the next Patriarch was elected by the members of the Brothhood exclusively.

Under Patriarch Tourian

The Patriarchate needed bishops urgently, and three candidates, headed by Mesrob Vartabed Neshanian were recommended by Patriarch Tourian to travel to Holy Etchmiadzin to receive episcopal ordination: Mesrob Neshanian, Matteos Kayekjian, and Smbat Kazazian were ordained by His Holiness Kevork V Catholicos of All Armenians in September 1924. Soon two important institutions were built, the Tarkmanchats Elementary School and the Gulbenkian Library under the shades of the St. James Cathedral. Hundreds of children attended and graduated from the school with a wealth of knowledge as of today with limited numbers, and the elegant Library remains the house of thousands of books unmatched outside motherland.

REVD. FR. ZAVEN ARZOUMANIAN, PhD

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ**ՏԵԼԻՉԵԱՆ ԽՆԴԻՐԸ****Է. - Ը.****Ս. ԳԻՐՔ ԵՒ ԲԱԲԵԼՈՆ****ԱՇԽԱՐՀԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ****Տախտակ Բ.**

1) Անշար բացաւ իր բերանը եւ ըսաւ, 2) Կակային՝ իր օգնականին 3) «Կակա, իմ սիրտս բերկրեցնող ծառաս, 4) Լախամուին պիտի ղրկեմ քեզ, 5) Դուն կրնաս իմ հրամանս կատարել, 6) ... Բեր ինծի 7) ... Բոլոր աստուածները 8) Թող զբօսնուն, խնճոյքով թող կշտանան, 9) Հաց թող ուտեն, գինի խառնեն, 10) Մարտուքը, իրենց օգնականը, թող տէր նշանակեն. 11) Գնա՛ Կակա անոնց քով, 12) Ինչ որ քեզ կ'ըսեմ հաղորդէ անոնց. 13) «Անշար Ձեր որդին ղրկեց զիս, 14) Պատուէր տուաւ ինծի, 15) Դիամադ, մեր մայրը թշնամի է մեզ, 16) Խումբ մը կազմեց, լի ցասմամբ կը խռովի, 17) Աստուածները կը շրջապատեն զանիկա, 18) Նոյնիսկ անոնք, զորս դուք ստեղծած էք, անոր կ'օժանդակեն, 19) Անոնք համախումբ Դիամադի հետ են: 20) Անոնք կըռուայոյզ ծրագիրներ կը մշակեն, գիշեր ցերեկ անդադար: 21) Անոնք պատերազմի կը պատրաստուին եւ ռազմասէր են (?) 22) Անոնք համախմբուած են եւ կռուի կը պատրաստուին: 23) Եսուպուր մայրը, տիեզերքի ստեղծիչը, 24) անդիմադրելի զէնքեր պատրաստեց, հսկայական իժեր ծնաւ, 25) սուր ժանիքներով եւ անողորմ ճիրաններով (?) 26) Արեան տեղ թոյնով լեցուց անոնց մարմինները, 27) ահարկու դեւեր ստեղծեց ան եւ սոսկումով գօտեպնդեց զանոնք, 28) սարսափով զարդարեց զանոնք (?): 29) Ով զանոնք կը տեսնէ պէտք է անոնց ոտները իյնայ, 30) անոնց մարմինը ուղիղ կը քալէ եւ կուրծքերին չխոնարհիր: 31) Անիկա կանգնեցուց Պաշտօն կատարող օձը եւ Լախամու, 32) հսկայական սատանան, կատղած շունը եւ կարիճ-մարդը, 33) կռուայոյզ ումունքներ, ձուկէ մարդը եւ խոյր ստեղծեց ան, 34) որոնք անխնայ զէնքեր կը կրեն եւ ռազմէ չեն վախնար: 35) Յարձակումի մէջ հզօր են անոնք եւ անդիմադրելի: 36) 11 հատ այսպիսի արարածներ ստեղծեց ան, 37) իր նախածին աստուածներէն, զորս իր շուրջն հաւաքած էր, 38) անիկա բարձրացուց գթինկու եւ անոնց վրայ տէր կացուց, 39) իբր զօրավար, իբր հրամանատար խումբին, 40) որպէսզի զէնք առնեն պատերազմի սկսին, 41) պատերազմի հրամանատարութիւնն անոր յանձնեց 42) եւ իշխանութեան զգեստ հագցուց անոր. 43) «Ես կանչեցի քեզ եւ աստուածներու խումբին տէր ըրի, 44) բոլոր աստուածներու տիրապետութիւնը քեզ յանձնեցի: 45) Դուն պէտք է իշխես, իմ միակ ամուսինս. 46) Բոլոր Անուննաքիներէն աւելի պիտի փառաբանուիս դուն»: 47) Ան Քինկուի՝ ճակատագրի տախտակներն տուաւ, զանոնք անոր կուրծքին վրայ ամրացուց, 48) «Դուն, քու հրամանդ երբեք պիտի չփոխուի, ան անսասան պիտի մնայ»: 49) Քինկուի բարձրանալէն եւ աստուածպետ ըլլալէն ետքը, 50) անոնք աստուածներուն իրենց զաւակներուն պատուէրներ տուին, 51) «Եթէ ձեր բերանը բացուի, ան կրակը պիտի մարէ, 52) տիեզերքին մէջ բարձրագոյնը, հզօրը խոնարհ է: 53) Ես զԱնու ղրկեցի, ան չկրցաւ անոր դէմ ելլել: 54) Դա վախցաւ եւ յետ դարձաւ: 55) Պատրաստ է

Մարտուփը, աստուածներէն յանձնարարուածը, ձեր որդին, 56) Դիամադին դէմ ելլել կ'ուզէ ան, ան ինձ ըսաւ. 58) «Եթէ ես իբր ձեր օգնականը 59) Դիամադը զսպեմ եւ ձեզ ազատեմ 60) Այն ատեն ժողովուեցէք եւ նորէն որոշեցէք աշխարհի կարգը: 61) Ուրշաքիննայի մէջ ուրախ զուարթ նստեցէք դուք, 62) իմ խօսքով ձեր տեղ աշխարհի կարգը պիտի սահմանեմ ես: 63) Ինչ որ ստեղծեմ պիտի չփոխուի, 64) իմ շրթունքիս պատուէրը անկատար պիտի չմնայ, ետ պիտի չառնուի: 65) Փութացէք եւ յանձնեցէք շուտով անոր ձեր արտօնութիւնները, 66) որպէս զի ան երթայ եւ ձեր հզօր թշնամունջն դէմ ելլէ» 67) Կակա գնաց եւ իր ուղին շարունակեց, 68) իր աստուածային ծնողաց Լախմուի ու Լախամուի քով, 69) ան խոնարհեցաւ, երկիրպագեց, իրենց ոտքերուն պատւանդանը 70) շօշափեց ան, ոտքի ելաւ եւ ըսաւ, 71) «Անշար, ձեր որդին խրկեց զիս, 72) իր սիրտին իղձը ինծի յայտնեց, 73) —որ Դիամադ՝ մեր ծնողը մեզի թշնամի է, 74) Եւ բազմութիւն մը կուտած է, ցասումնալից կը փաթորկի, 75) բոլոր աստուածները շրջապատած են զայն, 76) նոյն իսկ ձեր ստեղծածները անոր կ'օգնեն, 77) անոնք համախումբ Դիամադի հետ են: 78) Անոնք կատղած ծրագիրներ կը դարբնեն, գիշեր ցերեկ անդադար: 79) Անոնք պատերազմի կը պատրաստուին եւ ռազմասէր են (?), 80) անոնք համախմբուած են եւ պատերազմի կը պատրաստուին, եւ այլն»:

Ապա կը կրկնուի այս տախտակի 23-8 տողէն սկսեալ ստեղծուած հրէշներու նկարագրութիւնը եւլն. մինչեւ 65-8 տող Բէլին մարտի արտօնութիւն ստանալը 80-124 տող.

125) Երբ այս լսեցին Լախմու եւ Լախամու բարձրաձայն գոչեցին, 126) բոլոր Իկիկները ողբացին, 127) «Ի՞նչ պատճառ կայ թշնամութեան...», 128) Դիամադի ըրածը չենք հասկնար» 129) ... եւ անոնք գացին. 130) բոլոր մեծ աստուածները, որոնք աշխարհը կը ղեկավարեն, 131) Անշարին քով գացին, (սրահը) լեցուցին, 132) զիրար համբուրեցին եւ միասին կեցան: 133) Անոնք խօսեցան, ապա խնջոյքի նստան, 134) անոնք հաց կերան եւ գինի խառնեցին. 135) քաղցր խմիչքը արբեցուց զանոնք... 136) Խմելու ատեն անոնց փորը լեցուեցաւ, 137) անոնք արբեցան, ոգեւորուեցան, 138) Մարտուփին, իրենց օգնականին՝ յանձնեցին աշխարհի կառավարութիւնը:

Տախտակ Գ.

1) Անոնք նստեցուցին զայն... աթոռին վրայ, 2) իր հարսը առջեւ նստաւ ան իբր իշխան: 3) «Դուն մեծ աստուածներէն յարգուած ես, 4) քու դիրքդ աննման է, քու պատուէրդ Անու է (= Բարձրագոյն աստուած): 7) Քու հրամանդ երբեք պիտի չըփոխուի, 8) քեզմէ կախուած է բարձրացնել եւ խոնարհեցնել, 9) քու ըսածդ պիտի կատարուի, քու պատուէրդ անարժէք պիտի չմնայ: 10) Աստուածներէն եւ ո՛չ մէկը քու ցանկապատդ պիտի անցնի, 11) ճոխ են աստուածներու տաճարները, 12) Անոնց հետ միասին պիտի պաշտուիս դուն, 13) Մարտուփ, դուն ես մեր օգնականը, 14) ամբողջ տիեզերքի իշխանութիւնը քեզի կը յանձնենք: 15) Եթէ դուն աստուածներու ժողովին մէջ ըլլաս, բարձր պիտի գնահատուի քու խօսքդ: 16) Քու զէնքերդ անպարտելի պիտի ըլլան եւ քու թշնամիներդ պիտի խորտակեն: 17) «Ո՛վ տէր, ով որ քեզ ապաւինի, փրկէ՛ անոր կեանքը, 18) բայց եթէ նոյն իսկ աստուած մը չարութիւն ընէ՝ կենագրաւ ըրէ զայն»: 19) Անոնք զգեստ մը դրին իրենց շրջանակին մէջ 20) եւ ըսին Մարտուփին՝ իրենց անդրանկին, 21) «Քու դիրքդ, ո՛վ տէր, աստուածներէն բարձր է: 22) Եթէ դուն հրամայես ստեղծել կամ ոչնչացնել, այդպէս ալ կ'ըլլայ: 23) Քու հրամանդ պիտի ոչնչացնէ զգեստը. 24) եւ եթէ հրամայես, թո՛ղ դարձեալ ըլլայ, զգեստը անփոփոխ կը մնայ»: 25) Ան իր բերնով հրամայեց եւ զգեստը ստեղծուեցաւ. 27) երբ իր հրամանին

կատարուիլն տեսան աստուածները իր ծնողները, 28) ուրախացան եւ մեծարեցին զայն... 29) Անոնք տուին Մարտուքին գաւազան, աթոռ եւ Բալու... 30) Անոնք տուին անոր անդիմադրելի զէնք մը, որ թշնամիները կը խորտակէ: 31) Գնա՛ եւ կտրատէ Դիւամադի կեանքը, 32) Թող հովը անոր կեանքը դէպի խորքը տանի: 33) Երբ այսպէս անիկա Բէլ (տէր) անուանեցին աստուածները, անոր հայրերը, 34) փրկութեան եւ երջանկութեան շաւիղը առաջնորդեցին զայն: 35) Անիկա աղեղ մը շինեց եւ իրեն զէնք ըրաւ, 36) նիզակ մը պատրաստեց աշտէի պէս նետելու համար(?) 37) Միդդու մը առաւ իր աջ կողմը, 38) աղեղ եւ կապարճ կախեց իր կողքին, 39) իր առջեւ կայծակ մը դրաւ: 40) Եւ բոցավառ կրակով լեցուց անոր մարմինը: 41) Անիկա ցանց մը շինեց Դիւամադը անոր մէջ բռնելու համար: 42) Չորս հովերու ուղղութեամբ ամրապնդեց զայն, այնպէս որ բան մը չէր կրնար անկէ խուսափիլ, 43) Հարաւ, Հիւսիս, Արեւելք, Արեւմուտք, 44) դրաւ այդ ցանցը, որ իր հօր Անուի ընծան էր: 45) Անիկա չար քամի մը ստեղծեց, փոթորկայոյզ հովը, 46) 4 հովեր, 7 հովեր, թաթար, փոթորկի քամին: 47) Ան բաց թողուց քամիները, զորս ինք ստեղծած էր, եօթն ալ, 48) անոնց մէջ Դիւամադը շփոթելու համար, որպէս զի ինք ալ անկէ ետքը յարձակի: 49) Աստուած առաւ փոթորիկը, իր ամենամեծ զէնքը, 50) Նստաւ իր պատերազմի կառքը, անդիմադրելի հսկայական փոթորկին վրայ, 51) Քառաձի լծեց զայն, իր քովն ունէր Բէլ 52) Իր անգութ մտրակը(?), որ թեւաւոր էր եւ կը սրբէր ամէն ինչ, 53) անոր սուր ծայրերը թունաւոր էին (Ս. Գրոց կարիճը) 54) Որոնք կ'ոչնչանան, բնաջինջ կ'ընեն, 55) Սոսկալի են պատերազմի ատեն, 56) Աշուձախ չեն խուսափիր... 57) Սարսափի զգեստով մը... ծածկուած էր ան, 58) Չքացնող սոսկումով մը պատած էր անոր գլուխը, 59) Մարտուք ճամբայ ելաւ իր պողոտային հետեւելով 60) Իջաւ ան Դիւամադին քով, որ զարհուրելի է, երեսը դարձուց, (61 աղաւաղուած), 62) Կախարդական խոտը ձեռքին (63-64 աղաւաղուած): 65) Տէրը պատրաստուեցաւ պատերազմի Դիւամադին մօտենալով, 66) Նշան առաւ Քինկուին ու անոր ամուսինին 67) Երբ այն Մարտուքը տեսաւ՝ վրդովեցաւ, 68) Իր միտքը խռովեցաւ, անկարգութեան մատնուեցաւ. 69) Այսպէս այն աստուածները, որոնք անոր հետ էին: 70) Տեսան զայն... եւ շփոթեցան 71) Անու (տեսաւ) զԴիւամադ, առանց խուսափելու 72) Որ իր շրթունքներուն վրայ զգուանք կուտած էր (?): 73) «Աստուածները կը տեսնեն քու, տիրոջդ պատերազմի ելլելը. 74) Իրենց վայրերէն անոնք հաւաքուած են, քու մօտ են անոնք»: 75) Տէրը բարձրացուց փոթորիկը՝ իր մեծ զէնքը 76) Դիւամադի դէմ, փրկելու համար զրկեց զայն հետեւեալ բառերով. 77) «Դուն քեզ մեծցուցիր, քեզ բարձրացուցիր. 78) Քու սիրտդ ուզեց պատերազմ ընել: 79) Աստուածները՝ քու օգնականներն ըմբոստացան իրենց ծնողաց դէմ, (80 աղաւաղուած) 81) Դուն զՔինկու քեզ ամուսին կարգեցիր, 82) զանիկա աստուածապետ նշանակեցիր: 83) Չար ծրագիրներ յղացար, 84) Իմ աստուածային ծնողաց դէմ քու չարութիւնդ իրագործեցիր: 85) Թէպէտ քու խումբերդ կազմ ու պատրաստ են եւ քու զէնքերդ կը կրեն, 86) Հապօ՛ն, ես եւ դուն մենամարտինք»: 87) Երբ Դիւամադ այս լսեց, 88) Խելքը կորսնցուց: 89) Դիւամադ գոչեց ահեղաձայն, 90) հիմնովին եւ համահաւասար ձեւով սարսեցաւ ան: 91) Անիկա կախարդական բանաձեւ մը ըսաւ, 92) Եւ պատերազմի աստուածները շարժեցին իրենց զէնքերը: 93) Դիւամադ եւ աստուածներու խորհրդատուն (?) Մարտուք՝ իրար մօտեցան, 94) Պատերազմի ելան իրարու դէմ, ճակատ յարդարեցին: 95) Այն ատեն տէրը իր ցանցը փռեց եւ ընդգրկեց զայն, 96) Փոթորկի քամին, որ ետեւը կանգնած էր, բաց թողուց ան: 97) Երբ Դիւամադ իր երախը բացաւ զայն կլլելու համար, 98) Փոթորկի քամին ներս խուժեց եւ շթողուց որ ան իր շրթունքները գոցէ, 99) հովի հօր հոսանքներ լեցուցին անոր փորը. 100) Իր ներքին աշխարհը ուռեցաւ եւ երախը պատռեց: 101) Մարտուք զարկաւ իր նիզակով եւ

կտոր-կտոր ըրաւ անոր մարմինը, 102) Անոր ներսիդին ծակծկեց, եւ կտրատեց անոր աղիքը, 103) Ան զսպեց զայն եւ ոչնչացուց անոր կեանքը. 104) Իր դիակը մէկդի նետեց եւ անոր վրայ կանգնեցաւ: 105) Երբ ան Դիամաղը, որ ամենուն առջեւէն կ'երթար յաղթեց, 106) Յիրուցան եղաւ անոր զօրքը, անոնց զօրութիւնը ցրուեցաւ, 107) Եւ աստուածները, անոնց օգնականները, որոնք անոր կ'օգնէին, 108) Թողուցին, վախցան եւ փախան, 109) Անոնք իրենց կեանքը ազատեցին: 110) (Բայց) անոնք այնպիսի ցանցէ մը շրջապատուած էին, որմէ անկարելի էր դուրս ելլել, 111) Մարտուք կապեց զանոնք եւ ոչնչացուց անոնց զէնքերը, 112) ցանցին մէջ ինկած, նստած էին անոնք պարտուած 113) Ներքին աշխարհը ողբերով լեցուեցաւ. 114) Իրենց պատիժը կը կրէին բռնուած եւ արգիլուած էին:

Տախտակ Գ.

115) Այն 11 արարածներն, որոնք սոսկալի էին 116) Միլրու դեւերը... (աղաւաղւած) 117) շղթայեց ան (Մարտուք), անոնց բազուկները... 118) եւ ոտնակոխ ըրաւ անոնց դիմադրութիւնը: 119) Նոյնպէս զՔինկու, որ անոնց վրայ կ'իշխէր, 120) զայն ալ շղթայեց եւ բանտարկեց... 121) Ան խլեց բախտի տախտակները, որ անոր չէին, 122) կնքեց զանոնք եւ կախեց իր կուրծքին վրայ: 123) Իր հակառակորդը բռնելէն... 124) եւ ըմբոստացող թշնամին խոնարհեցնելէն ետք, 125) հաստատեց Անշարի յաղթութիւնը իր թշնամիին դէմ: 126) Էայլ յաղթութիւնը ձեռք բերած էր քաջամարտն Մարտուք, 127) եւ գերի աստուածները բանտարկելէ ետք, 128) դարձաւ ան Դիամաղին, զոր ինք նուաճած էր: 129) Տէրը Դիամաղի խորքն իջաւ 130) իր անգութ զէնքով ճեղքեց Դիամաղի գանկը, 131) անոր արեան երակները կտրեց ան, 132) հիւսիսային քամին թաքուն տեղեր փոխադրեց: 133) Իր հայրերը տեսան եւ ուրախացան ու խնդացին, 134) ընծաներ բերին անոր բարեմաղթութեան տեղ, 135) վերջապէս տէրը մօտեցաւ Դիամաղի դիակին, 136) անիկա բաժնեց ան ծրագիրներ յղանալով, 137) ան մէջքէն կտրեց զանի ինչպէս ձուկ մը երկու մասի: 138) Իր կէսը անիկա կանգնեց եւ երկինքի վրայ հովանի սփռել տուաւ, 139) սահման գծեց անոր, պահապաններ կանգնեց, 140) ան հրամայեց՝ որ (Դիամաղի) ջուրերը դուրս չելլեն, 141) երկինքն ու դժոխքը հիմնեց ան, 142) երկինքը նախնական ջուրի, էայլ բնակարանին դիմաց կանգնեց: 143) Անկէ ետք տէրը չափեց նախնական ջուրի զօրութիւնը, 144) եւ կանգնեց մեծ շէնք մը Էշարայի նման, 145) հսկայական Էշարայն, զոր ան երկինք կոչեց: 146) Անու, Բէլ եւ Էա իրենց բնակարանները քաշուեցան:

Տախտակ Ե.

1) Մեծ աստուածութեանց համար բնակավայրեր շինեց ան, 2) երկնային մարմիններ կառոյց ան կենդանակերպերու նման, 3) ան տարին որոշեց եւ սահմաններ դրաւ անոր: 4) 12 ամիս 3 մասի բաժնուած սահմանեց անոր: 5) Տարուան օրերուն համաձայն հաստատուն բաժանումներ դրաւ ան: 6) Անիկա կանգնեց Նիպիրուի տեղը, որպէս զի որոշէ անոր կապը: 7) Որպէս զի ո՛չ ոք սխալի կամ մոլորի, 8) անիկա որոշեց Բէլի եւ Էայլի տեղը, 9) երկու կողմէն դուռներ բացաւ 10) հաստատուն կղզանքներ դրաւ աջ ու ձախ 11) իր մէջը դրաւ բարձրագոյն կէտը: 12) Լուսինին լոյս տուաւ՝ որպէս զի գիշերը լուսաւորէ, 13) գիշերային մարմին մը ըրաւ զայն, օրերը որոշելու համար, 14) «Ամսաշրջանով, անդադար, միթին լուսնի սկաւառակով աներեւութացիր, 15) իւրաքանչիւր ամսուան սկիզբը երկիրը լուսաւորելու համար, 16) եղջիւրներդ թող փայլին 6 օրերը որոշելու համար, 17) 7-րդ օրը կիսէ սկաւառակը, 18) 14-ին ամէն ամիս (ընթաց-

քիզ) կէսը հասիր: 19) Եթէ Շամաշ, (= Արեւ) երկինքի վրայ քիչ... 20) ... լուսաւորէ անկէ ետքը. 21) (21-ին) մօտեցիր արեւի ճանապարհին, 22) (28-ին) արեւին պիտի հանդիպիս, անոր հետ միասին պիտի կանգնիս (23-74 ւերուած է արձանագրութիւնը): 75) Այն ցանցը, զոր Մարտուք շինած էր տեսան աստուածները, անոր հայրերը, 76) անոնք տեսան այն աղեղը, որ ճարպիկութեամբ պատրաստուած էր 77) եւ այն գործը որ այն աւարտած էր գովեցին անոնք... 78) Անու խօսեցաւ աստուածներու ժողովին մէջ... 79) գովեց աղեղը, 80) «Անիկա է...». 80) աղեղի անունները հետեւեալ կերպով թուեց ան. 81) «Երկարափայտն է անոր առաջին անունը, իսկ միւսը... 82) իր երկրորդ անունը Երկնակամար է...». 83) անիկա որոշեց անոր տեղը... (84-149 ւերուած է):

Տախտակ Զ.

1) Երբ Մարտուք աստուածներու խօսքը լսեց, 2) յօժարակամ էր ան եւ խորամանկութիւն կը հնարէր. 3) Ան ըսաւ Էայիմ, 4) ինչ որ իր սիրտին մէջ կը խորհրդածէր յայտնեց անոր: 5) Իմ արինս կ'ուզեմ առնել եւ մարմին շինել... 6) ես կ'ուզեմ մարդ ստեղծել, մարդը պէտք է... 7) ես մարդ պիտի ստեղծեմ, որ պիտի բնակի... 8) աստուածները ներկայ պիտի ըլլան, անոնք սրբութիւններ... 9) ես կ'ուզեմ աստուածներու գործունէութիւնը փոխել, զանոնք փոխանակել... 10) բանով մը անոնք պէտք է յարգւին...: 11) Էա պատասխանեց անոր եւ ըսաւ... (13-146. աղաւաղուած է):

Տախտակ Է.

1) Ասարու, արգասաբերութեան պարգեւատուն, որ աւօսներ կը բանայ, 2) որ ցորենն ու բոյսերը կ'աճեցնէ եւ կանաչեղէնը ծլել կու տայ, 3) Ասարու-ալիմ, որ ուշեղ խորհրդատու է, եւ թափանցող միտք ունի, 4) աստուածները կը լռեն, կը վախնան... 5) Ասարու-ալիմ-նուննա, օգնականը, իր ծնողին հօր լոյսն է, 6) որ Անուփ, Բէլի եւ Էայի գործերը կը հոգայ: 7) Ան կը պահպանէ զանոնք. կ'որոշէ... (8 ւերուած է) 9) Դուդու, իրենց աճումին ստեղծագործողն է: 10) Եթէ անոր... մաքուր է, հանգիստ են անոնք, 11) եթէ աստուածներու միտքը բարի է հանգիստ են անոնք, 12) եթէ անոնք բարկութեամբ յարձակին, ան կը նուաճէ: 13) Այս պատճառով անոնք զայն միւս աստուածներէն աւելի պիտի բարձրացնեն... 14) աստուածներէն եւ ո՛չ մէկը անոր պիտի հաւասարի: 15) Դուդու, Զիուկիմնա, (=) աստուածներու կեանքը, 16) որ աստուածներուն լուսաւոր երկինքը ստեղծեց, 17) անոնք գործեցին՝ իրենց ուղին որոշեցին: 18) Պէտք չէ մոռնալ... 19) Դուդու, Զի-ազակ երրորդ անունն է անոր, որ կը մաքրէ, 20) բարի կամքի աստուած, լսող եւ պարգեւող, 21) որ լրութիւն եւ ճոխութիւն կը ստեղծէ, շռայլութիւն կը ծնի, 22) որ ամէն պզտիկ բան կը մեծցնէ, 23) այն շունչը, որուն ներշնչումով մահէն կարելի է փրկուիլ, 24) պէտք է հռչակել, գովաբանել, պատուել իր հռչակը: 25) Դուդու, ալա-ազակ, ամէնքը պէտք է փառաբանեն (իր) չորրորդ (անունը), 26) Զուտ կախարդութեան տէրը, որ մեռեալները կը յարուցանէ, 27) որ գերի աստուածները կը փրկէ, 28) թշնամի աստուածութեանց վրայ կը դնէ անոնց լուծը, 29) զանոնք փրկելէն ետք ստեղծեց ան մարդկութիւնը, 30) ողորմածը, որ կրնայ կեանք շնորհել: 31) Իր հրամանները պէտք է տեսնել եւ չոչնչանան 32) մարդոց բերանէն, զորս իր ձեռքերը ստեղծեցին: 33) Դուդու, Դու-ազակ, հինգերորդ՝ իր մաքուր կախարդութիւնը պիտի մնայ անոնց բերնին մէջ, 34) Որ իր մաքուր կախարդութեամբ թշնամիներու ապաստարանները աւերեց: 35) Շակ-ցու, որ աստուածներու սիրտը կը ճանչնայ, որ իր ներքինը կը քննէ, 36) որ չարագործը չհանդուրժեր, 37) որ աստուածներու ժողովներ կը կազմակերպէ... 38) ան կը նուաճէ անհնազանդները... 39) որ արգարութեամբ կը դատէ, 40) որ ընդդիմութիւնը եւ... 41)

Դուդու, Յի-զի, որ... (42 բոլորովին արուած է), 43) Դուդու, Շուխուր, երրորդ, թշնամիները կը խորտակէ, 44) Անոնց միութիւնը կը խանգարէ... (46-47 արուած է):

Եւ Ան ստեղծեց աշխարհի մասերը, շինեց մարդը (2-8 արուած է), (Ե 1-19 եղծւած է եւ քանի մը բառ միայն ընթեռնլի մնացած), (Ժ 1-4 դարձեալ արուած է), 5) Սանկալ-տուր-մախ, աստուածներու խումբին թագաւորը, Տուր-մախի տէրը, 6) որ վեհ է իբր արքայ, 7) որ աստուածներէն վեհագոյնն է, 8) Ա-տունուննա աստուածը, էայի խորհրդականը, իր հայրերուն աստուածներուն, 9) որուն իր վեհափառութեամբ 10) եւ ո՛չ մէկ աստուած կրնայ հասնիլ 11) ... Տու-ազակ զայն կը ճանչնան, 12) ... իր մաքուր բնակարանը, 13) ... գերազանց չեն Ունկալ-տու-ազակա. 14) ... բարձր են զօրութիւնները 15) ... դուք ... ծովին մէջ (16-105 արուած) 106) ... այն լուսաւորը, որ երկինքի վրայ կը փայլի, 107) որ առջեւը ետեւ կը դարձնէ, երբ անոնք իրեն կը նային, 108) եւ որ Դիամադի միջով կ'անցնի առանց յոգնելու 109) Նիպիրու թող կոչուի ան, մէջտեղէն կ'երթայ, 110) լուսաւորներու շաւիղը թող որոշէ ան, 111) ոչխարի պէս կարծին աստուածները, 112) ան պէտք է կապէ զԴիամադ, անոր կեանքը ճնշէ եւ վերջացնէ: 113) Մարդկութեան ապագային մէջ, վերջին օրերուն մէջ (114 աղաւաղուած), 115) որովհետեւ ան ստեղծեց երկիրն եւ հաստատութիւնը դրաւ: 116) Բէլ հայրը իր անունն «երկիրներու տէր» դրաւ: 117) Այն անունները, որք իկիկի (գերագոյն աստուածներ) կոչուեցան ամէնքն ալ 118) լսեց էա, իր սիրտը ուրախացաւ: 119) «Այն, որուն անունները իր հայրերը փառաւորեցին, 120) իր անունը թող իմինիս նման էա կոչուի: 121) Ան պէտք է իմ իրաւասութեան բոլոր սահմաններուն տիրէ, 122) բոլոր իմ պարտականութիւններս հոգայ»: 123) 50 անունով կոչեցին զայն մեծ աստուածները¹ 124) Իր 50 անունները մեծցուցին իր գործունէութիւնը: 125) Անոնք պէտք է պահուին եւ առաջինը (քահանայապետը ?) պէտք է ուսուցանէ զանոնք, 126) իմաստունն ու գիտնականը պէտք է անոնց մասին մտածեն: 127) Հայրը պէտք է զանոնք աւանդէ, իր որդիներուն ուսուցանէ, 128) հովուին եւ խաշնարածին ականջը բանայ (հմմ. Դուկաս. Բ. 8-12): 129) Ան կ'ուրախանայ աստուածներու տէր՝ Մարտուֆին համար, 130) իր երկիրը պիտի ծաղկի, ան ինք-զինք երջանիկ պիտի զգայ: 131) Հաստատուն է իր խօսքը, իր հրամանը անփոփոխելի, 132) իր բերնէն ելած խօսքը Աստուած մը պիտի չփոխէ, 133) երբ ան բարկանայ իր կռնակը պիտի չդարձնէ, 134) երբ ան զայրացած է իր կատաղութեան աստուած մը պիտի չզիմագրաւէ: 135) Ազնուասիրտը, ամէն ինչ զգացողը, (136-142 աղաւաղուած):

- Ահա՛ վերջացուցինք ստեղծագործութեան բաբելոնեան բնագրերու թարգմանութիւնը, զորս Տէլիչ չէր հրատարակած՝ ինչպէս նախորդ բնագրերը: Ասորա-բաբելական բնագրերու շարք մը հրատարակութիւններ կան այժմ, մենք արդի բնագրերը առած ենք Հիւկօ Վիմֆլէրի Keilinschriftliches Textbuch - (Սեպագրական բնագիր) գիրքին երկրորդ հրատարակութենէն, որ լոյս տեսած է Լայփցիկի մէջ 1903-ին:

Գալ անգամ պիտի խօսինք այս բնագրերու Ս. Գրոց հետ ունեցած առնչութեան վրայ:

ՏՕՔԹ. 3. ԹՕՓՃԵԱՆ

Բերա - Կ. Պոլիս, 1906

(Շար. 6)

¹ Մարտուֆ 50 կը կոչուի, որովհետեւ 7x50+4=364 կը կազմեն տարեկան շրջանը, եւ Նիպերու շրջանառութեան վերջաւորութիւնը:

ՎԻՄԱԳՐԱԿԱՆ**ԱՂԹԱՄԱՐԻ ՄԻ ՎԻՄԱԳՐԻ ՎԵՐԾԱՆՄԱՆ ՇՈՒՐՋ**

Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու հարաւային ճակատին՝ որթագալարից անմիջապէս ներքեւ, նկատելիօրէն դուրս ցցուած կենդանաքանդակից անմիջապէս վերեւ երեւում է վիմագիր արձանագրութիւն։ Այն արձանագրուած է երեք քարերի մակերեսին, որոշակիօրէն մաշուած եւ հողմահարուած է։ Մեր յօդուածը նուիրուած է աղթամարեան այս արձանագրութեան ընթերցմանը եւ պատմական համատեքստի քննութեանը։

Արձանագրութեան մեր վերծանումը հետեւեալն է¹.

ՅԱՇԵԱՐՀԱԿԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵՆ [ԱՔԱՂԱ Ղ]

ԱՆԻՆ ԵՒ Ի ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԻՍ :Ձ [ԻԹ (°): ՍՏԵ]

ՓԱՆՈՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂ. ՅՈՒԹԵՐՈՐԴ ԱՄԻՆ [ՏԷՐՈ]

ԻԹԵ ԻՄՈ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԻ ԶԳՈՒՄԲԵ [ԹՆ ...]

ՍՐԲՈ ԽԱԶԻՍ ՈՐ ԷՐ ՇԻՆԵԱԼ Ի ՀԻՄԱՆ [....]

ԳԱԳԻԿ ԹԱԳԱՒՈՐՆ ՀԱՅՈՑ. ՈՎ Ո [Ր ՅԻՇ]

Է ՅԻՇԵՍՋԻՔ Ի ՏՐ:

Յաշխարհակալ Թագաւորութեան Աբաղա ղ/անին եւ ի Հայկազնեան Թուականիս

¹ Արձանագրութիւնը ընթերցել ենք Սասուն Դանիէլեանի լուսանկարից, ում յայտնում ենք մեր շնորհակալութիւնը:

։ԶԻԹ։ (1280) Ստե/փանոս Հայոց կաթողիկոս յութերորդ ամին տէրո/ւթեան իմո վերստին նորոգեցի զգումբեթն / Սրբո Խաչիս, որ էր շինեալ ի հիման ... / Գագիկ Թագաւորն Հայոց, ով որ յիշ/է, յիշեսչիք ի Տէր։

Վիմագիրը բաղկացած է եօթ տողից, սակայն տողերը կիսատ են մնացել, նշանակում է՝ եղել է եւս մի քար, որը յետագայում ընկել է կամ մաշուել ու նորոգութիւնների ժամանակ փոխարինուել է մէկ այլ քարով։

Ինչպէս երեւում է, վիմագրի երկրորդ տողում Աղթամարի կաթողիկոսի անունից պահպանուել է միայն «փանոս» վերջաւորութիւնը. հաւանաբար գրուած է եղել «Ստեփանոս»։ Ենթադրում ենք, որ Աղթամարի Ստեփանոս Գ. Տղայ հայրապետն է (1272 - մօտ 1293)², ով, ինչպէս յայտնի է այլ աղբիւրներից (ինչը կը տեսնենք ստորեւ), նորոգել է Սուրբ Խաչ եկեղեցու գմբէթը։ Վիմագրում թուականից պահպանուել է միայն առաջին տառը, այն էլ՝ բաւականին եղծուած վիճակում։ Հաւանաբար եղել է «Չ», որին գումարելով 551՝ կարող ենք ստանալ Հայոց Մեծ թուականով Ստեփանոս Գ. կաթողիկոսի կառավարման 8-րդ տարին, ինչը ենթադրուում է հիմնաւորուում է։ Եւ քանի որ Ստեփանոս Տղայի գահակալութեան ութերորդ տարին 1280 թուականն է, ենթադրուող թուականը վիմագրի մէջ պէտք է արձանագրուած լինի, թերեւս ԶԻԹ (729) տառերով։

Աշխարհիկ ղեկավարի անունը եւս ամբողջովին պահպանուած չէ, վիմագրի երկրորդ տողում մնացել են միայն վերջին «անին» տառերը։ Հայաստանը եւ յարակից երկրները XIII դարակէսից մինչեւ XIV դարակէսն ընդգրկուած էին Հուլաւեանների իշխանութեան կամ Իլխանութեան մէջ։ 1280 թ. Իլխանութեան գահակալը Աբաղա խանն էր (1234-1282 թթ.), ում անունը էլ հաւանաբար նշուած է եղել արձանագրութիւնում, ինչը թէւեւ վերականգնել ենք։

Վիմագրի երրորդ տողի թափուած հատուածը եւ չորրորդի սկիզբը վերականգնել ենք «[տէրո]ւթե»։ Զի բացառուում, որ գրուած է եղել «հայրապետութեան», սակայն այս բառը բաւականին երկար է վիմագրի թափուած հատուածի համար։ Չորրորդ տողի վերջին բառը եւս թափուած է, որին յաջորդում է Գագիկ Արծրունի արքայի անունը։ Ենթադրաբար, եղել է արքային յատկանշող որեւէ մակդիր կամ եկեղեցու հիմնադրման թուականը։ Հինգերորդ տողում թափուած հատուածը վերականգնել ենք «ով ո[ր յիշ]», սակայն կարող է լինել նաեւ «ով ո[ք յիշ]»։ Վիմագրերում եւ ձեռագիր յիշատակարաններում հանդիպում ենք ե՛ւ «ով որ», ե՛ւ «ով ոք» ձեւերը։

Այսպիսով, աղթամարեան այս վիմագրի բովանդակութիւնն այն մասին է, որ 1280 թ. Աբաղա խանի իշխանութեան օրօք Աղթամարի Ստեփանոս Գ. Տղայ կաթողիկոսը վերստին նորոգել է Գագիկ արքայի կառուցած Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու գմբէթը։

Անդրադառնանք սոյն արձանագրութեան նախկինում կատարուած ընթերցումներին։ Այս վիմագիրը տեսել եւ մասամբ ընդօրինակել է Մխիթարեան հայրերից Ներսէս Սարգիսեանը. «...խարհակալ Թագաւորութե... հայկազեան... զի զգումբէթ... Հայոց»³։

Յովսէփ Օրբելու դեռեւս անտիպ նիւթում՝ «Ахтамарские надписи», կայ արձանագրութեան գրեթէ ամբողջական ընթերցումը։ Ահա այսպէս է քննվող վիմագիրը տե-

² Աղթամարի Ստեփանոս Գ. Տղայ հայրապետի մասին տե՛ս Վ. Վարդանեան, Աղթամարի կաթողիկոսութեան պատմութիւն, Ս. Էջմիածին, 2017, էջ 34-37, Ն. Ակիճեան, Գաւազանագիրք Կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920, էջ 42-45։

³ Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 277։ Տե՛ս նաեւ Եր. Լալայեան, Վասպուրական. Նշանաւոր վանքեր, Թիֆլիս, 1912, էջ 18։

ղորոշել, ներկայացրել եւ վերծանել ակադ. Օրբելին՝ «На южной стене восточного крыла церкви св. Креста, вверху, под главным фризом надпись в 7 строк, инициальными буквами; правая часть надписи обрезана, вместо не достающегося вставлен новый камень; вероятно, в каждой строке не достаёт по 10 - 12 букв

ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԵՆ / ԱՆԻՆ ԵՒ Ի ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԻՍ / ԱՆՈՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԿ. ՈՒԹԵՐՈՐԴ ԱՄԻՆ / ԻԹԵ ԻՄՈ: ՎԵ--- ՆՈՐՈԳԵՅԻ ԶԳՈՒՄԲԵ / Ս--- ԽԱԶԻՍ ԶՈՐ ԷՐ ՇԻՆԵԱԼ Ի ՀԻՄԱՆ ԳԱԳԻԿ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՈՎ Ո / Ի ՅԻՇԵՍ --- ՔԻ ՏՐ»⁴: Հ. Օրբելու վերծանման մէջ ընթերցուած չեն որոշ տառեր, նաեւ՝ թուականի առաջին եւ միակ պահպանուած տառը, ճշդուած չեն վիմագրում նշուած անձինք: Արձանագրութեանն անդրադարձ կատարած հեղինակներից Սիրարփի Տէր-Ներսէսեանը սոյն արձանագրութիւնը վերծանել է մասամբ. «Յաղթական իշխանութեան... խան եւ հայկական թուականութեան եօթ հարիւր... Անոս կաթողիկոսի Հայոց, ութերորդ տարում... ես վերանորոգեցի գմբէթը... հիմքերից կառուցուած... Գագիկ թագաւոր Հայոց, ով որ... յիշեայ առ Տէր»⁵: Ս. Տէր-Ներսէսեանը ենթադրել է, որ վիմագրում նշուած է Ստեփանոս Գ. Տղայ կաթողիկոսի անունը. «Պէտք է ենթադրել, որ վերանորոգման թուականի մի մասը, իշխողի եւ կաթողիկոսի անունն սկզբնատառերը եղել են կորած քարի վրայ: Աղթամարի կաթողիկոսների ցուցակը մեզ թոյլ է տալիս ամբողջացնել անյայտ անունը, որովհետեւ միայն Ստեփաննոսն է, որ յարմարում է պահպանուած «ԱՆՈՍ» վերջին չորս տառերին: ... Այսպիսով, հաւանական է, որ արձանագրութեան մէջ յիշատակուած կաթողիկոսը Ստեփանոս Գ-ն էր»⁶:

Ինչպէս երեւում է, նախկինում կատարուած ընթերցումները եւ բացատրութիւնները ամբողջական չեն, ուստի սոյն յօդուածը քննուող վիմագրի ամբողջական ընթերցման եւ վերականգնման փորձ է: Աբաղա խանը, ում անունը նշուած է եղել վիմագրում, գահակալել է 1234-1282 թթ.: Նրա անունն յիշատակութեանը հանդիպում ենք իր օրօք գրուած տարբեր ձեռագրերում, օրինակ՝ 1273 թ. Պազարում Ատոմ գրչի ընդօրինակած Աւետարանում (ՄՄ 5559). «Արդ, գրեցաւ սայ ի ժամանակիս, որ է թիւ Հայական տումարի թուաբերութեան ԶԻԲ (1273), եւ է աշխարհակալ թագաւոր Ապաղայ, որ է սայ որդի Հուլայու ղանին, եւ են սոքա յազգէն մեծ տոհմին Զընգզ ղանին»⁷, եւ այլուր:

Որպէս կաթողիկոս, անկասկած, վիմագրում նշուած է Աղթամարի Ստեփանոս Գ. Տղայ հայրապետը: Աղթամարի վերոնշեալ կաթողիկոսը ծաւալել է բաւականին բուռն գործունէութիւն, որը դրսեւորուել է մի շարք շինարարական յիշատակութիւններում: Այսպէս այն, որ Ստեփանոս հայրապետը նորոգել է Սուրբ Խաչ եկեղեցու գմբէթը, վրկայուած է Աղթամարի Ներսէս եպիսկոպոսի 1471 թ. ընդօրինակած Մաշտոց ծիսարանի յիշատակարանում (ՄՄ 5702). «Եւ յետ այնորիկ յաջորդեաց զտեղի նորին եղբորորդին Տէր Դաւիթ. եւ յետ նորա Տղայ Տէր Ստեփանոսն, որ զսուրբ Աթոռոյ կուբէթն եւ սագերն եւ երկոտասան քարն ի հարաւակոյս կուսէ յօրինեաց եւ զանկան շինեաց»⁸: Ստեփանոս Գ. Տղան, ով Սէֆեդինի աւագ որդին էր, հայրապետական գահին է բազմել 1272 թ.: Այս թուականը թերեւս յստակ է, որովհետեւ նրա նախորդ Ստեփանոս

⁴ Архив Санкт-Петербургского филиала Академии Наук Российской федерации. Фонд 909, Оп. № 1. Ед. хр. 159, <Лист 3>.

⁵ Ս. Տէր-Ներսէսեան, Հայ արուեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 76-77:

⁶ Նոյնն տեղում, էջ 77:

⁷ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԳ դար, կազմ.՝ Ա. Մաթեոսեան, Երևան, 1984, էջ 438:

⁸ ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն Բ. (1451-1480 թթ.), կազմ.՝ Լ. Խաչիկեան, Երևան, 1958, էջ 308:

Բ. Սէֆեդինեանը վախճանուել է 1272 թ.-ին: Վ. Վարդանեանը նշում է. «Վանա լճից ոչ հեռու, Ս. Յարութիւն վանքի գերեզմանոցում պահպանուել էր նրա արձանագիրը դամբանաքարը, որտեղ նշուած է եղել ԶԻԱ (1272) թուականը: Ըստ այդմ, Ստեփանոս Բ.-ն աթոռակալել է XIII դ. կէսերից մինչեւ 1272 թուականը»⁹: Ստեփանոս Գ.-ին տրուած «Տղայ» մականունը վկայութիւն է երիտասարդ հասակում նրա աթոռակալման մասին: Նա եղել է Աղթամարի ամենայայտնի կաթողիկոսներից մէկը, ում անուան հետ է կապուում ոչ միայն Սուրբ Խաչ եկեղեցու գմբէթի նորոգումը, այլ 1293 թ. Աղթամարում Սուրբ Ստեփանոս եկեղեցու կառուցումը: «Հաւաքարան անուանց կաթողիկոսաց Աղթամարայ»-ում կարգում են հայրապետի այլ գործերի մասին եւս. «...Տղայ Տէր Ստեփանոսն, որ զՍբ. Խաչի գմբէթն սալեց ևս ԺԳ. (13) քար ի Սբ. Խաչի հարաւակողմն շինեաց, ևս շինեց զանգակն մի և զՍբ. Յովհաննէս և զՍբ. Նիշան մի յալանա մասն շինեաց յիշատակ հոգւոյ իւրոյ և բարի ծնողացն...»¹⁰:

Հայրապետի անունը հանդիպում ենք նաեւ Վասպուրականում ընդօրինակուած տարբեր գրչագրերում, ինչպէս նաեւ որոշ վիմագիր արձանագրութիւններում: Մեզ յայտնի ձեռագիր յիշատակարաններում հայրապետի մասին վաղագոյն վկայութիւնը 1276 թ.-ից է, որում Ռոմանոս վարդապետը 1276 թ. Ընծայեաց վանքում իր ընդօրինակած Աւետարանի յիշատակարանում գրում է. «Այլ աւարտեալ սա ի թուիս Հայոց ԶԻԵ (1276), յամսեանն մեհեկի Ը (8), ի տիեզերակալութեանն Ղուպիլա դանին, և յոստանիութեան Ապաղա դանին՝ որդոյ եղբաւ[ւ]ր նորին, եւ ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի որդի Զապէլ թագուհոյ, դստեր Լեւոն թագաւորի, եւ ի կաթողիկոսութեան տեառն Ստեփանոսի, եւ մեր ընդ հովանեաւ լեալ՝ Ընծայեաց Աստուածածինիս՝ ի գաւառիս Վասպուրականիս» (Վենետիկ, ձեռ. 453, հմր. 95)¹¹: Ստեփանոս Գ.-ի անունը հանդիպում ենք նաեւ 1277 թ. Աղթամարում Սիմէոն գրչի ընդօրինակած Աւետարանում (ՄՄ 208), 1287 թ. Արճեշ քաղաքում Գրիգոր Տաւուշեցու ընդօրինակած Վարդան Արեւելցու «Մեկնութիւն Սաղմոսաց» երկում (այժմ տեղն անյայտ), ուր հայրապետը կոչւում է «մեծ եւ անուանի», 1288 թ. Առեղս գիւղում Սարգիս գրչի ընդօրինակած Աւետարանում (ՄՄ 4810). «Եւթընհարիւրերորդի երես[ներ]որդի եւթներորդի (1288) ի Հայկազեան սեռիցս, ի հայրապետութեան տեառն Տղա Ստեփաննոսի, ի տիեզերակալութեան Ղուպիլա եւ ի կողմկալութեան Արղու», նոյն թուականին Արճեշում Սիմէոն գրչի ընդօրինակած Աւետարանում (ՄՄ 4851). «յամս աստուածապատիւ եւ երջանիկ հոգեւոր Տեառն Ստեփանոսի եւ ի թուաբերութեանս Հայկազնեան տումարիս ԶԼԵ», և այլուր¹²:

Մեծօրինական մօտակայքում գտնուող Յարութիւն գիւղի նոյնանուն եկեղեցու 1291 թ. շինարարական արձանագրութեան մէջ եւս հանդիպում ենք Ստեփանոս հայրապետի անունը: Վիմագիրը տեսել եւ արտագրել է Ներսէս Սարգիսեանը. «Ի ժամանակս տէրութեան Ուլաուն դանին, ես ծառայ ծառայիցն Աստուծոյ տէր Աբրահամ տեսուչ գաւառիս Քաջբերունոյ, տվաւ ինձ տեղիս այս տեառն է սորին Սահմադին կոչեցել, եւ շինեցի զեկեղեցիքս նախ զսուրբ Աստուածածինս, իսկ ի թագաւորութեանս Արղուն դանին, ի հայրապետութեանն տեառն Ստեփանոսի զսուրբ Յարութիւնս ի կորդոյ շինեցի:... Շինեցաւ սուրբ Յարութիւնս ի թիւս ԶԽ ի փառս Քրիստոսի»¹³:

⁹ Վ. Վարդանեան, Աղթամարի կաթողիկոսութեան պատմութիւն, Ս. Էջմիածին, 2017, էջ 34-35:

¹⁰ Հաւաքարան անուանց կաթողիկոսաց Աղթամարայ, լոյս ընծայեց՝ Մեսրոպ Վ. Մաքսուդեան, Ս. Էջմիածին, 1916, էջ 38-39:

¹¹ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԳ դար, էջ 462:

¹² Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԳ դար, էջ 469, 600, 614-616: Վ. Վարդանեան, նշում աշխ., էջ 35-36:

¹³ Ն. Ալիսեան, նշում աշխ., էջ 44:

Աղթամարի Ս. Ստեփանոս եկեղեցու բարաւորի 1293 թ. արձանագրութիւնում եւս յիշատակուած է Ստեփանոս հայրապետը. «Չեմք ի հայրապետութեան տեառն Ստեփանոսի շինեցաւ եկեղեցիս ծախիւք սրբասնեալ կրանաւորացն Սարգսի եւ Ստեփանոսի որդեացն Հոռոմշահի յարդար վաստակոց իւրեանց, կատարեցաւ յիշատակ հոգւոց իւրեանց եւ ծնողացն եւ ազգականացն, որք հանդիպիք յիշեցէք ի Քրիստոս»¹⁴:

Մխիթարեան հայրերից Ներսէս Ակինեանը Ստեփանոս Գ. Տղայի կաթողիկոսութեան տարիները դնում է 1272- մօտ 1296¹⁵: Վրէժ Վարդանեանը Ստեփանոս Գ.-ի կաթողիկոսութիւնը հասցնում է մինչեւ 1293/4 թուականները՝ հիմք ունեալով հետեւեալ փաստերը. կաթողիկոսի անունը նշուած է 1293 թ. վիմագրում եւ նոյն թուականին Վարագավանքում ընդօրինակուած Աւետարանի յիշատակարանում (ՄՄ 7488), իսկ 1294 թ. Արգելանում արտագրուած Աւետարանի յիշատակարանում (ՄՄ 4814) գրիչ Յակոբը արդէն իսկ նշում է յաջորդ հայրապետին՝ Ներսէս Ա.-ին¹⁶:

Այն հանգամանքը, որ Ստեփանոսը երիտասարդ հասակում է նստել հայրապետական Աթոռին եւ վաղաժամ վախճանուել, փաստում է նաեւ Արծրունեաց պատմիչը. «... գտէր Ստեփանոս, զոր իբրեւ հասեալ ի յուսումն եւ ի մանկութեան հասակի ետ ձեռնադրել զնա յաթոռ հայրապետութեան սրբոյն Գրիգորի, զոր կացեալ ամս քառասուն, վերափոխի յաշխարհէս տարաժամ կենալք եւ սակաւ աւուրբք»¹⁷: Վ. Վարդանեանը այս տողերից եզրակացնում է, որ Ստեփանոս Գ.-ն վախճանուել է հազիւ բոլորելով իր 40 տարին¹⁸:

Այսպիսով, Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու հարաւային ճակատին տեղ գտած արձանագրութիւնը այն մասին է, որ Աղթամարի Ստեփանոս Գ. Տղայ հայրապետը 1280 թ. նորոգել է Սուրբ Խաչ եկեղեցու գմբէթը: Թէեւ վիմագրի մաշուած եւ մասամբ քարընկեց վիճակին, այն հնարաւորինս ամբողջութեամբ ընթերցուեց՝ տրամաբանօրէն վերականգնելով թափուած հատուածները: Կարելոր է թուականի ճշգրտման հանգամանքը՝ 1280, նաեւ արձանագրութեան ստեղծման պատմական համատեքստի լուսաբանումը եւ վիմագրում յիշատակուած անձանց անունների վերականգնումը. աշխարհիկ տիրակալինը՝ Աբաղա խան, Աղթամարի կաթողիկոսինը՝ Ստեփանոս Գ. Տղայ:

ԼՈՒՍԻՆԷ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Պ.գ.թ., Աւագ գիտաշխատող, Մատենադարան, Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերի ինստիտուտ

ՀԱՅԿ ՅԱԿՈԲԵԱՆ

Պ.գ.թ., Աւագ գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Մատենադարան. Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերի ինստիտուտ, Հայ-սլաւոնական ուսական համալսարան, Արեւելագիտութեան ինստիտուտ, դասախօս

¹⁴ Եր. Լալայեան, նշուած աշխ., էջ 17: Ե. Ակինեան, նշուած աշխ., էջ 44: Յ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա, 1940, էջ 101:

¹⁵ Ե. Ակինեան, Գաւազանագիրք Կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920, էջ 42-45:

¹⁶ Վ. Վարդանյան, նշուած աշխ., էջ 36-37:

¹⁷ Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, աշխ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, «Մատենագիրք հայոց», հ. ԺԱ, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 308-309:

¹⁸ Վ. Վարդանյան, նշուած աշխ., էջ 36:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԱՅԼԵԻԱՅԼԲ****ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՄԷՋ**

18 Յունուար, 2022-ին, առաւօտեան ժամը 9:30-ին, Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսը, Ներքին գործոց նախարարութեան քրիստոնեաներու բաժնի ղեկավարը եւ Հին քաղաքի ոստիկանապետն իր ոստիկաններով այցելեցին Պատրիարքարան Պատրիարք Սրբազան Հօր Ս. Ծնունդը շնորհաւորելու: Ժամը 9:45-ին Գերաշնոր իուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով ճամբայ ելաւ դէպի Բեթղեհէմ: Ծամբու կիսուն Յունաց Ս. Եղիա վանքին առջեւ իուսարարապետ Սրբազան Հօրը դիմաւորելու եկած էին Պէյթ-Սահուրի եւ Պէյթ-Ճալայի քաղաքապետները եւ պետական ներկայացուցիչներ: Իսրայէլեան հինգ ոստիկան ձիաւորներ ընկերացան իուսարարապետ Սրբազան Հօր ինքնաշարժին, առջեւէն եւ քովերէն, մինչեւ Ռաքէլի գերեզմանը, որմէ ետք թափօրը առաջնորդուեցաւ դէպի Բեթղեհէմ: Քաղաքի մուտքին, ինքնաշարժերէն դուրս ելլելով, իուսարարապետ Սրբազան Հայրը եւ Միաբանութեան անդամները քալելով յառաջացան մինչեւ հրապարակ: Բեթղեհէմի հրապարակին վրայ դիմաւորուելով Բեթղեհէմի ընդհանուր ոստիկանապետի, քաղաքապետի, Պաղեստինի Կրօնից եւ Զբօսաշրջութեան նախարարներու եւ պաշտօնեաներու կողմէ, նաեւ Հ. Ե. Միութեան եւ Հ.Մ.Ը. Միութեան սկառւտական խումբերէն, «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ, եւ Տաճարին զանգերու ղողանջին ներքոյ թափօրը բարձրացաւ Ծննդեան Տաճարի Հայկական վանքը, ուր ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Բեթղեհէմի քաղաքապետը, ապա իուսարարապետ Սրբազան Հայրը շնորհաւորեց եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն:

Յետ միջօրէի ժամը 2-ին իուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»-ով մուտք կատարուեցաւ Ս. Ծննդեան Տաճար եւ Ս. Այր: Ժրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատուցց Ամերիկայէն Սուրբ Երկիր ժամանած Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներէն Հոգշ. Տ. Բաբգէն Ծ. Վրդ. Անուշեան: Ապա՝ Միաբանութիւնը բարձրացաւ Հայոց Վանք. բակին մէջ կարդացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարանը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»:

19 Յունուար, 2022-ին կէս գիշերէն առաջ ժամը 10-ին, Գիշերային պաշտամունքէն յետոյ, Միաբանութիւնը իջաւ Ս. Ծննդեան Այր, ուր շարունակուեցաւ «Փառք ի բարձունս»-ի երգեցողութիւնը: Պաղեստինի Կրօնից Նախարար Տիար Ռամզի Խուրի եւ Բեթղեհէմի քաղաքապետ Տիար Անտոն Սալման եւս ներկայ էին Այրի արարողութեանց, որ իուսարարապետ Սրբազան Հօր Ծննդեան պատգամէն յետոյ մեկնեցան: Պաշտամունքները շարունակուեցան Տաճարին մէջ: Աւագ սեղանին վրայ պատարագեց Հոգշ. Տ. Ներսէս Աբղ. Ալոյեան: Պատարագին յաջորդեց Զրօրհնեաց արարողութիւնը: Զրօրհնէքի արարողութեան հանդիսապետն էր իուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արք. Դարիպեան: Ծաշու ժամերգութենէն ետք Ս. Ծննդեան Այրին մէջ պատարագեց իուսարարապետ Սրբազան Հայրը: Պաշտամունքներու աւարտին, առաւօտեան ժամը 6:30-ին, Միաբանութիւնը թափօրով եւ երգեցողութեամբ բարձրացաւ Հայոց Վանք, եւ տեսչարանին մէջ կարդացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարանը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս», ապա Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ:

ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԳԷՊԻ ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏ

23 Յունուար, 2022-ին, յետ սուրբ եւ անմահ պատարագի, Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ՝ միաբան հայրերու եւ ժառանգաւոր սաներու մեկնեցան դէպի Յորդանան գետ, ուր տեղի ունեցաւ ամենամեայ Զրօրհնեաց արարողութիւնը: Յորդանանեան կողմէ գետափ եկած էին Յորդանանահայոց առաջնորդ՝ Տ. Աւետիս Ծ. Վրդ. Իփրաճեան իր գաղութի հաւատացեալներու հետ միասին: Ուխտագնացութեան իր մասնակցութիւնը բերած էր նաեւ Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս Տիար Նարեկ Ղազարեան:

Այս տարի Քորոնա ժահրին ստեղծած դժուարին կացութեան պատճառով Զրօրհնէքի հոգեպարար արարողութեան ներկայ էին փոքրաթիւ հայեր:

ԻՍՐԱՅԷԼԻ ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՅՑԵԼԵՑ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐ

Հինգշաբթի, 17 Փետրուար, 2022-ին, Իսրայէլի Զբօսաշրջութեան նախարար՝ Տիար Եօէլ Ռազուկով այցելեց Սբ. Յարութեան տաճար: Այցի ընթացքին Տիար Ռազուկով եղաւ նաեւ Սբ. Յարութեան տաճարի հայապատկան Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ուր ծանօթացաւ Հայ Առաքելական եկեղեցւոյ, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ Հայոց դարձի պատմութիւններուն:

Դիմաւորութեան արարողութեան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ էին Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան, Սբ. Յարութեան տաճարի տեսուչ՝ Հոգշ. Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան եւ Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

ՈՒՐԱՐԻ ՏԸԻՉՈՒԹԻՒՆ

2 Մարտ, 2022-ին, յետ Վարդանանց Զօրավարաց 1036 նահատակներու նախատօնակի, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան Ուրար կրելու իրաւունք շնորհեց Պատրիարքութեանս Ա. Ընծայարանի սաներէն Անտրէ Եղիազարեանի, Իվան Աղամեանի, Սարգիս Գինոսեանի եւ Վահագն Մկրտչեանի:

Թող Ամենակալ Տէրը անխախտ պահէ անոնց ուխտը, որպէսզի Իր այգիին նուիրւին նոր եւ եռանդուն մշակներ:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻՆ

8 Մարտ, 2022-ին, Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորական նամակ յղեց Հայաստանի Հանրապետութեան 5-րդ նախագահ՝ Տիար Վահագն Խաչատուրեանի: Նամակին մէջ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորելով նորընտիր նախագահը՝ կ'ըսէ. «Կ'աղօթենք առ Աստուած, որ կոչուելով այս պատասխանատու պաշտօնին՝ լաւագոյնս կատարէք Սահմանադրութեամբ ստանձնելիք Ձեր պարտականութիւնները:

Լիայոյս ենք, որ երկար տարիներու Ձեր դիւանագիտական փորձը պիտի ծառայեցնէք հայրենի մեր երկրի պայծառութեան, տնտեսութեան զարգացման եւ ժողովուրդի բարօրութեան: Աներկբայ ենք, որ Ձեր պաշտօնավարման տարիներուն ամէն ճիգ պիտի գործադրէք Հայրենիքի ու Արցախի խաղաղութեան եւ անվտանգութեան զօրացման ուղղութեամբ»:

Նամակին վերջաւորութեան Պատրիարք Սրբազան Հայրը Տէրունակոխ Սուրբ քաղաք Երուսաղէմէն իր օրհնութիւնը կը յղէ Տիար Խաչատուրեանի եւ յոյս կը յայտնէ Նորին Վսեմութիւնը օր մը Երուսաղէմ տեսնել:

ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ ՅԱՏԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՄԵԿՆԱՐԿ

14 Մարտ, 2022-ի, Սուրբ Յարութեան տաճարին մէջ իրաւատէր երեք համայնքներու՝ Հայ, Յոյն եւ Կաթողիկ եկեղեցիներու Հոգեւոր պետերու օրհնութեամբ մեկնարկւեցաւ տաճարի յատակի վերանորոգութիւնը, որ պիտի տեւէ 26 ամիս:

Հոգեւոր պետերը նախ Քրիստոսի Սուրբ Գերեզմանին առջեւ հանդէս եկան օրհնութեան խօսքով, ապա միասնաբար քանդելով՝ հանեցին յատակի առաջին կտորը: Շին-աշխատանքներու կատարման վայրին մէջ Հայ եկեղեցւոյ ներկայացուցիչը կարգաց շինարարական աշխատանքներու համար նախատեսուած յատուկ աղօթք:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՏ ԱԲՂ. ԱԼՈՅԵԱՆ





ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Շաբաթ, 1 Յունուար. Նախաժկայ եւ Քրիստոս անդրանիկ հաւատացեալ թագաւորին մերոյ Սրբոյն Աբգարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան:

Կիրակի, 2 Յունուար. Ե. Կիրակի Յիսնակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասի մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Չորեքշաբթի, 5 Յունուար. Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Աւագ Տօներու առաջին հանդիսաւոր նախատօնակին:

Հինգշաբթի, 6 Յունուար. Սրբոցն՝ Դաւթի Մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբայր Առաքելոյն (Տօն Առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի):

Առաւօտեան ժամերգութեան վերջաւորութեան Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի ընթացքին մասնաւոր բարեմաղթութիւններ ըրաւ Նորին Ամենապատուութեան բարօր կենաց համար:

Օրուան Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: «Հայր Մեր»-էն առաջ Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան նախագահեց Ս. Աթոռոյս հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտօնին:

Ուրբաթ, 7 Յունուար. Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Ս. Ստեփանոսի նախատօնակին: Տօնին բուրվառակիր հայրերն էին Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան եւ Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Շաբաթ, 8 Յունուար. Սրբոյն Ստեփանոսի Նախասարկաւագին եւ Առաջին Մարտիրոսին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին Ս. Աթոռոյս բարեշնորհ երկու սարկաւագներ եւ երկու

ուրարակիրներ՝ առաջնորդութեամբ երկու բուրվառակիր վարդապետներու, մարգարտազարդ սաղաւարտներով եւ տապանակ ու բուրվառ ի ձեռին, պանծացուցին յիշատակը իրենց մտատիպարին: Արարողութեան նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւանդատան մէջ գտնուող Ս. Ստեփանոսի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Կիրակի, 9 Յունուար. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան: Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ. Աբրահամեան:

Կէսօրէ ետք, գլխաւոր Առաքելոց նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երկուշաբթի, 10 Յունուար. Սրբոց Առաքելոցն՝ Պետրոսի եւ Պօղոսի: Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատրան մէջ Ս. Պատարագը մատուցեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Երեկոյեան Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Երեքշաբթի, 11 Յունուար. Տօն Սրբոց Որդւոց Որոտման՝ Յակոբայ Առաքելոյն եւ Յովհաննու Աւետարանչին: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ օրուան Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Գերաշնորհ Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Պատարագէն ետք Լուսարարապետ Սրբազան Հայրը ամպհովանիի տակ Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, նախագահեց եռադարձ մեծահանգէս թափօրին:

Ուրբաթ, 14 Յունուար. Կաղանդ: Տարեմուտ 2022 թուականին Քրիստոսի (Ըստ Հին Տոմարի): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Ժամօրհնող՝ Տ. Խաչ Վրդ. Ճունտուրեան:

Շաբաթ, 15 Յունուար. Սրբոցն Բարսղի Հայրապետին եւ եղբոր նորա Գրիգորի Նիւսացուն, Սեղբեստրոսի Հռոմայ Հայրապետին եւ Աբբա Յփրեմի Խորին Աստուծոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Մ. Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 16 Յունուար. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ աշկողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Խաղ Վրդ. Ծոնտուրեան:

Երկուշաբթի, 18 Յունուար. Ժրագալոյց Մընընդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Առաւօտեան ժամը 9:45-ին Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով մը ճամբայ ելաւ դէպի Բեթղէմ: Ժամբու կիսուն Յունաց Ս. Եղիա վանքին առջեւ Լուսարարապետ Սրբազանը դիմաւորելու եկած էին Պէյթ-Սահուրի եւ Պէյթ-Ճալայի քաղաքապետները եւ պետական ներկայացուցիչները: Քաղաքի մուտքին, ինքնաշարժներէն դուրս ելլելով, Լուսարարապետ Սրբազանը եւ Միաբանութեան անդամները յառաջացան մինչեւ հրապարակ:

Բեթղէմի հրապարակին վրայ դիմաւորելով Բեթղէմի քաղաքապետէն եւ պաշտօնատարներէն, «խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ թափօրը բարձրացաւ Մննդեան Տաճարի Հայոց Վանքը:

Յետ միջօրէի ժամը 2-ին Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»-ով մուտք կատարուեցաւ Սիւնազարդ Գաւիթէն դէպի Ս. Մննդեան Տաճարի Ս. Այրը: Ժրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատուցեալ քարոզեց Տ. Բաբգէն Մ. Վրդ. Անուշեան: Ապա Լուսարարապետ Սրբազանը նախագահեց Մննդեան նախատօնակին, որմէ յետոյ Միաբանութիւնը զգեստաւորեալ, թափօրով եւ երգեցողութեամբ սիւնազարդ գաւիթէն անցնելով բարձրացաւ Հայոց Վանք: Բակին մէջ կարդացուեցաւ Ս. Մննդեան Աւետարան եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»:

Երեքշաբթի, 19 Յունուար. Տօն Մննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Կէս գիշերէն առաջ ժամը 10-ին սկսուած գիշերալին պաշտամունքէն յետոյ, Միաբանութիւնը կ'իջնէ Ս. Մննդեան Այր, ուր կը շարունակուի «Փառք ի բարձունս»-ի երգեցողութիւնը: Ապա Լուսարարապետ Սրբազան Հայրը ներկաներուն եւ համայն հայութեանը փոխանցեց Պատրիարք Սրբազանի Մննդեան պատգամը, որմէ յետոյ պաշտամունքները շարունակուեցան

Տաճարին մէջ:

Երկրորդ Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Ներսէս Աբղ. Ալոյեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուած «Ջրօրհնէք»-ի արարողութեան եւ Յովհաննու Կարապետի Նախատօնակին հանդիսապետեց Տ. Թէոդորոս Մ. Վրդ. Զաքարեան:

Ս. Մննդեան Այրին մէջ Երրորդ Ս. Պատարագը մատուց Լուսարարապետ Սրբազան Հայրը: Պաշտամունքներու աւարտին՝ առաւօտեան ժամը 6:30-ին, Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ:

Երուսաղէմի մէջ Ժրագալոյցի արարողութիւն կը կատարուի Ս. Յարութեան Տաճարին մէջ: Ս. Գերեզմանին վրայ պատարագեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան: Ապա Քրիստոսի Ս. Գերեզմանի առջեւ հանդիսապետութեամբ տաճարի Տեսուչ՝ Ս. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեանի կատարուեցաւ «Ջրօրհնէք»-ի արարողութիւն:

Առաւօտեան Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ ապա «Ջրօրհնէք»-ի արարողութեան հանդիսապետեց Տ. Դեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Հինգշաբթի, 20 Յունուար. Յիշատակ Մեռելոց: Օրուան Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան, որ Ս. Մննդեան տօնակատարութեանց՝ ստանձնած էր Աւագ Թարգմանի պաշտօնը:

Կէսօրէ ետք նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 22 Յունուար. Ս. Պատարագը մատուցուեցաւ ձախակողմեան դասի մէջ գտնուող Ս. Աստուածածնի Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Կիրակի, 22 Յունուար. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր նախագահութեամբ՝ միաբան հայրեր, սարկաւագներ եւ ժառանգաւոր սաներ ինքնաշարժերով մեկնեցան Յորդանան գետ, ուր կատարուեցաւ «Ջրօրհնէք» արարողութիւն:

Չորեքշաբթի, 26 Յունուար. Տօն Անուանակոչութեան Տեառն: Առաւօտեան միաբան հայրեր Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Յարութեան

Տաճար: Օրոշան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան:

Դէպի վանք դարձին, Հայոց Թաղի մուտքէն Միաբանութիւնը «Լոյս ի Լուսոյ» շարականի երգեցողութեամբ շարժուեցաւ դէպի վարդապետաց սեղանատուն, ուր Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ կատարուեցաւ «Տնօրհնէք»-ի արարողութիւն, եւ տեղի ունեցաւ Միաբանական ճաշ՝ աւանդական «հարիսայով»:

Հինգշաբթի, 27 Յունուար. Տօն Ծննդեան Սրբոյն Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Աջակողմեան դասին մէջ գնդուող Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Մ. Վրդ. Մանկասարեան:

Շաբաթ, 29 Յունուար. Սրբոցն Պետրոսի Հայրապետին, Վլասայ Եպիսկոպոսին եւ Աբիսողոմայ Սարկաւագին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 30 Յունուար. Ա. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Աղան Աբդ. Գոգչեան:

Շաբաթ, 5 Փետրուար. Սրբոց Հայրապետացն՝ Աթանասի եւ Կիրիլի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ. Աբրահամեան:

Կիրակի, 6 Փետրուար. Բ. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատարն մէջ: Հանդիսապետն էր Տ. Բարսեղ Մ. Վրդ. Գալէմտէրեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Շաբաթ, 12 Փետրուար. Սրբոյն Գրիգորի Աստուածաբանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Մ. Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 13 Փետրուար. Գ. Կիրակի զկնի Ծննդեան: Բարեկենդան Առաջաւորացի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Խադ. Վրդ. Ճոննտուրեան:

Ուրբաթ, 18 Փետրուար. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 19 Փետրուար. Սրբոյն Սարգսի Զօ-

րավարին եւ Որդւոյ նորա Մարտիրոսին եւ չորեքտասան զինաւորացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգսի մատարն մէջ: Ժամարարն էր Տ. Ներսէս Աբդ. Աղոյեան: Ըստ սովորութեան կատարուեցաւ Հոգեհոգստեան պաշտօն հանգուցեալ ազգային բարերարներու՝ Գալուստ ու Սարգիս Կիւլպէնկեաններու եւ համայն Կիւլպէնկեան գերդաստանի ննջեցեալներուն համար հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Կիրակի, 20 Փետրուար. Դ. Կիրակի զկնի Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատարն մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Մ. Վրդ. Զաքարեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Մ. Վրդ. Մանկասարեան:

Շաբաթ, 26 Փետրուար. Սրբոյն Իսահակայ Պարթեւ Հայրապետին մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կէսօրէ ետք, Տեառնընդառաջի մեծահանդէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, որմէ ետք կատարուեցաւ «Անդաստան» եւ մոմավառութիւն, նախագահութեամբ՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Եկեցէ»-ի հսկման կարգը: Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 27 Փետրուար. Տեառնընդառաջ: Տօն Քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի ի Տաճարն: Օրոշան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեալ քարոզեց Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան:

Չորեքշաբթի, 2 Մարտ. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Հինգշաբթի, 3 Մարտ. Ս. Վարդանանց Զօրավարացն մերոց (1036 վկայիցն): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, ըստ սովորութեան, պատարագեց եւ քարոզեց Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսուչ՝ Տ. Թէոդորոս Մ. Վրդ. Զաքարեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ հոգեհոգստեան կարգ, վասն հանգուցեալ պատրիարքաց, միաբանից, երախտաւորաց եւ զինաւորաց:

Ուրբաթ, 4 Մարտ. Առաւօտեան միաբան հայրեր մեկնեցան Ասորւոց վանք: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Մարկոս Աւետարանչի եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետեց եւ Պատարագի ընթաց-

քին քարոզեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Շաբաթ, 5 Մարտ. Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն հարիւր յիսուն հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարի Աւագ խորանը, սեղանները եւ գլխաւոր սրբապատկերները, «Համբարձի» շարականը երգուած ժամանակ վարագուրուեցան Պատրիարք Սրբազան Հօր, Գերաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրերու ձեռքով:

Կիրակի, 6 Մարտ. Ա. Քառասնորդաց: Բուն Բարեկենդան: Փակեալ Խորանի Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Տ. Բարսեղ Վրդ. Գալէմտէրեան: Դպրապետի պաշտօնը վարեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Ուրբաթ, 11 Մարտ. Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 12 Մարտ. Սրբոյն Թէոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը, ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց ալցելութիւն Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 13 Մարտ. Բ. Քառասնորդաց. Արտաքսման: Առաւօտեան ժամը 5:30-ին միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ մեր վերնամատրան մէջ՝ հանդիսապետու-

թեամբ Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեանի: Երկրորդ մուտքէն վերջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագին էր Տ. Տիրան Աբղ. Յակոբեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Գերեզմանին եւ մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Շաբաթ, 19 Մարտ. Սրբոյն Կիւրղի Երուսաղէմայ հայրապետին եւ միւս Կիւրղի եպիսկոպոսին եւ մօրն նորա Աննայի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան մէջ գտնուող Ս. Կիւրղի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան: Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ, վասն հոգւոցն Սուլթանի, Կարինէի, եւ ծնողացն Կարապետի եւ Մարիի եւ Կիւրեղեան գերդաստանի հոգիներուն ի հանգիստ, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Կիրակի, 20 Մարտ. Գ. Քառասնորդաց. Անառակին: Ժամերգութիւններն ու Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Շաբաթ, 26 Մարտ. Սրբոյն Յովհաննու Երուսաղէմայ Հայրապետին եւ Հայրապետին մերոյ՝ Յովհաննու Օձնեցւոյն եւ վարդապետացն մերոյ Յովհաննու Որոտնեցւոյն եւ Գրիգորի Տաթեւացւոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Խաղ Վրդ. Ծունտուրեան:

Կիրակի, 27 Մարտ. Դ. Կիրակի Քառասնորդաց, Տնտեսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին, աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան:

Պատրաստեց՝ ՏՐՅ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Կիրակի, 9 Յունուար. Երեկոյեան ժամը 4-ին, Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի գլխաւորութեամբ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը Ս. Ծննդեան շնորհաւորութիւններու գնաց Ասորիներուն եւ Ղպտիներուն:

Հինգշաբթի, 13 Յունուար. Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Երուսաղէմի մէջ Ամերիկայի դեսպանատան Պաղեստինեան գործերու վարիչ՝ Տիար Ժորճ Նոլ ընկերակցութեամբ իր բաժանմունքի աշխատակիցներու՝ այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Ուրբաթ, 21 Յունուար. Առաւօտեան ժամը 9-էն սկսեալ, յաջորդաբար Պատրիարքարան շնորհաւորելու եկան Ֆրանչիսկեան Միաբանութիւնը՝ փոխ-քիւսթոտի գլխաւորութեամբ եւ Բողոքական, Հապէշ, Ղպտի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ:

Նոյն օրը երեկոյեան, Երուսաղէմի Պապական Նուիրակի առաջին տեղակալը եւ քարտուղարը այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Ուրբաթ, 28 Յունուար. Առաւօտեան ժամը 10-ին, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Պատրիարքարան շնորհաւորելու եկան Լատինաց Պատրիարքը եւ Միաբանութիւնը:

Զորեքշաբթի, 2 Փետրուար. Իսրայէլի Զբօսաշրջութեան նախարարութեան աշխատակիցները՝ առաջնորդութեամբ գլխաւոր քարտուղարի այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան

ցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Ուրբաթ, 4 Փետրուար. Ռամալլայի մէջ Յունգարիոյ Ներկայացուցչական գրասենեակի պատասխանատու Տիար Կսապա Ռատի այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Երեքշաբթի, 8 Փետրուար. Ռամալլայի մէջ Արժանթինի Ներկայացուցչական գրասենեակի պատասխանատու Տիար Էտուարտո Լիոմէլ Տէմայո այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանի հետ:

Շաբաթ, 19 Փետրուար. Իսրայէլի մէջ Ռուսիոյ դեսպան Տիար Անատոլի Վիկտորով այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ: Հանդիպումէն ետք Տիար Վիկտորով շրջայց կատարեց Հայոց Թաղէն ներս:

Հինգշաբթի, 24 Փետրուար. Պաղեստինի Աստուածաշնչային ընկերութեան ղեկավար Տիար Նաշատ Ֆիլմոն այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Երեքշաբթի, 15 Մարտ. Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան նորանշանակ դեսպան՝ Տիար Արման Յակոբեան, ուղեկցութեամբ Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս Տիար Նարեկ Ղազարեանի այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՍ ԱՔԴ. ԱԼՈՅԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական հանդէսը հիմնուած է 1866-ին, պաշտօնաթերթն է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ լոյս կ'ընծայուի Սրբոց Յակոբեանց Տպարանէն:

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական նիւթերէ զատ, կ'ընդգրկէ նաեւ պատմական, եկեղեցական, լեզուական եւ հայ արուեստի վերաբերեալ ուսումնասիրութիւններ եւ այլ բնոյթով նիւթեր:

Յօդուածները կ'ընդունուին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով, նախընտրաբար 10-15 համակարգչային շարուածքով լման էջ՝ Word միջավայրին մէջ (Word 2007-2019), երկու կողմերէն հաւասարեցուած, առանց տողադարձերու, ծաւալը՝ A4 ֆորմատի, տառատեսակը՝ Arian Grqi, տառաչափը՝ 12 pt, տողերու հեռաւորութիւնը՝ 1.15 pt: Յղումներու տառատեսակը եւս պէտք է ըլլայ՝ Arian Grqi, տառաչափը՝ 10 pt: Հայերէն յօդուածները «Սիոն»-ի մէջ կը հրատարակուին դասական հայերէն ուղղագրութեամբ: «Սիոն»-ին յանձնուած յօդուածները պէտք է ըլլան անտիպ:

Մեր սրտագին բաղձանքն է որ «Սիոն» մուտք գործէ բոլոր հայ տուններէ ներս. Վստահ ենք թէ ամէն ընթերցող պիտի գտնէ անոր էջերուն մէջ գրութիւններ՝ որոնք համապատասխան ըլլան իր ճաշակին եւ նախասիրութեան:

Յօդուածներ եւ այլ թղթակցութիւններ, ուսումնասիրութիւններ պէտք է ուղարկուին «Սիոն»-ի հետեւեալ հասցէով.

E-mail: sionjournal@yahoo.com





Տօն Աբ. Ստեփանոսի Նախասարկաւազին եւ Առաջին Մարտիրոսին
Ա. Աթոռոյս սարկաւազաց դասը՝ սարկաւազապետեր Տ. Վազգէն Աբդ. Ալէեանի, Տ. Արշակ Աբդ. Ղազարեանի
եւ տօնի պատարագիչ՝ Տ. Աղան Աբդ. Գոգչեանի հետ



Տօն Առաքելական Սուրբ Աթոռոյս Երուսաղէմի
Պատարագիչ՝ Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան



Հայկական Մնունդին Բերդենէմ Բաղափի մուափին, Լուսարարապետ Ս. Հայրը եւ պաշտօնական հիւրեր Մսուրի հրապարակէն կը յառաջանան դէպի Տանար



Ս. Մնունդ ի Բերդենէմ



Սբ. Ծննդեան շնորհատուրքիմներ Ֆրանչիսկեաններու կողմէ



Ռուսիոյ դեսպան Տիար Անատոլի Վիկտորով այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ
Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ



Ուրարի Տրչուքին Ա. Հնձայարանի սաներ Անտրէ Եղիազարեանի, Իվան Ադամեանի, Սարգիս Գինոսեանի եւ Վահագն Մկրտչեանի



Տօն Սրբոց Վարդանանց Զօրավարաց
Պատարագիչ՝ Տ. Թէոդորոս Մ. Վրդ. Զափարեան



Սր. Յարութեան Տանարի յատակի նորոգութեան մեկնարկ



Սր. Յարութեան տանարի երեք իրաւատէր համայնքներու հոգեւոր պետերը կը հանեն յատակի առաջին քարը:

«ՍԻՈՆ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՍԻՈՆ»-ի խմբագրությունը կը փորձէ ամբողջացնել եւ արդիականացնել բաժանորդներու ցանկը: Բաժանորդագրուեցէ՛ք Նոր շրջանի «ՍԻՈՆ»-ին, զոր կրնաք ստանալ նամակատան միջոցաւ եւ կամ այցելելով մեր կայքէջը:

Հաճեցէ՛ք ներքեւի կտրոնը յստակ եւ զլիազիր տառերով ամբողջացնել եւ փութով մեր
E-mail: sionjournal@yahoo.com հասցէին ղրկել:

ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԻՈՆԻ

Անուն, Մականուն. _____

Տիտղոս. _____

Կազմակերպություն. _____

Հասցէ. _____

Կայքէջ. _____ E-mail address _____

Տարեկան բաժանորդագրութիւն՝ \$ 150 USD

NOTICE TO SUBSCRIBERS

The Armenian Patriarchate of Jerusalem is driving up a new updated list to its official periodical SION. To ensure that your name is on the list, you are kindly requested to fill in the form below and send it back to us, with your remittance as soon as possible. You can also write to our E-mail: sionjournal@yahoo.com.

Name, Surname. _____

Title. _____

Organization. _____

Address. _____

Annual Subscribtion \$ 150 USD

Send your checks to: Armenian Patriarchate of Jerusalem P.O.Box 14235 Jerusalem, Israel

Tel: +972 (0)2-6282331

Fax: +972 (0)2-6264861

E-mail: sionjournal@yahoo.com

